

ՍՈՒՍԱՆՆԱ ՏԻՈՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ
ՏԵՐՄԻՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

2016

ՍՈՒՍԱՆՆԱ ՏԻՈՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ԵՐԵՎԱՆ 2016

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Տ 619

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ
Պատասխանատու խմբագիր
Ա.Ս.Գալստյան

Տիոյան Սուսաննա

Տ 619 Հայերենի տերմինագիտության հարցեր/Ս. Տիոյան.- Եր.:
Աստղիկ, 2016.- 140 էջ:

Գիրքը նվիրված է արդի հայերենի տերմինային այն համակարգերի վերլուծությանը, որոնք ձևավորվել են վերջին տասնամյակներում և աննախադեպ զարգացում են ապրում: Այդ գործընթացում իր անփոխարինելի դերն է կատարում գրական արևմտահայերենը. վերջինիս և արևելահայերենի զուգադիր քննությամբ լուսաբանվում է երկու գրականների փոխհարստացման և փոխներգործման հարցը, ինչպես նաև նախանշվում են հայերենի տերմինակազմության արդի միտումները:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-9939-50-332-5

© ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտ, 2016

Օգտագործված համառոտագրություններ և հապավումներ

Խ. Գ. - Խաչիկ Գրիգորյան, **Բ. Ջ.** - Բենիամին Ջանփոլադյան, **Ուղ.** - Ուղեցույց, **լեզվ.** - Լեզվաշխարհ, **ԼԻ** - լեզվական իրավիճակներ, **ԽԼ** - խոսակցական լեզու, **ԿԳԼ** - կողավորված գրական լեզու, **ԷՀՄ** - էլեկտրոնային հաշվիչ մեքենա, **eanc** - Արևելահայերենի ազգային կորպուս, **UNL** - համընդհանուր ցանցային լեզու, **ABBY** - բառացի՝ սուր աչք (էլեկտրոնային բազմալեզվյան բառարանների համակարգ, որի հիման վրա ստեղծվում են տեքստերի օպտիկական ճանաչման համակարգերը ողջ աշխարհում), **Ա** - ածական, **Բ** - բայ, **Գ** - գոյական, **Թ** - թվական, **Մ** - մակբայ, **Տ**-տերմին, **ՄՏ** - ոչ տերմին, **x** - բառակազմական չիրականացված քայլ (տակտ):

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Առաջարան.....	7
ԳԼՈՒԽ 1	
Ժամանակակալից հայերենի բառային կազմի ուսումնասիրության հայեցակետերը (հանրալեզվաբանական քննություն).....	10
ա) Գրական լեզու	17
բ) Լեզվական իրավիճակներ.....	20
գ) Ժողովրդախոսակցական լեզու.....	23
դ) Հասարակաբանություն.....	23
ե) Բարբառներ.....	24
զ) Տերմիններ.....	28
է) Նոր տերմիններ.....	30

ԳԼՈՒԽ 2

1. Կիրառական տնտեսագիտության տերմինների կառուցվածքային-իմաստաբանական ուսումնասիրություն.....	36
2. Իրավաբանական տերմինների կառուցվածքային- իմաստաբանական վերլուծություն	55
3. Համակարգչային տերմինաբանության ձևավորումը հայերենում (բառակազմական-իմաստաբանական վերլուծություն).....	70
4. Համակարգչային տերմինաբանության զուգաձևու- թյունները և դրանց վերացման հիմնադրույթները	90
5. Արդի հայերենի տերմինաբանության զարգացման միտումները.....	100

6. Արևելահայերենի և արևմտահայերենի տերմինային համակարգերի զուգադիր քննություն.....	107
7. Տերմինային ցանկեր՝ անգլերեն – արևելահայերեն – արևմտահայերեն	115
Օգտագործված գրականություն.....	135

ԱՌԱՋԱԲԱՆ

Տերմինագիտությունն զբաղվում է տերմինների՝ իբրև համակարգ ձևավորման ու դրանց կառուցվածքային ուսումնասիրությամբ:

Հայտնի է, որ տերմինները լեզվի բառապաշարի հարստացման կարևորագույն միջոցներից են. դրանք ձևավորվում ու գործածվում են բառակազմական համընդհանուր կաղապարներով՝ ածանցմամբ (նախածանցում, վերջածանցում, համածանցում), բառաբարդմամբ (նաև բառակապակցմամբ՝ կայուն և ազատ) և այլն: Բացի այդ, լեզվի զարգացման տվյալ փուլում տերմինահամակարգերի զարգացմամբ, մշակվածությամբ ու հստակությամբ է որոշվում այդ լեզվի կատարյալության մակարդակը:

Տերմինային համակարգերը կազմավորվում և ուսումնասիրվում են որպես ամբողջական միավորներ՝ իրենց ենթահամակարգերով կամ, Էդ. Աղայանի բնորոշմամբ, մանրատերմինահամակարգերով¹. օրինակ, լեզվաբանական տերմինների մեջ առկա է քերականության **հնչյունաբանություն, ձևաբանություն, շարահյուսություն** եռահակադրամիությունը, որի յուրաքանչյուր մաս իր ենթահամակարգով է գործառվում. առաջինը՝ բաղաձայններ-ձայնավորներ և այլն, երկրորդը՝ հոլովական և խոնարհման համակարգերով՝ իրենց ստորակարգությամբ, երրորդը՝ սկսելով բառակապակցություններից մինչև պարզ ու բարդ նախադասությունների ենթատեսակները: Նույն կերպ են ներկայացվում նաև մյուս տերմինահամակարգերը, օրինակ՝ տնտեսագիտական տերմինահամակարգը նախ և առաջ ներկայանում է **1. տեսական տնտեսագիտություն,**

¹ Տե՛ս Է. Բ. Աղայան, Տերմինագիտության, Ե., 1978, էջ 26:

2. տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում, 3. ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, 4. հաշվապահական հաշվառում և վիճակագրություն, 5. համաշխարհային տնտեսագիտություն, և

6. տնտեսագիտամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում ենթաբաժիններով, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս իր համակարգերով. ընդ որում, ինչպես մյուս, այնպես էլ, մասնավորապես, այս տերմինահամակարգն ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ գիտության, տեխնիկայի և մյուս բոլոր ոլորտներում շարունակաբար նոր հասկացությունների ու տերմինների համալրում է տեղի ունենում և նոր տերմինների մշակման ու հղկման անհրաժեշտություն է առաջանում. այսպես օրինակ, «Հայաստանի Հանրապետությունում առկա տնտեսավարման նոր պայմաններում ձևավորվել և ձևավորման փուլում են տարբեր բնույթի բաժնետիրական և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, առևտրային բանկեր, փոքր ու միջին տնտեսվարող սուբյեկտներ, ֆերմերային տնտեսություններ... իսկ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների ներդրմամբ, արժեթղթերի շուկայի, բորսային գործի, դրամավարկային քաղաքականության, հարկային, բանկային և ապահովագրական համակարգերի հետ կապված զգալի փոփոխություններ կատարվեցին այդ բնագավառներն արտացոլող տերմինային համակարգերում, ինչը հանգեցրեց տնտեսագիտական նոր բառարանի ստեղծման»²:

Նոր տերմիններն առանձնանում են բազմաբարդությամբ՝ երկանդամից (*ասպահովագրության ակտ, ժամկետային ավանդ, բարդ տոկոսներ, բաժնետիրական ձեռնարկություն* և

² Տե՛ս Ա. Ն. Բայադյան, Տնտեսագիտական բառարան, Ե., 2014, էջ 3:

այլն), մինչև հնգանդամ՝ *հողի հարկի գծով տույժեր և տուգանքներ*, վեցանդամ՝ *հիպոթեկային վարկ ստանալու համար պահանջվող կանխավճար* և, մինչև իսկ իր կառուցվածքով նախադասությանը հավասարվող կառույց՝ *արտադրանքի, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացումից շահույթ (վնաս)*³: Այսպիսի բազմաբարդությունը նոր տառային հապավումների առաջացմանն է խթանում՝ *բաց բաժնետիրական ընկերություն (ԲԲԸ), գանձապետական միասնական հաշիվ (ԳՄՀ), համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)* և այլն, ինչն էլ իր հերթին հայերենի տառային հապավումների բառարանի համալրմանն ու մշակմանն է հանգեցնում:

Բացի համակարգերի ներսում ունեցած ենթաստորադաս հարաբերություններից, տերմինահամակարգերը սերտ կապերի մեջ են միմյանց հետ՝ ստեղծելով միջգիտակարգային տերմինահամակարգեր: Իրավաբանականը բժշկականի հետ ստեղծում է դատաբժշկական, տնտեսագիտականի հետ՝ հարկային-իրավական, տնտեսագիտականը մաթեմատիկականի հետ՝ տնտեսագիտամաթեմատիկական և այլ ենթահամակարգեր, որոնցից յուրաքանչյուրն առանձին ուսումնասիրության աղերս ունի:

Այս հետազոտության մեջ բառակազմական ու իմաստային ուսումնասիրության են ենթարկվել կիրառական տնտեսագիտության, իրավաբանության և համակարգչային տերմինաբանության բառապաշարները՝ որպես հարավոփոխ, շարունակաբար համալրվող ու զարգացող համակարգեր:

³ Օրինակները քաղել ենք նշված բառարանից:

ԳԼՈՒԽ 1

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՅԱԿԵՏԵՐԸ

Բառագիտությունը, որպես լեզվաբանության բաժին, իր առարկան հետազոտում է տարբեր մոտեցումներով ու հայեցակետերով՝ հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական, լեզվամշակութաբանական և այլն:

Հանրալեզվաբանության մեջ, օրինակ, բառագիտության հարցերը արդիական են դառնում հատկապես *հասարակություն - լեզու և լեզու- հասարակություն* փոխհարաբերությունների տեսանկյունից, քանի որ լեզվի զարգացման տարբեր գործընթացներում՝ մասնավորապես երկլեզվության ու բազմալեզվության պայմաններում, ցայտուն է դառնում լեզվի զարգացման ընդհանուր ուղղվածությունը: Մեր օրերում, երբ մարդկանց ու հասարակությունների կապն ավելի ազատ և անկաշկանդ է դարձել, երբ ազգերի ու նրանց լեզուների շփումներն ու ներթափանցումները լեզուների հարստացման կարևորագույն ուղիներից են, երբ լեզուները միմյանցից ամբողջական տերմինահամակարգեր են թարգմանաբար փոխառում, բառագիտական ուսումնասիրություններում այլևս հրամայական է դառնում նշված ոլորտում հանրալեզվաբանական կարևորագույն հասկացություններին անդրադառնալը:

Լեզվաբանական հենց այս մոտեցմամբ է պարզվում, թե լեզվի զարգացման տվյալ փուլում ինչու հենց այս, այլ ոչ թե մեկ այլ լեզուն է որոշիչ դեր կատարում մայրենի լեզվի տերմինահամակարգի ձևավորման հարցում, և ինչ չափով ու ճանապարհով՝ անմիջականորեն, թե միջնորդավորված

ուղիներով են տերմինները լեզվից լեզու անցնում: Ուստի հարկ ենք համարում հպանցիկ անդրադառնալ հանրալեզվաբանական որոշ հասկացությունների:

Բառագիտության ոլորտում հանրալեզվաբանության հիմնախնդիրներն են.

1. բառապաշարի տարբերակումը՝ ըստ տվյալ լեզվով խոսող հանրության հասարակական կառուցվածքի,

2. բառապաշարի տեղաշարժերն ըստ հասարակական կյանքի:

Էդ. Աղայանը բառապաշարի հասարակական (սոցիալական) տարբերակման մասին գրել է. «Լեզվի բառապաշարը ընդգրկում է բոլոր բառերը՝ անկախ նրանց գործածության զանազան սահմանափակումներից ու տարբերակումներից, բայց սա չի նշանակում, թե բոլոր բառերը հավասարապես ու անխտիր գործածվում են տվյալ լեզուն կրող հասարակության բոլոր անդամների կողմից: Բառապաշարի հիմնական մասը, անշուշտ, առանց որևէ սահմանափակման ընդհանուր է հասարակության բոլոր անդամների համար՝ անկախ նրանց դիրքից, զբաղմունքից, դասային ու դասակարգային պատկանելությունից, սեռից, տարիքից: Այդ կարգի բառերը կազմում են բառապաշարի **հասարակայնորեն ընդհանրական շերտը**: Օրինակ, **զնալ, ասել, տեսնել, շենք, տուն, խղճալ, զուգահեռ, փողոց, մեքենա, սեղան** և բազմաթիվ նման այլ բառեր, որոնց գործածությունը որևէ հասարակական սահմանափակում չունի: Դրանց հակադրվում են այն բառերը, որոնք հատուկ են հասարակության, տվյալ դեպքում հայ ժողովրդի որևէ կարգի հասարակական հատկանիշով բնութագրվող հատվածին կամ խմբավորմանը: Օրինակ, մեր բարբառները ներկայացնում են հայերենի տարածական տարբերակները, որոնցով խոսում են մեր ազգի՝ տարածքային հատկանիշով միավորվող խմբերը, իսկ, օրինակ, մանկական «լեզվով» երեխաները միմյանց ու

ծնողների և ծնողները երեխաների հետ: Երկու դեպքում էլ ունենք հասարակության անդամների միավորում կամ խմբավորում, ըստ որում, առաջինը՝ տարածքային, իսկ երկրորդը՝ տարիքային»⁴: Այս սկզբունքով առաջնորդվելով՝ ժամանակակից գրական արևելահայերենի բառապաշարում Էդ. Աղայանը հնարավոր է համարում առանձնացնել հասարակայնորեն առանձնացված շերտի հետևյալ մասնաշերտերը.

ա) գրական լեզվի խոսակցական տարբերակին պատկանող բառեր և բառաձևեր, որոնք հակադրվում են գրական բառերին ու բառային ձևերին իրենց իմաստային, կիրառական, ոճական կամ ձևական հատկանիշներով ու որոշակի երանգավորումներով, ինչպես՝ *էզուց, իրիկուն, տկլոր, որձ, խուճուճ* և այլն,

բ) ժողովրդախոսակցական լեզվի բառեր, ինչպես՝ *բոնավոր, ճղել, թուշ, պոռշ, առաջուց, հեր, բիբար* և այլն,

գ) արևմտահայերեն բառեր, ինչպես՝ *ուծացում, հանրակառք, գրատուն, սակարան, համացանց, կրիչ* և այլն,

դ) բարբառային բառեր և բառային ձևեր, ինչպես՝ *էթալ* (գնալ), *խելռել* (խենթանալ), *աշել* (նայել), *խեր* (հայր), *խաց* (հաց) և այլն,

ե) մանկական լեզվի բառեր, ինչպես՝ *ճաշիկ, կակա* (պտուղ, միրգ), *չոփ - չոփ անել* (լողանալ), *տոտիկ-տոտիկ անել* (քայլել), *պապար* (պար) և այլն,

զ) ծածկալեզվային - ժարգոնային բառեր, ինչպես՝ *աթանդա* (զգույշ), *ճինգո* (սիրած), *ծայրածաղիկ* (ճրագ), *փայտվոր* (ոստիկան) և այլն,

⁴ Տե՛ս Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 144:

է) **հասարակաբանական** և **գոեհկաբանական** բառեր, ինչպէս՝ *ռէխ* (բերան), *սեպերը բացել* (ծիծաղել), *խժռել, ռնդել* (ագահաբար ուտել) և այլն⁵:

Բառապաշարի զարգացումը և նրանում կատարվող տեղաշարժերը շատ ավելի արագ ու նկատելի են լինում նույնիսկ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում: Բառապաշարի փոփոխությունները ուղղված են բառային կազմի մակարդակի արդիականացմանը, նրա համապատասխանեցմանը մի կողմից հասարակական կեցության ու գիտակցության առավել զարգացած աստիճանին, մյուս կողմից լեզվի տվյալ փուլի կառուցվածքին ու համակարգին:

Ցանկացած լեզու բառային կազմի հարստացման երկու ուղի ունի՝ ներքին և արտաքին:

«Բառապաշարի հարստացման արտաքին ճանապարհը լեզվի բառային կազմի համալրումն է ուրիշ լեզուներից կատարվող փոխառություններով: Ժողովուրդների փոխադարձ շփումները, նրանց քաղաքական, տնտեսական ու մշակութային հարաբերությունները առաջ են բերում լեզվական ազդեցություններ ու փոխազդեցություններ, որոնք առաջին հերթին և առավել շոշափելիորեն արտահայտում են փոխառությամբ: Հայերենն օգտվել և օգտվում է փոխառությունների երկու տիպերից էլ՝ *անմիջական* և *միջնորդավորված*՝ տարբեր ժամանակաշրջաններում տարբեր հաճախությամբ: Եթե նախկին Սովետական Միության տարիներին փոխառությունները, այդ թվում և տերմինները, հիմնականում ռուսերենից և ռուսերենի միջոցով էին կատարվում (օրինակ՝ *սովետ, սովխոզ, բոլշևիկ, շինել* (անմիջական) և *կորպուս, կապիտալ, պլենում, կողերս, ֆուտբոլ, ցեմենտ, բետոն, գրամ*,

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 145-146:

լիտր (միջնորդական)»⁶, ապա այժմ գերիշխում են անմիջական փոխառությունները բառի սկզբնաղբյուրից՝ անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից, ռուսերենից և այլն, օրինակ՝ *գլոբալ, մոնոպոլիա, տենդեր, օլիգարխ, կոռուպցիա, կլան, ռիսկ, վամպուր, մերկանտիլիստ* և այլն:

Փոխառությունների՝ հատկապես տերմինների մեջ մեծ կշիռ ունեն բաղադրությունների փոխառյալ բաղադրիչները, ինչպես՝ *ավտո-*, *ավիա-*, *կինո-*, *միկրո-*, *մակրո-*, *միլի-*, *մեդիա-*, *ֆոտո-*, իսկ վերջերս նաև *կիրեն-* և այլն, որոնցով կազմվում են բազմաթիվ նոր բաղադրություններ հայերենի բառերի և ածանցների օգնությամբ. հմմտ. *ավիագրոհ, ավիացուցահանդես, ավիափոխադրող, ավիամրակոծում, ավտորենիչ, ավտոփոխառություն, ավտորենավիադրում, ավտոմաքսագերծում, կինոփառատոն, կինոեղենապատում, կինոճակատագիր, կինոաշխարհ, միկրոաշխարհ, միկրո-համակարգիչ, միկրոշրջան, միկրոկառուցվածք, միկրո-տնտեսագիտություն, մակրոտնտեսագիտություն, միլի-վայրկյան, միլիվոլտաչափ, մեդիամիջավայր, մեդիադաշտ, մեդիափորձագետ, ֆոտոամրագրում, ֆոտոգրոհ, ֆոտո-հաշվետվություն, ֆոտոնախագիծ, կիրենոգրոհ, կիրենահարեկիչ, կիրենահնցագործություն*⁷ և այլն:

Գրական հայերենի բառապաշարը դիտարկելիս գործ ենք ունենում մի շատ բացառիկ դեպքի հետ. Համա-ժամանակյա կտրվածքով առկա *երկու գրական լեզուների՝ արևելահայերենի և արևմտահայերենի* փոխազդեցության ու

⁶ Նույն տեղը, էջ 168:

⁴ Ի մասնավորի տե՛ս Արեւմտահայ աշխարհաբարի Եզրաբանական խորհրդի հրատարակած Ուղեցոյց Ա, Բ, Գ, Դ գրքերը, Մարսել, 1993, 1995, 1998, 2002թթ՝ համապատասխանաբար::

⁷ Տե՛ս, Նոր բառեր, Ա պրակ, Ե., 2015:

փոխհարստացման հետ: Հատկապես նորագույն տերմինահամակարգերի՝ կիրառական տնտեսագիտության, համակարգչային, և, առհասարակ, տեղեկատվական տեխնոլոգիաների տերմինների կազմավորման գործընթացում *արևմտահայերենի գերակա՝ հեգեմոն դերի հետ*: Այդ ճանապարհով գրական արևելահայերեն մտան և արմատավորվեցին *մարզապար, նախագեկույց, ճեպագրույց, կարճագո, համանախագահ, հանցագերծել, հեռապատճեն, ճնշախումբ, վեհածողով, վերծանել, երակախցանում, ջլախտ* և բազմաթիվ այլ բառեր - տերմիններ՝ ամենատարբեր տերմինահամակարգերում⁸:

Երկուստեք փոխազդում և ներգործում են միմյանց վրան ևս խոսակցական և գրական լեզուները, որոնց սահմանները մեկընդմիջտ տրված ու կայուն չեն. խոսակցական լեզվի միջոցով հասարակաբանության, երիտասարդների արգոյի, բարբառների ազդեցությունն են կրում գրական լեզվի այլ գործառական տարբերակները՝ առաջին հերթին զանգվածային լրատվամիջոցների լեզուն և հրապարակախոսական ոճը: Վերջինս, դրականի՝ օրինակելիի փոխարեն իր բացասական ազդեցությունն է թողնում ունկնդիրների, ակնդիրների և ընթերցողների վրա:

Գիտական և հատկապես պաշտոնական-գործնական ոճերն ավելի պահպանողական են ու հետ են ընկնում խոսակցական լեզվից և ոչ կանոնական լեզվի այլ տարբերակներից:

Գրական լեզվում ևս առկա են տեղաշարժեր, տարբերակային երևույթներ (*տնայնագործություն – տնաշ-*

⁸ Տե՛ս նշված Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի հրատարակած Ուղեցոյցները:

խատ, օղանավ - ինքնաթիռ - սավառնակ, օղակայան – օղանավակայան, սակարան - սակատուն - բանկ):

Նախապես քիչ գործածվող, փոքր հաճախականությամբ հանդես եկող տարբերակը կարող է հաղթել, եթե ներդաշնակ է լեզվի զարգացման ներքին որոշակի սկզբունքներին:

ա) Գրական լեզու

Գրական լեզուն, ծագումնաբանորեն կապված լինելով բարբառային տեղական հիմքի հետ, ծագում է որպես լեզվի գոյատևման *վերբարբառային* ձև: Հատկապես մեր օրերում գրական լեզվի գործառույթները և ոլորտները, թվում է՝ պետք է ընդլայնվեին, իսկ նորմերը՝ դեմոկրատացվեին՝ նախ և առաջ շնորհիվ այն բանի, որ ձևավորվում են գրական լեզվի բանավոր հաղորդակցման (խոսակցական լեզվի) ոչ պաշտոնական միջոցներ:

Ֆ. Պ. Ֆիլին⁹, ընդհանրացնելով գերազանցապես ազգային շրջանի գրական լեզուները ուսումնասիրող խորհրդային լեզվաբանների փորձը, նշել է յոթ հատկանիշ, որոնց միջոցով սահմանվում է ինչ ասել է գրական լեզու՝ նկատի ունենալով ժամանակակից ռուսերենը, լեհերենը, անգլերենը, գերմաներենը, ֆրանսերենը, իսպաներենը և շատ այլ ազգային լեզուներ: Ահա դրանք.

1. մշակվածություն (հղկվածություն),
2. նորմավորվածություն,
3. կայունություն,
4. պարտադիրություն՝ դրան տիրապետող հասարակության բոլոր անդամների համար, ազգային լեզուների բազմատեսակային համակարգում առաջատար դեր,
5. ոճական տարբերակվածություն,
6. ունիվերսալություն, այսինքն՝ հաղորդակցման բոլոր ոլորտների սպասարկում (արտադրություն, հասարակական – քաղաքական ու մշակութային կյանք, գիտություն, կենցաղ և այլն),

⁹ Филин Ф. П., Истоки и судьбы русского литературного языка, М., 1981, стр. 176:

7. գրավոր և բանավոր տարատեսակների առկայություն:

Իհարկե, գրական լեզվի հատկանիշների փունջը սրանցով չի սահմանափակվում, թեև, մյուս կողմից, այս խումբը պարտադիր չէ գիտությանը հայտնի բոլոր գրական լեզուների համար:

Գրական լեզվի ամբողջական հանրալեզվաբանական բնութագիրը տվել է Վ.Վ.Վինոգրադովը. «**Գրական լեզուն** այս կամ այն ժողովրդի, երբեմն նաև մի քանի ժողովուրդների ընդհանուր գրավոր լեզուն է՝ պաշտոնական - գործնական փաստաթղթերի, դպրոցական ուսուցման, գրավոր - կենցաղային հաղորդակցման, գիտության, հրապարակախոսության, գեղարվեստական գրականության, մշակույթի բոլոր դրսևորումների լեզու: Ահա թե ինչու են տարբերակվում գրական լեզվի գրավոր - **գրքային** ու բանավոր - **խոսակական** ձևերը, որոնց ծագումը, հարաբերություններն ու փոխազդեցությունը ենթարկվում են որոշակի պատմական օրինաչափությունների»¹⁰:

Այսպիսով, *գրական լեզուն* ազգային, ինչպես նաև ազգության լեզվի գոյության գլխավոր ձևն է, սպասարկում է հասարակության կյանքի ամենատարբեր ոլորտները, գերազանցում է բոլոր մնացած ձևերին իր բազմագործառնությամբ, մշակվածությամբ ու նորմերի խստությամբ:

Ժամանակակից գրական լեզուների նորմերին տիրապետում են հիմնականում այն անձինք, որոնք ունեն միջնակարգ և բարձրագույն կրթություն, այսինքն՝ բնակչության գերակշռող մասը: Միննույն ժամանակ հենց նրանց (իմա դպրոցականների և ուսանողների) խոսքում է խաթարվում գրական լեզվի խոսակցական տարբերակը՝ լեզվական

¹⁰ Виноградов В. В., Литературный язык // Виноградов В. В. Избранные труды / История русского литературного языка, М., 1978, стр. 288:

ամենատարբեր մակարդակներում. համեմատենք՝ *էս ձև* (այսպես), *էն ձև* (այնպես), *ամեն մեկ* (ամեն մեկը կամ յուրաքանչյուրը), *ոչ մեկ* (ոչ մեկը, ոչ ոք), *էս մեկ* (այս մեկը), *չտեսնեյ* (չտեսնեի), *չիմանայ* (չիմանայի), *չսիրեյ* (չսիրեի), *չեմ տեսե* (չեմ տեսել), *ով է ասե* (ով է ասել) և նման շատ այլ օրինակներ¹¹: Մինչդեռ հենց դպրոցի և զանգվածային տեղեկատվության միջոցների շնորհիվ պարտադիր կերպով պետք է գերիշխեն գրական լեզվի նորմերը:

Գրական լեզվին բնորոշ է ոչ գործառական տարբերակումների հաղթահարման գործոնը. զանց են առնվում զույգերը (օրինակ երկու-երեք՝ հավասարապես հնարավոր փոխառություններից՝ *բանկ - սակարան - դրամատուն* բառաշարքի դեպքում պահվում և օգտագործվում է առաջինը), իսկ *հիմն - փառերգ - օրհներգ* շարքից՝ վերջինը, կամ զույգերում տեղի է ունենում տեղերի փոփոխություն (*անձրև է գալիս - անձրևում է*), կամ էլ զուգահեռ կամ հոմանիշ կառույցների միջև խորանում են իմաստային և / կամ ոճական տարբերությունները (*ամեն մեկը կարող է արտահայտվել - յուրաքանչյուրը կարող է արտահայտվել - ամեն ոք կարող է արտահայտվել*):

Այսպիսով, գրական լեզուն ոչ միայն ամենահարգի, այլև համաժողովրդական լեզվի առավել հարմար տարբերակն է: Քանի որ կայուն ու լայնորեն ընդունված է, ուստի այն խոսողներին ներկայանում է որպես վստահելի և իմաստներ արտահայտելու հնարավորությամբ ամենահարուստը:

¹¹ Տե՛ս Բեդիրյան Պ. Ս., Հայ լեզուն և մեր խոսքը, Ե., 1999:

բ) Լեզվական իրավիճակներ

Բազմալեզվություն

Լեզվական իրավիճակը (ԼԻ) լեզվական կազմավորումների ամբողջությունն է (լեզու և բարբառներ, ժարգոններ, գործառական ոճեր, լեզվի այլ գոյավիճակներ), որը սպասարկում է որոշակի սոցիումի՝ որոշակի տարածքի սահմաններում, քաղաքական - տարածքային միավորման կամ պետության մեջ:

ԼԻ, որպես հանրալեզվաբանական ոլորտ, բազմադեմ ու բազմահատկանիշ երևույթ է. ընդ որում, ԼԻ ներկայացնող լեզվական հատկանիշները չեն ստորակարգվում և չունեն նույն ուղղվածությունը:

Հայտնի լեզվաբաններ Բ. Հավրանեկի, Ա. Մարտինեի, Է. Հաուգենի կարծիքով¹² երկու լեզուների լրիվ և ավտոնոմ (անխառն) իմացությունը վեր է սովորական անհատի հոգեբանական հնարավորություններից: Նրա լեզվամտածողության մեջ ոչ մայրենի լեզվի որոշ գծեր սխալմամբ նմանվում են մայրենի լեզվի կառուցվածքին: Տեղի է ունենում երկու լեզվահամակարգերի փոխներթափանցում, այսինքն դրանց մասնակի նույնացում ու խաչավորում, որը խոսքում սխալների է հանգեցնում երբեմն մեկ, երբեմն էլ երկու լեզուներում: Հայերենում, օրինակ, բանավոր խոսքում շատ ռուսերեն բառեր արմատապես հիմնավորվեցին, ներկայումս էլ սկսել են արմատավորվել անգլերենի բառապաշարի հնչարտասանական, անգամ լեզվամտածողական որոշ տարրեր (հնչերանգային ու շեշտային աղճատվածություն, անգլերենին հատուկ *p* - ի հնչյունափոխություն և այլն): Բարեբախտաբար, վերջին տասնամյակներում զգալի է

¹² Տե՛ս Новое в зарубежной лингвистике, вып. 6, стр. 84-85, 100, 62-63:

արևմտահայերենի դրական ազդեցությունն ու ներթափանցումը արևելահայերեն, հատկապես տերմինային նորաստեղծ համակարգերում:

Լեզվի գոյության տարբեր ձևերի զուգորդության սխեման բավականին տարաբնույթ է: Հայերենում դրանցից ամենատարածվածներն ու ամենաբնորոշներն են.

գրական լեզու - ժողովրդախոսակցական լեզու (գրական հայերեն - առօրյա - խոսակցական հայերեն),

գրական լեզու - հասարակաբանություն. սա հազվագյուտ զուգակցում է, բայց, այնուամենայնիվ հանդիպում է, քանի որ մի շարք իրավիճակներում գրական նորմին տիրապետողները, երբեմն ոճական նպատակներ հետապնդելով, կարող են անցում կատարել ցածր, չկանոնարկված խոսքին,

գրական լեզու - տարածքային բարբառ. հաճախ հանդիպող դեպք, երբ գրական լեզու կրողը, երկար ժամանակ մնալով բարբառային միջավայրում, յուրացնում է տեղի խոսվածքը և օգտագործում այն համազյուղացիների հետ հաղորդակցվելիս: Դիգլոսիայի այս տարբերակը կարող է ծագել նաև այն դեպքում, երբ գյուղական ծագում ունեցողն է լիակատար յուրացնում գրական լեզուն՝ չնոռանալով մայրենի բարբառը,

գրական լեզու - սոցիալական բարբառ (մեկ կամ մի քանի տիպի). այս դեպքում գրական լեզու կրողները, օրինակ՝ աշակերտները, ուսանողները, զինվորները օգտվում են «երիտասարդական ժարգոնից»,

ժողովրդախոսակցական լեզու - գրական լեզու,

ժողովրդախոսակցական լեզու - հասարակաբանություն,

ժողովրդախոսակցական լեզու - տարածքային բարբառ:

Դիզլոսիայի դրսևորման աննախադեպ օրինակ են արևմտահայերեն - արևելահայերեն ժամանակակից գրական հայերենի երկու գրական տարբերակների ու դրանց տարբեր բարբառների զանազան զուգորդումները: Հայաստանի Հանրապետության տարբեր քաղաքներում ու մարզերում սիրիահայ ներգաղթյալների առկայությունը նպաստում է դիզլոսիայի նշված տեսակին, ինչը, անշուշտ, գովելի է, ավելին՝ եթե Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում ու բնակավայրերում արևելահայերենը ներկայանում է գրական արևելահայերենի և արևելահայ բարբառների դիզլոսիայի ձևով, ապա արևմտահայերենը ևս նույն տարածքում ներկայանում է գրական արևմտահայերենի և արևմտահայ բարբառների դիզլոսիայով¹³:

Դիզլոսիային հատուկ է լեզուների գործառությանին ստորակարգությունը (գործառական ստորակարգությունը), որը նման է «բարձր» և «ցածր» ոճերի փոխհարաբերությանը. ընդ որում, դրանց կիրառման պահին ու ոլորտները խիստ սահմանազատված են: Օրինակ, Հայաստանում շուրջ յոթ տասնամյակ հայ - ռուսերեն երկլեզվությունը դիզլոսիա չէր կարելի համարել, քանի որ ռուսերենը լայնորեն տարածված էր նաև առօրյա պաշտոնական ոլորտներում և կարծես թե ներկայում ուզում է վերականգնել իր ոչ վաղեմի դիրքը: Ռուսերենով անեկդոտներ էին պատմվում (ինչպես և այժմ), կար և կա այդ լեզվով «թեթև» գրականություն և այլն:

¹³ Այս մասին մանրամասն տե՛ս Վ. Կատվայան, Ա. Աբրահամյան, Ջ. Բառնասյան, Հ. Խաչատրյան «Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների առնչությունները» գրքի նախաբանում, Ե., 2016, էջ 10-12:

զ) Ժողովրդախոսակցական լեզու

Լեզվի գոյության **ժողովրդախոսակցական** ձևը հաճախ կոչում են առօրյա - խոսակցական: Վերջինս ավելի դիպուկ է մատնանշում լեզվի գործածման գերակայող ոլորտները՝ առօրյա կյանք, կենցաղ, ամենօրյա խոսք: Լեզվի ժողովրդախոսակցական ձևը սկզբունքորեն հակադրվում է մի կողմից գրական ձևին, մյուս կողմից՝ լեզվի՝ մյուս բոլոր գոյաձևերին, մասնավորապես՝ բարբառայինին:

Նկատի ունենալով լեզվի այնպիսի չափանիշ, ինչպիսին *տարածվածության աստիճանն* է, խոսակցական լեզուն ստորաբաժանում են՝

ա) համազգային խոսակցականի և բ) տեղային խոսակցականի կամ բարբառայինի:

Թեև խոսակցական լեզվի կառուցվածքային տիպը նկատի ունենալով նրա մեջ կարելի է ներառել նաև տարածքային բարբառները, սակայն հանրալեզվաբանական հայեցակետով բարբառները պետք է դուրս բերվեն ժողովրդախոսակցական լեզվի սահմաններից ու դիտվեն իբրև լեզվի գոյատևման հատուկ, ինքնուրույն ձև:

դ) Հասարակաբանություն

Հասարակաբանությունը լեզվի այն բաղադրիչն է, որը հակադրվում է մի կողմից գրական խոսակցական լեզվին, մյուս կողմից՝ տարածքային բարբառներին: Այն ունի կրողների իր սեփական կազմը կամ, Ե. Դ. Պոլիվանովի տերմինաբանությամբ՝ իր «սոցիալական սուբստրատը»: «Ժամանակակից բանավոր խոսքի երեք ոլորտները՝ **բարբառ, հասարակաբանություն, գրական խոսակցական լեզու,**

իրարից զանազանվում են նախևառաջ դրանք կրողների կազմով»¹⁴:

«Հասարակաբանությունը հանրալեզվաբանական խնդիր է, իսկ հանրալեզվաբանության մեջ, իբրև օրենք, գործում է բազմաչափ մոտեցումը՝ զրուցակիցների անհատականության, սոցիալական բնութագրի հաշվառմամբ, նրանց ցանկությունների, ընդհանուր փորձի, նախապատմության ու զրույցի ընթացքի պայմանների հաշվառմամբ: Լեզվում գունագեղություն ստեղծվում է ոչ միայն զուտ լեզվական միջոցներով, այլև ուրիշ, այդ թվում՝ արտալեզվաբանական գործոնների ամբողջությամբ:

ե) Բարբառներ

Բարբառներին անդրադառնում ենք այն հիմնավորմամբ, որ «Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության մեջ հաճախ նկատելի է լեզվական այն իրողությունը, երբ բառիմաստի տերմինացման ճանապարհով կերտված տերմինների հիմքում ընկած են բառերի՝ դեռևս գրաբարում, միջին հայերենում կամ բարբառներում ունեցած իմաստները: Այդ բառերից շատերն այսօր յուրացված են ամբողջությամբ կամ մասամբ, և դրանց իմաստներն ամրագրված են բառարաններում: Գիտատեխնիկական տերմինաբանությունն էլ, որպես լեզվի զարգացման նորագույն փուլի արդյունք, գերակշիռ մասով հենված է հենց աշխարհաբարյան շրջանի բառապաշարային իրողությունների վրա»¹⁵:

¹⁴ Городское просторечие / Проблемы изучения, М., 1984, стр. 11:

¹⁵ Պետրոսյան Հ., Բարբառային շերտի բառերի արտացոլումը գիտատեխնիկական տերմինաբանության մեջ, Հայերենագիտական

Այս ճանապարհով հայերենի տերմինային համակարգն են հարստացրել հատկապես արհեստների, երկրագործության, չափ ու կշռի, շինարարության և հարակից այլ հասկացություններ արտահայտող բառերը: Ուշագրավն այստեղ այն է, որ հասկացություններ, գործընթացներ ու գործիքներ անվանող այդ բառերն ունեն բառակազմական՝ այսօր ստեղծվող կամ կազմվող բառերի նույն կաղապարները՝ **Հ + -իչ (կոկիչ, հանիչ, փորիչ, ծակոտիչ, կալիչ), Հ + -իկ (իլիկ, լիսեռնիկ, թաթիկ)** և այլն:

Հայերենի պարագայում, երբ գործ ունենք երկու գրականների՝ արևելահայերենի և արևմտահայերենի ու դրանցից յուրաքանչյուրի բարբառային դրսևորումների հետ, անհրաժեշտ է ընդգծել շատ կարևոր մի իրողություն. արևմտահայերենի գրական տարբերակը իբրև հաղորդակցման միջոց գործառում է պատմական հայրենիքից դուրս, իսկ նրա բարբառներից չորսը՝ Կարնո, Մշո, Մասունի և Դիադինի, ապաստան են գտել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ նախքան եղեռնը տեղի ունեցած բռնագաղթերի արդյունքում: Այսպիսով արևմտահայերեն խոսքը Հայաստանի Հանրապետությունում շարունակում է գործառվել իբրև ամենօրյա կենդանի հաղորդակցման միջոց բնակչության մի զգալի հատվածի համար (Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզեր և այլ վայրեր)՝ իբրև գրական արևմտահայերենի և արևմտահայ բարբառների ամբողջություն¹⁶:

միջազգային տասներորդ գիտաժողով, Զեկուցումների ժողովածու, Ե., 2015, էջ 378:

¹⁶ Տե՛ս Վ. Կատվալյան և ուրիշներ, «Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների առնչությունները», էջ 10-11:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայումս երկրագնդի վրա շուրջ 4000 լեզու գոյություն ունի, և դրանցից միայն 300-ն ունեն գիր, այսինքն՝ անառարկելիորեն գրական են համարվում, ապա կպարզվի, որ մնացյալ 3700 լեզուները գոյություն ունեն անգիր բարբառների տեսքով: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն, որ գրական - գրավոր լեզուների՝ համապատասխան ազգերի և ազգությունների լեզուների գոյության միակ ձևը չեն (նրանց մեծ մասի, օրինակ, ռուսերենի, գերմաներենի, իտալերենի և այլ լեզուների համար բնորոշ է տարածքային տարբերակվածությունը), ապա պետք է ընդունել, որ տարածքային բարբառները լեզվի գոյության տարածված ձևերից մեկն են: Ինչ վերաբերում է գրի ու գրական լեզուների ծագմանը նախորդող ժամանակաշրջանին (հաճախ դրանք միաժամանակ են առաջանում), ապա այդ փուլում տարածքային բարբառներն, անկասկած, գործառել են իբրև լեզվի գոյության կարևորագույն ձև, ուստի և հայերենի բառապաշարի, տվյալ պարագայում՝ տերմինների հարստացման աղբյուր:

Սոցիալական բարբառներ

Գիտական և ուսումնական գրականության մեջ «սոցիալական բարբառներ» տերմինը գործածվում է երբեմն շատ լայն, երբեմն՝ շատ նեղ իմաստով: Տերմինի լայն ըմբռնման դեպքում սոցիալական բարբառների կատեգորիայի մեջ ներառում են լեզվի բոլոր (կամ գրեթե բոլոր) սոցիալապես պայմանավորված տարբերակները՝ անկախ դրանց կառուցվածքային - լեզվական ու գործառական առանձնահատկություններից:

Սոցիալական բարբառներին խիստ նեղ սահմանում է տալիս Յու.Ս.Ստեպանովը. «Տեղական գյուղական բարբառներին մոտ են նույն լեզվի սոցիալական բարբառները ... այլ կերպ դրանք կոչվում են «պայմանական լեզուներ»¹⁷:

Եթե տարածքային բարբառները ծնունդ են ժողովրդի տարածքային, աշխարհագրական տրոհման (թեև նման տրոհումը նաև սոցիալական արմատներ ունի), ապա սոցիալական բարբառների բնույթը պայմանավորվում է հասարակության սոցիալ-շերտային, մասնագիտական, սոցիալ-տարիքային, սոցիալ-սեռային կամ մասնագիտական-սեռային տրոհմամբ: Սոցիալական բարբառները ծառայում են որոշակի սոցիալական կամ մասնագիտական խմբեր կազմող մարդկանց, դրանք միավորում են միննույն սկզբունքի կամ դասի մարդկանց, որոնց համախմբում է որոշակի հետաքրքրությունը՝ մասնագիտական, սոցիալ - շերտային, տարիքային, մշակութաթնիկական այլն:

Անցյալ դարի 60-ական թվականներին Վ.Դ. Բոնդոլետովը,¹⁸ հաշվի առնելով սոցիալական բարբառների բնույթը, դերը, լեզվական հատկանիշներն ու գործառությունների պայմանները, առաջարկել է մի դասակարգում, որի դեմ քիչ թե շատ ծանրակշիռ փաստարկ առ այսօր չկա: Բերենք նրա այդ դասակարգումը՝ որոշ պարզաբանումներով ու հիմնավորումներով: Սոցիալական բարբառներ են համարվում.

1. բուն մասնագիտական «լեզուները» (ավելի ստույգ՝ բառահամակարգերը), օրինակ՝ ձկնորսների, որսորդների, փայտագործների, բրուտների, կոշկակարների, ինչպես նաև այլ արհեստների ու զբաղմունքների,

¹⁷ Степанов Ю. С., Основы общего языкознания, 2-ое изд., М., 1975, стр. 198:

¹⁸ Степанов В. Д., Социальная лингвистика, М., 1987, стр. 69:

2. խմբային կամ կորպորատիվ ժարգոնները, օրինակ՝ դպրոցականների, ուսանողների, մարզիկների, զինվորների և այլ հիմնականում երիտասարդական կոլեկտիվների,

3. արհեստավորների, առևտրականների ու սրանց հարող այլ սոցիալական խմբերի պայմանական լեզուները (արգո),

4. ապադասակարգայնացվածների ժարգոնը (արգո):

Այս դասակարգման մեջ առաջին անգամ զանազանվում են պայմանական լեզուները և ապադասակարգայնացվածների ժարգոնը՝ որպես սոցիալական բարբառների երկու տարբեր տեսակներ, քանի որ դրանք կյանքի են կոչվել սոցիալական տարբեր պատճառներով և ունեն միանգամայն տարբեր առաքելություններ:

Առանձնացված հիմնական տիպերին զուգընթաց՝ առկա են բազմաթիվ միջանկյալ տարատեսակներ, որոնք համատեղում են մասնագիտական լեզուն ու խմբային ժարգոնը (մասնագիտական ժարգոն), մասնագիտական լեզուն և նստվածքային լեզվի առանձնահատկությունները (վաճառականների, վարչարարների, եկեղեցական ծառայողների և սրանց հարող այլ ժարգոններ):

զ) Տերմիններ

Ա. Ա. Ռեֆորմատսկին տերմինները համարել է երկու տիրոջ ծառա՝ տերմինաբանության ու ընդհանուր, ոչ մասնագիտական բառագիտության: Որպես հատուկ դեր կատարող համակարգի անդամ՝ տերմինը կառավարելի է. տերմինները ստեղծվում են, կանոնակարգվում կամ կարգաբերվում տերմինաբանական հանձնաժողովներում, գովազդվում են «հանձնարարվող ցուցակներով» և այլն: Իսկ այն

չափով, որքանով որ տերմինները մնում են որպես «սովորական» բառեր, դիմադրում են կարգավորմանը: Դրանք պահպանում և / կամ զարգացնում են իրենց բազմիմաստությունը, ընդ որում, որքան տերմինը ավելի շատ է կիրառելի, այնքան ավելի բազմիմաստ է:

Ժամանակակից լեզուներում տերմինների քանակը շատ մեծ է. դրանք միլիոնավոր բառեր ու բառակապակցություններ են: Սակայն այդ միլիոնները բաշխվում են գիտելիքների ու տեխնիկայի հազարավոր բնագավառների միջև ու կազմում են բառապաշարի «ծայրամասային» շերտերը՝ հեռու համագային բառապաշարի միջուկից՝ հիմնական բառակազմից:

Քանի որ գիտությունը զգալի չափով ինտերնացիոնալ է, ուստի տերմինաբանության ու նիշերի հատուկ համակարգերի ոլորտում հնարավոր են միջազգային պայմանավորվածություններ, մասնավորապես՝ այս կամ այն նշանակիչի իմաստի ու «համակարգում գրաված տեղի» վերաբերյալ: Միջազգային նման կոորդինցիայի օրինակ է Սլավոնական լեզվաբանական տերմինաբանության երկհատորյակը, որը կազմվել է սլավոնագետների միջազգային հաձնաժողովին կից Տերմինաբանական հանձնաժողովի կողմից:

Հայերենում տերմինների մշակման ու նորմավորման հարցերը եղել են պետական-կառավարական հոգաձության առարկա: «Դեռևս մեր դարի (իմա անցյալ դարի) քսանական թվականներից սկսած Խորհրդային Հայաստանում լեզվաշինության (գերազանցապես եզրաշինության) գործը պետականորեն կարգավորելու համար գործում էր նախարարների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն (հետագայում՝ տերմինաբանական հանձնաժողովը): Նաև նրա գործունեության շնորհիվ լույս են տեսել ութ տասնյակից ավելի եզրաբանական, գիտաճյուղային բառարաններ, որոնք անուրանալիորեն նպաստել են հայոց լեզվի եզրաբանության

հետագա մշակման, արևելահայ գրական լեզվի հարստացման, կանոնարկման գործընթացին»¹⁹: 1996 թվականից սկսած այդ պարտականությունը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը կից Լեզվի պետական տեսչության կազմում գործող Հայերենի բարձրագույն խորհուրդը, որը հայերենի տերմինաբանական դաշտի ձևավորման պատասխանատուն է ու պարբերաբար լույս է ընծայում կանոնարկված տերմինային ցանկեր՝ այլևայլ գիտաճյուղերից:

Այսպիսով, տերմինաբանությունը լեզվական իրողությունների մի ամբողջություն է, որում հասարակության գիտակցական ազդեցության արդյունքը լեզվի վրա առավել զգալի և հեռանկարային է²⁰:

Ժամանակակից հայերենի տերմինաբանության ուսումնասիրությունը ենթադրում է հետևյալ հարցերի դիտարկում.

1. նոր տերմինների առանձնացում (սրանք հայերենի բառապաշարում ունեն նորաբանության արժեք),

2. տերմինների դասակարգում ըստ գործածության բնագավառների, մասնագիտացումների, առանձին գիտաճյուղերի,

3. տերմինների բնութագրում ըստ բառիմաստային նոր դրսևորման,

4. կայուն կապակցություն հանդիսացող նոր տերմինների բնորոշում:

Է) Նոր տերմիններ

Մրանց առանձնացումը լիովին պայմանավորված է ժամանակակից հայերենի բառապաշարի քննության խնդրով:

¹⁹ Տե՛ս Մարգարյան Ա. Ե., Մեր լեզվի բարձրագույն ատյանը, Ե., 1987, էջ 3:

²⁰ Տե՛ս Իշխանյան Ռ. Ա., Ակնարկ հայերենի տերմինաշինության, Ե., 1981:

Այս դեպքում անհրաժեշտաբար նկատի է առնվում տերմինի բառակազմական սկզբունքը: Այստեղ **նորակազմ** են բարդ, ածանցավոր, բարդաածանցավոր այն տերմինները, որոնք ստեղծվել են ժամանակակից հայերենում՝ կապված գիտության տվյալ ճյուղի զարգացման պայմաններում ի հայտ եկող հասկացությունների անվանման անհրաժեշտության հետ. խոսքը արդի հայերենի բառարաններում տեղ չգտած տերմինների մասին է:

Ռուսերենից հայերենին անցած տերմինների զգալի մասը միջնորդավորված փոխառություններ են կամ միջազգային տերմիններ, որոնք ռուսերենը վերցրել ու վերցնում է եվրոպական լեզուներից: Փոխառյալ տերմինները հայերենում ենթարկվում են հայերենին հատուկ հնչյունական փոփոխությունների՝ հայացվում, մերվում հայոց լեզվի բառապաշարին, դառնում նորանոր բարդությունների ու ածանցումների հիմք. օրինակ՝

պլան → պլանային, պլանավորող, պլանավորված
 → պլանաչափ, պլանաչափորեն, պլանաչափություն
 → արտապլանային

Անտի (հակա-), **ա** (ան-), **էնդո** (ներ-), **դիս** (տարա-, ան-), **ռե** (վերա-, կրկնա-, հետա-) նախաձանցներով հայերենում բառերի բազմաթիվ քանակություն կա՝ *հակաթույն*, *հակա-նեխիչ* և այլն²¹, իսկ **հոմո** (համա-), **մոնո** (միա-, մենա-), **պարա** (հար-), **պոլի** (բազմա-), **ֆիլ** (սեր), **դի** (երկ), **գրամա** (գիր), **լոգ** (բան, գետ) և այլ՝ շուրջ 30 ու ավելի բառակազմական

²¹ Տե՛ս Հացագործյան Ջ. Ս., Ասլանյան Ս. Ա., Միջազգային տերմինային տարրերի ռուս-հայերեն բառարան, Ե., 1989:

բաղադրիչներով հայերենը ստեղծել ու ստեղծում է բազմաթիվ տերմիններ²²:

Ներկայումս փոխառյալ բառերի մեջ զգալի են անգլերենից փոխառությունները: «Հանրալեզվաբանական առումով անգլերենի ազդեցությունը սկսում է մեծանալ ոչ միայն հայերենի, այլև նախկինում մեծ ազդեցություն ունեցած ռուսերենի հաղորդակցական գործառույթների թուլացման հաշվին: Այս փոխառությունները վերաբերում են կենդանական ու բուսական աշխարհին, ծովային և սպորտային, տնտեսագիտական, իրավաբանական, քաղաքական, տեխնիկայի ու սարքերի, մեքենաների, խոհարարական, երաժշտական, խաղերի, հագուստների, պատմական, բժշկական բնագավառներին, ազգակցական կապերին ու հարաբերություններին, չափի միավորներին ու դրամի անվանումներին: Այս բառերից շատերի համար հայերենը ստեղծում ու կիրառում է հայեցի համարժեքներ՝ լեզվի սեփական հումքով, որոշ մասն էլ ոչ գործուն (պասիվ) բառաշերտին է պատկանում՝ չգտնելով կյանքի տվյալ ոլորտի ակնհայտ զարգացում: Վերջինիս համար օրինակ կարող են ծառայել ծովային տերմինները. Հայաստանը ծովային երկիր չէ, այս բառաշերտի զգալի մասը անարգասավոր է, անգործուն, սակայն, հայերենի բառապաշարի շերտ կազմելով, դրանք նաև իրենց բառարանային արտահայտությունն են գտել՝ **կատեր, լայներ, յախտ-կլուր** և այլն:

Կենդանական աշխարհին վերաբերող տերմինների խմբում գործում է այլ «օրենք», ինչը խորթ է կամ ոչ հատուկ հայկական կենդանական աշխարհին (նաև բուսական). այստեղ ունենք տարբեր տիպերի պատճենումներ՝ **բուլդոզ,**

²² Տե՛ս Միքայելյան Կ. Ռ., Օտարազգի բառերի գործածությունը հայերեն պաշտոնական լեզվում, Թեկնածուական դիսերտացիա, Ե., 2002:

պոնի, ֆոքստերիեր, ալիգատոր, մուստանգ, գրեյֆրուտ և այլն»²³:

Տեխնիկայի, մասնավորապես համակարգչային տեխնիկայի զարգացմամբ պայմանավորված, բառապաշար մուտք գործեցին հսկայական թվով տերմիններ՝ *կուրսոր, ֆորմատավորում, չեղարկել, մենյու, տաբուլացում, սքաներ, մոդեմ, մոնիտոր* և այլն:

Տերմինների այս իմաստային խմբի համար հայերենում ստեղծվել են համարժեքներ՝ դուրս մղելով օտարազգի բառերը, ինչպես՝ *ստեղնաշար, մկնիկ, գորգիկ, կուտակիչ, կրիչ, տպիչ, կոշտ և ճկուն սկավառակակիրներ, մայր տպասալիկներ, լազերային գրող և կարդացող սարքեր* և այլն, մյուսների համար ստեղծվում են՝ օգտվելով գրական արևմտահայերենից, իսկ զգալի մասը դեռ մնում է անհամարժեք և դեռևս կիրառվում են օտար, փոխառյալ բառերը (տես օրինակների նախորդ շարքը):

Նոր տերմինները, ինչպես նշել ենք, աչքի են ընկնում բազմաբաղադրիչությամբ. դիտարկելով 2015 թվականին ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Նոր բառեր» Ա Պրակ գիրքը՝²⁴ հաստատվեց, որ բոլոր նոր, ինչպես համագործածական, այնպես էլ տերմինային կազմություններն Ա Պրակում բազմաբարդ են. այսպես, օրինակ, *ասյահավասարակշռություն, գերբազմագործոն, գերթթևքաշային, գործակարգավարական, դրոշմապիտակավորում, եղանակագայունություն, զինահաշմանդամ, կիրեռպաշտպանվածություն, հակամիասնեռականություն, հայրենատիրություն, միգրանտաստյացություն, նավթադոլարաբույր, նյար-*

²³ Տե՛ս նույն տեղը:

²⁴ Ա. Ս. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ. Սահակյան, Լ. Ե. Սահինյան, Նոր բառեր, Ա պրակ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Ե., 2015:

դաշեզվարանական, ռուսաստանակենտրոն, տեսալուսանկարահանում և այլն՝ այսպիսի շուրջ 1500 բառային նորակազմություններ: Ընդ որում, որպես նորամույժ բառակազմական մասնիկ *կիրեռ-* բաղադրիչն այնքան գործածական է դարձել, որ արդեն իսկ անցյալ 2015-ին լույս տեսած «Նոր բառեր» գրքում առկա էլաբորատի թվում ընդգրկվեց բազմաթիվ օրինակներով, և դրանց ցանկն օրեցօր համալրվում է. բերենք մեկ օրինակ նորություններ կայքէջից. «ՊՆ-ն *«կիրեռչոկատի»* գորակոչիկների մրցույթ է հայտարարում»²⁵:

Ս. Էլոյանի հեղինակած «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում»²⁶ բառակազմական մասնիկի դեր ստանձնեցին *բռնա-* (*բռնախլված, բռնամտածողություն, բռնաշահադիտական, բռնավարչական* և այլն), *ընտրա-* (*ընտրակեղծարարություն, ընտրամարդասիրական, ընտրաքաղություն, ընտրահանցագործություն* և այլն), *ինքնա-* (*ինքնարարեգործություն, ինքնագրաքննություն, ինքնահետաքրքրվածություն, ինքնախնկարկում* և այլն) և այլ բայարմատներով ու տարբեր բառերով կազմված բազմաբաղադրիչ նորաբանությունները, որոնց մեջ գերադասում են նորաստեղծ տերմինները:

Բացի այդ, հայերենի զարգացման արդի փուլում ածանցացման գործընթացում է և ածանցակերպների ցանկն է համալրում **գուրկ** արմատը²⁷, որն **ան-** նախածանցի պես բավականին կենսունակ է և կարող է միանալ գոյականական

²⁵ Նորություններ կայք էջ, 30 մայիս, 2016:

²⁶ Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, էջ 96, 168 և 186՝ համապատասխանաբար, Ե., 2002:

²⁷ Ըստ ակադ. Գ. Ջահուկյանի՝ այն արմատական ածական է, որը հայկազյան բառարանում մեկնաբանվում է որպես զրկեալ, անմասն, անբաժին, սին՝ Ջարկ և ունայն ի ճշմարիտ գեղեցկութեցն-էջ ԶԶԱ:

հասկացություններին՝ ժխտելով նախահիմքի իմաստը:

Դեռևս անցյալ դարի 70-ականներին հրատարակված Հայոց լեզվի հանգաբառարանում²⁸ այդ կազմիչով վկայված են 49 բառեր՝ *օղագուրկ, թագագուրկ, շնորհագուրկ, իրավագուրկ, շեշտագուրկ, արժեքագուրկ, իմաստագուրկ*, իսկ Արևակում առկա է ևս 36 բառ՝ հիմնականում նորակազմություններ և վերոբերյալներից տարբեր՝ *արատագուրկ, խլագուրկ* (եռաստիճան), *ձայնեղագուրկ, հիմնագուրկ, հուսագուրկ, թաղանթագուրկ, բովանդակագուրկ, զրահագուրկ, չափագուրկ, ծնողագուրկ, եթերագուրկ* (Ա1-ը դեռ եթերագուրկ է) և այլն, որոնց մեջ մեծ թիվ են կազմում ամենատարբեր տերմինահամակարգերի տերմինները՝ կենսաբանական, իրավաբանական, լեզվաբանական, բժշկական և այլն. *կենսագուրկ, ծովագուրկ, ձայնավորագուրկ, ծառագուրկ, իրավագուրկ* և այլն:

Այսպիսով, տերմինաբանությունը, ինչպես նաև բառապաշարի մյուս ոլորտները, գտնվում է անընդհատ փոփոխման և զարգացման գործընթացների մեջ: Եթե մի կողմից նոր տերմինները փորձում են վերացնել համակարգում առաջացած անհամապատասխանության, հակասության երևույթները (և դա այս կամ այն չափով հաջողվում է), ապա մյուս կողմից այդ ոլորտում անընդհատ առաջանում են իրենց լուծմանը սպասող նորանոր խնդիրներ: Եվ դա էլ բնական, կենդանի լեզվին բնորոշ ամենաէական հատկանիշն է:

²⁸ Հայոց լեզվի հանգաբառարան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Ե., 1976, էջ 240-241:

ԳԼՈՒԽ 2

1. Կիրառական տնտեսագիտության տերմինների կառուցվածքային-իմաստաբանական ուսումնասիրություն

Տերմինների որոշակի իմաստային խմբին անդրադառնալը պայմանավորվում է հասարակական կյանքի զարգացման տվյալ փուլին բնորոշ տեխնիկական, գիտական, արտադրական և այլնայլ ոլորտներից որևէ մեկի առաջընթացով: Հայաստանում տնտեսական նոր հարաբերությունների անցումը առաջ բերեց նոր հասկացություններն ու երևույթները նկարագրող բառերի ու արտահայտությունների անհրաժեշտություն:

Ամերիկյան կիրառական տնտեսագիտությունը, տարածման պարարտ հող գտնելով, հաղթականորեն մտավ Հայաստան: Հայաստանում հիմնադրված Ամերիկյան համալսարանը իրար հետևից թարգմանաբար լույս ընծայեց ամերիկացի հայտնի տնտեսագետներ Ալֆրեդ Մարշալի, Ջոան Ռոբինսոնի, Փոլ Հոքենի, Ստիվեն Հաստեդի և Մայքլ Մելվինի, Փ. Սամյուելսոնի և Ու. Նորդհաուսի ու շատ ուրիշների ինչպես կիրառական տնտեսագիտությանը, այնպես էլ տնտեսագիտությանն առհասարակ՝ իր բոլոր ոլորտներով՝ ֆինանսներ, հարկում, դրամատնային գործ, հաշվապահություն և շուկայավարում, միջազգային և ներքին առևտուր և այլնին նվիրված բազմաթիվ մեծ ու փոքր հատորներ: Դրանց մեծ մասն ունի նորաստեղծ տերմինների ու հասկացությունների համատոտ բացատրական բառացանկեր: Հրատարակման գործընթացում են տնտեսագիտական տերմինների բազմալեզվյան բառարանները՝ Հայաստանի

ժողովն տեսության և Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտների կողմից: Այսպիսով կուտակվեց լեզվաբանական քննության աղերս ունեցող հսկայական նյութ: Կազմվեց 600 միավորներից բաղկացած ցանկ, որի ուսումնասիրության գործընթացում նկատվեց այն միտումը, որ հայերենը, ի տարբերություն, ասենք ռուսերենի, դժկամությամբ է ուղղակիորեն ընդօրինակում օտարալեզու բառերը: Ընդհակառակը, օտար տերմինների ու հասկացությունների դիմաց դնում է բառակազմական իր ողջ հումքն ու հնարքները՝ ճկուն ձևով արտացոլելով յուրաքանչյուր օտար բառի լիարժեք բովանդակությունը: Ասվածը փաստում է նաև 1998թ. լույս տեսած «Անգլերեն-հայերեն տնտեսագիտական բառարանի» հեղինակ Ալեքսանդր Աղաբեկյանը. «Կարիք եղավ ինչպես վերականգնել հնում հայտնի և մոռացված բառեր, ինչպիսիք են, օրինակ, *մուրհակը, բաժր, բաժնետոմսը*, այսպես էլ թարգմանել և ստեղծել նոր եզրեր ու արտահայտություններ»²⁹: Ըստ հեղինակի՝ ներկայիս արագ տնտեսական փոփոխությունների շրջանում ժամանակակից բացատրական բառարանը պետք է ոչ միայն առավելագույնս արտացոլի ներկան, այլև անգամ փորձի կիրառության մեջ դնել անհրաժեշտ-հնարավոր արտահայտությունները:

Այս աշխատանքը նպատակ ունի նախ՝ ճշգրտել, համակարգել տերմինների նշված խումբը, ապա՝ մանրակրկիտ ուսումնասիրության միջոցով կանխանշել տերմինաստեղծման նորանոր ուղիներն ու հանձնարարել նորակազմությունների շրջանառությունը:

Կիրառական տնտեսագիտության տերմինների քննությանը նվիրված մեր աշխատանքում օգտագործած գրքերը լույս


²⁹ Տե՛ս Ալեքսանդր Աղաբեկյան, «Անգլերեն-հայերեն» բառարան. գործարարություն, տնտեսագիտություն, Ե., 1998:

են տեսել շուրջ 40 լեզուներով: Այս բնագավառի բնորոշ գիծն այն է, որ անընդհատ համալրվելով նորերով՝ այն իր ներսում երբեմն մի տերմինը մյուսով փոխարինելու անհրաժեշտություն է ծնում, ինչպես *բանկ - դրամատուն - գանձատուն - սակատուն, տնայնագործություն - տնաշխատ*, այդպիսով հիմք տալով խոսելու տերմինների ուրույն հոմանշության մասին: Տերմինները ընդհանուր առմամբ ունեն կառուցվածքային նույն աստաղծ, ինչ համագործածական բառերը, սակայն ի հակակշիռ վերջիններիս՝ տերմինների կազմությունը, իբրև կանոն, գիտակցված, կազմակերպված, համակարգված ձևով է ընթանում:

Նախ անդրադառնանք քննարկվող բառերի կառուցվածքային հարցերին: Տերմինների այս խումբը կազմված է տնտեսագիտության տարբեր, բայց հավասարազոր բնագավառների տերմիններից, ստորակարգային հարաբերությունները մեր ցանկում արտահայտված չեն:

Հայերենն այստեղ գործի է դրել իր բառապաշարի բոլոր շերտերը (գրքային, առօրյա-խոսակցական և այլն), բառակազմական բոլոր կանոններն ու կաղապարները: Ածանցմամբ կերտվել են ածանցավոր և բարդածանցավոր տերմինները, ինչպես նաև բաղադրյալ տերմինների շատ բաղադրիչներ: Իհարկե բառակազմական ոչ բոլոր միջոցներն են նույն արգասավորությամբ գործառվում: Թե գիտության որ բնագավառը ինչ միջոցներ է գերադասում, այստեղ չի վերլուծվում, բայց վստահորեն կարող ենք նշել քննվող տերմինահամակարգում արգասավոր բառակազմական միջոցներն ու կաղապարները:

Այսուհետ բառակազմական պատկերը կներկայացնենք հետևյալ գծապատկերային ստորակարգությամբ.



Պարզ (միաբառ) տերմիններ

Փոքրաթիվ է պարզ տերմինների խումբը՝ 40 միավոր (այստեղ ենք ընդգրկել նաև տառադարձմամբ փոխառածները՝ ***ֆիզիոկրատ, փանպում, օլիգոպոլիս, մերկանտոլիստ, մարժինալիստ, ինկոտերնզ, ռիսկ***): Մյուսները, որ արդի հայերենի համաժամանակյա քննության տեսակետից միաձևույթ կազմություններ են և բառակազմորեն չեն պատճառաբանվում,

հիմնականում նաև համագործածական բառեր են՝ *օգուտ, պաշար, անհատ, դրամ, գույք, կարիք, գործոն* և այլն: Բազմաթիվ ուսումնասիրողներ փաստել են, որ պարզ կառուցվածք ունեցող տերմինները սակավաթիվ են յուրաքանչյուր գիտության տերմինաբանության մեջ: Սա պայմանավորված է ներլեզվական և արտալեզվական մի շարք գործոններով: Նախ, որ պարզ բառեր այժմ չեն ստեղծվում, և երկրորդ տերմինների հիմնական կառույցը գիտական բարդ հասկացություններ արտահայտելու նույն կարողությունը չունի, ինչ մյուս տիպի կաղապարներով կառուցված տերմինները: Սակայն պարզ տերմինները գործառական տեսակետից ունեն որոշակի առավելություններ. ամենից առաջ դրանք բավարարում են գիտական տերմիններին ներկայացվող պահանջներից մեկին՝ հակիրճությանը: Բացի այդ, նման կառուցվածք ունեցող տերմինները (անկախ սակավաթիվ լինելուց) գործածման մեծ հաճախականությամբ են օժտված, արգասավոր ձևով հանդես են գալիս բառակազմական մյուս փուլերում՝ ստեղծելով բազմանդամ բառակազմական բներ և դրսևորելով տերմինայնացման ավելի մեծ աստիճան, օրինակ՝

գին → **գնաճ** → **գերգնաճ**,
 գնորոշում → ծախքածածկման գնորոշում,
 գնանկում,
 գնային համակարգ,
 գնի առաջնորդություն,
 ապառիկ գնման քարտ,

ծախս → **մեծածախ**
 միջին փոփոխական ծախքեր,
 մանրածախ,
 անբացահայտ ծախք,

արտադրական ծախքեր,
փոփոխական ծախքեր,
հանձնառու ծախքեր:

Այս տերմինախմբի բառերը, մտնելով բաղադրյալ կառույցներ, դրանցում գլխավոր անդամի դերում են հանդես գալիս՝ գերազանցապես կազմելով գոյական գերադաս անդամով բառակապակցություններ.

ազատ առևտրի *գույի*,

ավելացված արժեքի *հարկ*,

աշխատանքի ներքին *շուկա*,

բաժնետոմսին ընկնող ունեցվածքի *արժեք* և այլն:

Ածանցավոր տերմիններ

Ածանցումը բառակազմության գործընթացում միշտ գերադաս դեր է ունեցել և հիմնականում շատ արդյունավետ է եղել: Ածանցման միջոցով տերմինների այս խմբում կազմվում են՝ ա) միայն նախածանցավորներ, բ) միայն վերջածանցավորներ՝ (նաև վերջածանցակերպներով), գ) նախածանցավերջածանցավորներ:

ա) Նախածանցավոր տերմիններ

Բառակազմության նախածանցման կադապարը սովորաբար չունի այն արգասավորությունը, ինչ վերջածանցմանը, սակայն տնտեսագիտական տերմինների համակարգում ներկայանում են գրեթե բոլոր նախածանցները՝ առավել կամ պակաս հաճախականությամբ: Միայն նախածանցներ ունեցող միավորները մեր նյութերում երեքն են՝ *համակարգ*, *համախառն*, *հակահայտ*, իսկ նախածանցավերջածանցավորները՝ բազմաթիվ, *նախընտրել ներառնել*, *ներդրում*, *ընդլայնում*, *համերկրային*, *գերադասելի*, *անբաժանելիության*, *տարանջատում*,

վերաշուկայահանում, չբազմատեսականացվող, հակազնակցում, ենթագործակալ և այլն: Ընդ որում, մի շարք դեպքերում առկա է կրկնակի նախաձանցումը՝ *ենթարևոյհանուր, հասընդհանուր, վերաներդրված, անչեղարկելի*: Այստեղ հատկանշական է *ան, ապ, չ* ժխտական նախաձանցներով տերմինակազմությունը, ընդ որում, չ նախաձանցով 19 միավոր է բերված՝ *չհանագործակցված* հավասարակշռություն, *չեղարկելի* վարկագիր, *չպահանջվող* միջոցներ և այլն:

Այսպիսով՝ նախաձանցումը, թեև ոչ բազմաթիվ դեպքերով, սակայն բազմազանության մի ուրույն պատկերով է ներկայանում տնտեսագիտական տերմիններ կերտելիս:

բ) Վերջաձանցավոր տերմիններ

Աձանցավորների այս խումբը լայն տարածում ունի խնդրո առարկա բառերի մեջ: Վերջաձանցները կարծես թե ավելի հստակ են բնորոշում բառը, ավելի ավարտուն դարձնում այն թե՛ կառուցվածքային, թե՛ իմաստային և թե՛ ոճական տեսակետներից: Ասվածի ապացույցը նախաձանցավորների նկատմամբ նախաձանցավերջաձանցավորների գերակայությունն է: Բացի այդ, վերջաձանցները օժտված են նաև որոշակի խոսքի մասեր կերտելու ունակությամբ:

Տնտեսագիտական տերմինների գերակշռող մասը գոյականներ են, ուստի այդ գործընթացում մեծ է նշված խոսքի մասը կերտող աձանցների դերը: Վերջիններս բոլորն էլ առանց բացառության կենսունակ են, բայց որոշակի արգասավորություն են դրսևորում հատկապես **-ություն** (*տակավություն, արտադրություն, խնայողություն, ձեռներեցության, կայունություն, սակարկություն* և այլն), **-ում** (*հարկում, առաքում,*

բաշխում, փոխանակում, իրացում, հավերժում և այլն) ածանցները, քանի որ հասկացական ուղղվածություն ունեցող տերմիններ են կերտում: - **Ութուն** ածանցը, նաև բառակազմական գործընթացների եզրափակիչ փուլը ձևավորելով, այստեղ բայական ելաբառերից է պատճառաբանվում, եթե լեզվում անգամ գոյություն չունի իրեն անմիջականորեն նախորդող բառը՝

ծառայել - ծառայություն,

արտադրել - արտադրություն,

խնայել - x - խնայողություն,

վարձել - x - վարձակալություն,

փոխանակել - փոխանակություն,

մրցել - մրցակից - մրցակցել - մրցակցություն,

բաժանել - x - բաժանելիություն,

ճանաչել - x - ճանաչվելիություն և այլն:

Այսպիսով, բերված և նման մյուս կազմությունները կառուցվածքային տեսակետից դառնում են պատճառաբանված և ավելի դյուրին է դառնում դրանց ստուգաբանությունը: -**Ում** վերջածանցով կազմված տնտեսագիտական տերմինները, ինչպես նաև դրանով կազմված գիտական մյուս տերմինները գալիս են հաստատելու այն միտքը, որ ներկայումս ավելի արգասավոր է դարձել հենց այդ ածանցը. համեմատելով - **ութուն** և - **ում** ածանցներով նույնահիմք կազմությունները (*սակարկություն - սակարկում, փոխանակություն - փոխանակում* և այլն)՝ վստահորեն կարելի է հանձնարարել վերջին ձևերը:

Այս խմբում գործում են **գործող անձ և գործիք** ցույց տվող ածանցները՝ *գործարար, ծախսարար, ձեռնարկիչ, դրոշիչ, սակարկող, սլլանավորող, ծախող*, ինչպես նաև - **ույթ** - ով կազմությունները *շահույթ, գործառույթ, սովորույթ, հանույթ* և այլն: Մյուս վերջածանցները հանդես են գալիս մեկական օրինակներով (*գիտակ, թափոն, կորուստ, գործակալ*), ապացուցելով, որ

իմաստային այս խմբում առանձնապես կենսունակ չեն, ուստի և հանձնարարելի էլ չեն:

զ) Նախաձանցավոր - վերջաձանցավոր տերմիններ

Տերմինների կազմության այս կաղապարը ինքնին վերցրած շատ արգասավոր չլինելով՝ այստեղ բավականին աշխուժություն է դրսևորում: Հիմնականում հանդիպում են անորոշ դերբայով ձևերը՝ *նախընտրել, ներդնել, ընդդայնել, գերադասել, թերակազմել, սպիտեքստիորել* և բառակազմական հաջորդ տակտում սրանցից սերված *-ում*-ով կառույցները՝ *ներդրում, ընդդայնում, համակարգում, սպիտեքստիորում, համակցում, հակամիտիորում, սպամիսածույում, տարանջատում*, և այլն:

Բարդաձանցավոր տերմիններ

Տերմինների այս խմբում մասնակցում են բառակազմական երկու կաղապարներ՝ բառաբարդում և աձանցում, ընդ որում կան օրինակներ, երբ բառակազմական մեկ տակտում միաժամանակ տեղի են ունենում և՛ նախաձանցումը, և՛ վերջաձանցումը, ինչպես *հակազնագցում, սպաշուկայտիորում, վերաշուկայահանում, հակամենստիրական* և այլն:

Բարդաձանցավոր տնտեսագիտական տերմինների խմբում ակնհայտորեն գերադասում են վերջաձանցավոր կազմությունները և, ինչպես նախորդում, այստեղ էլ կենսունակ են - ութուն-ը և -ում-ը (*գործազրկություն, մակրոտնտեսագիտություն, ձեռնարկատիրություն, դուրիբացվելիություն, գնանկում, շուկայահանում, միօրինականացում* և այլն), և նշված գույգերի առկայության դեպքում նախընտրելի են *-ում* - ով կազմությունները: Հանդիպում է նաև աձականակերտ

ածանցներ՝ -ական (*սպասնովագրական, առևտրասարդյունաբերական, փարչահրամայական, բաժնետիրական, ձեռնարկատիրական*), -ային (*պատճառահետևանքային, բնահրապին, մաքսատնային*), -ած /ված (*թվագրված, տարկետված, թույլատրված*), այլև գուտ գոյականակերտ -անք՝ *հարկատրանք, պարտատրանք*, -իչ՝ *կարգատրիչ, հաշվեստուգիչ, բեռնաառքիչ, սահմանափակիչ* - ող՝ *արդյունաբերող, բեռնափոխադրող*, - արան՝ *դրամահատարան, հարկապատտարան* ածանցները: Բարդածանցավորների մեջ ևս առկա են ժխտական նախածանցները (*անհավասարակշռություն, սպաշակայափարում, անվճարունակություն, չբազմատեսակափոփող, չցանկագրված* և այլն):

Բարդ տերմիններ

Այս մասնավոր կադապարները պետք է ներկայացնել տարբեր մոտեցումներով.

1) ըստ բաղադրիչների քանակի (քանակը երբեմն շատ որոշակի դեր է կատարում),

2) ըստ բաղադրիչների միացման միջոցի,

3) ըստ բաղադրիչների ձևաբանական նկարագրի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկուսից ավելի հիմնական ձևերի կամ արմատների միջոցով կերտված բարդ բառերը բնորոշ չեն հայերենին և հազվադեպ են հանդիպում, այլև այն, որ ուրիշ տերմինահամակարգերում դրանք գրեթե բացակայում են, կարող ենք փաստել, որ տնտեսագիտական տերմինները այդ առումով բացառություն են կազմում, օրինակ՝ *բաժնետոմս, ապրանքատեսակ, բնապաշար, շահութաբաժին, տնտեսակարգ, խմբաշնորհատեր, չստիաքանակ* և այլն:

Ըստ բաղադրիչների միացման միջոցի՝ տնտեսագիտական բարդ տերմինների մեջ սակավաթիվ, բայց առկա են անհոդակապ կազմությունները՝ *արժեքած, տղած, ինքնած*,

փոխդիր, հողեզր, կապիտալեզր, շարժառիթ, գնաճ, նպաստատու, ծախվարդյունք, ինքնաշխատ: Ըստ խոսքիմասային պատկանելության՝ բաղադրիչները ներկայացնում են ձևաբանական հետևյալ կադապարները՝ Ա+Բ, Գ+Գ, Գ+Բ, Մ+Բ, Դ + Բ (*աղաճ, հողեզր, գնաճ, փոխդիր, ինքնաշխատ*)

Հոդակապավոր բարդ բառերը գերակշռում են, միացվում են հիմնականում ա հոդակապով (*հարկատու, ազարակատեր, գործազուրկ, աշխատատեղ, կենսամակարդակ, փորձագետ, նպաստատու, նորահարուստ, չտիաքանակ, ազատախոհ, կենսաձև* և այլն): Այստեղ ներկայացված են ձևաբանական բոլոր կադապարները՝ Գ+Բ, Ա+Գ, Գ+Գ, Ա+Բ, Բ+Գ (*հարկատու, հարահոսք, կենսաձև, գանձատուն, մանրածախ, ազատախոհ, բաշխատախտակ*): Գերադասում են Գ+Բ կամ բայարմատ կադապարները: Ընդ որում, տնտեսագիտական բարդ տերմինների մեջ հիմնականում բաղադրիչներից մեկը տերմին է՝ *կենսագին, մանրածախ, դրսևատուն, շտիություն* և այլն, թեև քիչ չեն ոչ Տերմին-ոչ Տերմին (*ազատախոհ, նորահարուստ, հնաձ, գեղադիտակ* և այլն) և Տերմին + Տերմին (*շահաքաժին, ծախվարդյունք, չտիաքանակ, արտոնագրատեր , շուկայահանում* և այլն) կադապարները:

Բաղադրյալ (բառակապակցական) տերմիններ

Կիրառական տնտեսագիտության՝ ուսումնասիրության ենթակա տերմինների մեջ ամենաբազմաճանաչում խումբն են կազմում բաղադրյալ տերմինները: Ըստ մասնագիտական գրականության տվյալների (անգլերեն, ռուսերեն և այլ լեզուների համեմատական տվյալներով)՝ ներկայումս տերմինակազմության արգասավոր միջոցներից պետք է համարել բաղադրյալ տերմինների կազմությունը: Չանդրադառնալով այդ տերմինների մասին եղած բազմաթիվ ուսումնասիր-

րություններին և տեսակետներին, այնուամենայնիվ նշենք մեր նկատառումները:

Բաղադրյալ տերմիններն ու ազատ բառակապակցությունները ունեն թե՛ կառուցվածքային, թե՛ քերականական ընդհանրություններ, որոնք էլ հիմք ընդունելով՝ մասնագետներից ոմանք դրանք նույնացնում են: Սակայն դատելով եղած նյութերից՝ բաղադրյալ տերմինները էապես տարբերվում են ազատ բառակապակցություններից, դրանք, կարծես, միջին դիրք են գրավում ազատ բառակապակցությունների և դարձվածաբանական կապակցությունների միջև: Մա արդյունք է կաղապարային կանոնավորության: Այսպես՝ եթե կա *դյուրփոխարկելի արժույթ*, ապա նույն կաղապարով կազմվում է *թերփոխարկելի արժույթ*, կամ՝ *լրիվ ծախսեր, միջին ծախսեր, վերադիր ծախսեր, հանձնառու ծախսեր, արտադրական ծախքեր* (ծախս - ծախք, չափ - չափս գուգահեռ ձևերը միակը չեն այս ոլորտում)³⁰: Ահա թե ինչն է հիմք տալիս մասնագետներին կարծելու, թե բաղադրյալ տերմինները ամեն անգամ նորից նոր չեն ստեղծվում, այլ իբրև պատրաստի ձև պահպանվում են գիտության տվյալ ոլորտի բառապաշարում: Բացի այդ, հասկացական առումով բաղադրյալ տերմինները նույնանում են միաբառ տերմինների հետ, բայց ոչ ամբողջովին: Նախ՝ կան տերմիններ, որոնց բաղադրիչները հնարավոր չէ գեղչել՝ բաղադրությունը դարձնելով մեկ բառ: Ապա՝ բաղադրյալները լայն հնարավորություններ են տալիս մայրենի լեզվով ճշգրիտ արտահայտելու օտարամուտ տերմին- հասկացությունը: Ուրախությամբ պետք է փաստենք, որ հենց այս ոլորտում գերազանցապես բոլոր տերմիններն են թարգմանվում, հենց սրանց շնորհիվ, և հենց այդ միջոցով է

³⁰ Սրանք Արդի հայերենի բացատրական բառարանում մեկնաբանվում են իբրև «նույնը» (Աղայան, ԱՀԲԲ, հ. 1, էջ 621 և հ. 2, էջ 1158 և 1160, Ե., 1976):

անադարտ մնում մեր մայրենին:

Ըստ բաղադրիչների քանակի՝ բաղադրյալ կամ բառակապակցական տերմինները ստորակարգվում են երկանդամ, եռանդամ, քառանդամ և հնգանդամ կառույցների:

Երկանդամ բաղադրյալ կառույցներ

Ուսումնասիրվող տերմինախմբում բաղադրյալ տերմինների երկանդամ կառույցը և՛ օրինաչափ դրսևորում ունի, և՛ ամենատարածվածն է բաղադրյալների մեջ: Բացի այդ, երկանդամները նաև որպես ելաբառեր են հանդես գալիս ավելի բազմանդամ՝ եռանդամ, քառանդամ բաղադրյալ տերմինների համար (ինչպես և մյուս բոլոր տերմինահամակարգերում):

Երկանդամ բաղադրյալ տնտեսագիտական տերմինների ձևաբանական կաղապարների մեջ ամենաարգասավորն ու կանոնավոր դրսևորվողը Ա+Գ կաղապարն է: Ի դեպ, նույն պատկերն է նկատվում այլ տերմինահամակարգերում (օրինակ լեզվաբանականում՝ ըստ Լ. Ղազանյանի): Այս կազմությունները, փաստորեն, բաղադրյալների 90%-ից ավելին են՝

*հոծ ձայնապնակ,
հոսքային գիծ,
ճարելիքի հաշիվ,
ստանալիքի հաշիվ,
ակտիվ սպորտավորություններ,
դյուրափոխարկելի արժույթ,
բորտայական միջնորդ,
զուտ ձեռնարկատիրության,
փայթեթավորող ձեռնարկություն,
զիջած բաժնետոմս* և այլն:

Բերված օրինակներն արդեն իսկ բավարար են ցույց տալու համար, թե ինչպիսի դեր են կատարում ածականները բաղադրյալ կառույցներում և ինչ բազմատեսակություններով են հանդես գալիս:

Տարբերակում ենք՝

ա) զուտ կամ «մաքուր» ածականներ՝

Ճշգրիտ կարգաբերում,

Ճկուն պահանջարկ,

միջին ծախսեր,

ակտիվ պարտավորություններ,

բ) ածականակերտ բոլոր ածանցներով սերված ածանցավոր ածականներ՝

հոսքային գիծ,

բորսայական միջնորդ,

գնային համակարգ,

բեկորային միաձուլումներ,

չեքային ծառայության,

առևտրական պարտք,

գ) բայանուն ածականներ՝

խթանող գործույթ,

վճարելի շահույթահարկեր,

վարձակալական վճար,

թվագրված իր,

փաթեթավորող ձեռնարկություն,

կառավարական լրավճարում,

ընկերակցական միություն:

Բերված և նման մյուս բաղադրյալ տերմինների մեջ ածականները հանդես են գալիս ոչ միայն ածականական բնորոշ դերով, այլև կոնկրետացնող, տարբերակիչ հատկանիշով: Բացի այդ, սրանց մեջ առանձնանում են **S** (տերմին) - \bar{S} (ոչ տերմին) զույգերը:

Այսպես $S + S'$ բորայական միջնորդ, դեպոզիտային հաշիվ, չեքային ծառայության, $\bar{S} + S'$ ձկուն պահանջարկ, կառավարական լրավճարում, թվագրված իյ:

Երկանդամ բաղադրյալ տերմինների մի մասն էլ կազմված է $Q+Q$ կադապարով՝

*դրամի իրացնելիություն,
խտրականության գոհեր,
պահանջարկի ճկունության,
ավանդատուների պաշտպանության,
կորուստի ռիսկ,
ռիսկի հաղթահայամ,
զնի առաջնորդության:*

Երբեմն, այլ տերմինահամակարգերում հեղինակները նշում են վերը բերված կառույցներում գոյականի թեք հոլովի և նույնահիմք ածականի հոմանիշության դեպքեր, որի հետ մենք համարձակվում ենք չհամաձայնել: Առանձին վերցրած այդ միավորները գուցե և ինչ-որ իմաստով հոմանիշ լինեն, բայց կոնկրետ համատեքստում, այն էլ մասնագիտական, դա բացառվում է. այսպես՝

զնի առաջնության = զնային առաջնություն,

կորուստի ռիսկ = կորուստային ռիսկ և այլ օրինակները խորհելու լուրջ տեղիք են տալիս:

Այս կառույցներում հանդիպում են նաև ժխտական ձևով ածականներ՝

հակամենատիրական օրենք,

չնախատեսված ռիսկ,

անկատար մրցակցություն,

անսահմանտիսկ կյանք:

Հազվադեպ են $\text{Թ} + \text{Չ}$ կադապարով կառույցները, օրինակ՝ *չորս ձեռնարկության կենտրոնական ցուցիչ*, իսկ - *ող* և - *ած* ածանցներով սերված միավորները տվյալ կոնկրետ համա-

կարգում մենք մտցրել ենք ոչ թե **Դ+Գ**, այլ **Ա+Գ** կաղապարի մեջ:

Այսպիսով, երկանդամ բաղադրյալ տերմիններում գերազանցում է **Ա+Գ** բառակազմական կաղապարը: Եվ, իբրև առանձնահատկություն տնտեսագիտական տերմինների, նշենք, որ բոլոր կաղապարներում էլ **Գ**-ի դերում գերադասում էին հոգնակի թվով գոյականները՝

հաստատուն ծախսեր,

դաշնակցային հրահանգներ,

ուղղահայաց միաձուլումներ,

սահմանափակիչ օրենքներ,

երաշխավորական վկայություններ,

արտերկրյա ներդրումներ,

գերադասելի բաժնետոմսեր,

արտաքին ֆոնդեր և այլն, և - ություն, - ում ածանցներով

կազմություններ՝

միանձնյա ձեռնարկություն,

ավանդատների պաշտպանություն,

մակլերային ծառայություն,

համերկրային կառավարություն,

արտոնատեր ընկերություն,

ճշգրիտ կարգաբերում,

ոիսկի հաղթահարում,

միանվագ օգտագործում:

Իհարկե, հանդիպում են նաև եզակիով կազմություններ՝

չեքային հաշիվ,

փոխսովորյալ փորձ,

եկամտային չափանիշ,

առևտրական մուրհակ,

վճարելիքի հաշիվ,

շրջանառու հոսք,

հոսքային գիծ:

Գ-ի գործառույթով հանդես են գալիս և ածանցավոր այլ
ձևեր՝

*բորսայական միջնորդ,
ավտոմատ պատկերագննիչ,
հավելադրային շահույթ,
բորսայական միջնորդ,
ավելցուկային առաջարկ և այլն:*

Եվ, դարձյալ ի տարբերություն մյուս տերմինահամա-
կարգերի, տնտեսագիտական բաղադրյալ տերմիններ էլ կան,
որ ունեն $\bar{S} + \bar{S}$ կառույցը՝

*հոծ ձայնապնակ,
համերկրային կառավարություն,
աշխատանքային խանդավառություն,
դաշնակցային հրահանգներ,* որոնց մեջ քիչ չեն
«համարձակ» նորակազմությունները՝
*աշխատավարձի զսպում,
աշխատավարձի շեղվածք,
անձամետ մշակույթ,
անմուծանք կենսաթոշակ,
անակնկալության տեսություն,
անաշատության սկզբունք* և այլն:

Եռանդամ բաղադրյալ կադապարներ

Այսպիսի տերմինները մեր ցանկում բազմաթիվ են.
Միայն *զուտ* բաղադրիչով 17 կապակցություն կա՝

*զուտ տնտեսական վարձավճար,
զուտ վերարտադրության գործակից,
զուտ ներդրման եղանակ,
զուտ շահույթի գործակից* և այլն:

Մյուս օրինակներից՝

նվազող հավելյուրդային օգտավետություն,

նվազող փոխհատուցման օրենք,

արտադրողականության ընդհանուր համահարթում,

հավելյադրային վերլուծությունների մեթոդ,

լրիվ փոփոխական ծախսեր,

միջին փոփոխական ծախսեր,

պահանջարկի եկամտային առաձգականություն,

չտարբերակված շուկայավարման ռազմավարություն և

այլն:

Բոլոր օրինակներում կանոնավորապես հանդես են գալիս գոյական գերադաս անդամով կադապարները՝ $U+U+Q$, $Q+U+Q$, $U+Q+Q$ ՝ տերմինի և ոչ տերմինի բոլոր գուգորդումներով՝ $S+S+S$, $\bar{S}+S+S$, $S+S+\bar{S}$:

Գլխավոր և երկրորդական բաղադրիչները բաղադրյալ տերմիններում (անկախ բաղադրիչների քանակից) գտնվում են գերազանցապես լրացում- լրացյալի հարաբերության մեջ: Լրացական հարաբերությունը բաղադրյալ այս տերմինների մեջ դրսևորվում է որոշային և հատկացական կապերով, և որքան մեծանում է միավորների թիվը, այնքան առաջնային է դառնում դրանց շարահյուսական և իմաստային վերլուծության անհրաժեշտությունը: Մեր նյութերում քառանդամ և հնգանդամ, նույնիսկ մեկ նախադասության օրինակ կա: Դրանք են՝

Քառանդամ տերմիններ՝

անկում ապրող արտադրաճյուղի ռազմավարություն,

անվանական համախառն ազգային արդյունք,

բարձր պահանջարկի սպառողական ապրանքներ,

աշխատողին բաժնետոմսեր տրամադրելու ծրագիր,

*աշխատողին ընկնող ավելացված արժեք,
հրական համախառն ազգային արդյունք,
մասնակիորեն վճարված բաժնետիրական միջոցներ* և
այլն.

Հնգանդամ տերմիններ՝

*մեկ աշխատողին ընկնող մեքենաներ ու սարքավորում,
շուկայավարման միջոցների չորս հիմնական
փոփոխականներ,
անսահմանափակ պատասխանատվությամբ բաց
բաժնետիրական ընկերություն,
առավել բարենպաստ կարգավիճակով երկրի դրույթ.*

Նախադասության օրինակ՝

Առաջին մուտքագրվածը առաջինն է դուրս մղվում:

Այսպիսով, կիրառական տնտեսագիտության տերմինների նման ուսումնասիրությունը հանգեցնում է կարևոր մի եզրակացության. այս տերմինահամակարգում գործում է օտար տերմինի հասկացությունը լիովին և ճշգրտորեն արտահայտելու միտում՝ անկախ բառերի քանակից: Դրանից հետո կաշխատի խնայողության և պարզեցման փուլը, որը, իհարկե, կսկսվի ամբողջ տերմինահամակարգը թարգմանված ունենալու դեպքում: Իսկ մեր ուսումնասիրությունը կարող է նպաստել տերմինները ճշգրտելու, հանձնարարելու և բառակազմական շղթայում բաց փուլեր վերհանելու գործընթացին:

2. Իրավաբանական տերմինների կառուցվածքային-իմաստաբանական վերլուծություն

Աշխատանքի այս մասը լրացնում է Ժամանակակից հայերենի տերմինահամակարգերի զարգացման միտումներին ուղղված մեր ուսումնասիրությունները՝ կիրառական տնտեսագիտության տերմիններ, հաշվողական տեխնիկայի տերմինահամակարգ:

Գիտության այս երեք ոլորտները՝ տնտեսագիտություն, հաշվողական համակարգեր և իրավաբանություն, վերջին տասնամյակներում ամենաարագ և ինտենսիվ զարգացողներից են, եթե համեմատում ենք այլ օրինակ, բժշկագիտության, երաժշտագիտության, մշակութաբանության տերմինաբանության հետ:

Եթե տնտեսագիտական տերմինների աննախադեպ աճը արդյունք է Հայաստանում տնտեսական նոր հարաբերությունների անցմանը, ապա իրավաբանական տերմինները բազմանում են ոչ միայն իրավական դաշտում նորանոր ճյուղերի երևան գալու արդյունքում, այլև այդ ոլորտի հասարակական կյանքի անխտիր բոլոր ճյուղերում իրենց առկայությամբ: Եվ եթե տնտեսագիտական տերմինների ուսումնասիրության ընթացքում մենք դիմել ենք հիմնականում ամերիկյան (անգլերեն) տերմինահամակարգից կատարված թարգմանություններին (քանի որ այդ բնագավառում նորամուծությունները հենց նշված երկրի գիտնականներինն էին), ապա իրավաբանական տերմինների պարագայում օգտվել ենք ոչ միայն իրավաբանական տերմինների ռուս - հայերեն և հայ-ռուսերեն բառարանների նյութերից, այլև

բազմաթիվ՝ իրավական բազմաբնույթ գրքույկներից, օրենսդրական ուղեցույցներից, պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի համար դասախոս Կարեն Քամալյանի կազմած դասընթացից: Ծանոթացել ենք նաև ՀՀ Արդարադատության նախարարության կողմից հրատարակված «Անգլերեն - հայերեն - անգլերեն» (փոխանակ՝ Անգլերեն - հայերեն, Հայերեն - անգլերեն) բացատրական բառարանի նյութերին (սա, ըստ էության, առանձին անդրադարձի կարիք ունի):

Այլ ոլորտների տերմինների համեմատ իրավաբանական տերմինների առավել լինելը բացատրվում է նրանով, որ մարդկային կյանքի ցանկացած բջիջ սկսած ընտանիքից, ամենափոքրիկ առևտրական կրպակից, վերջացրած պետությամբ՝ իր ամբողջության և բաղկացուցիչ օղակներով, պետական մարմիններով, գործում է իրավական շատ հստակ նորմերով, չի կարող իրավաբանորեն գոյություն ունենալ առանց որոշակի իրավական դաշտի մեջ ընդգրկվելու (այս ավանդույթը երկար դարերի պատմություն ունի, երբ հիշում ենք մարդկային մեղքերի համար Աստծո գերագույն դատաստանը):

Շուրջ 200-ի են հասնում իրավական դաշտի ոլորտները՝ քրեաիրավական, քրեական, քաղաքացիական- դատավարական, դատաքննական, դատաքննական - հոգեբուժական և այլն, որոնցից ամեն մեկն իր ենթաոլորտներով՝ սոցիալական-ապահովագրական, ամուսնական-ընտանեկան, հարկային, մաքսային, աշխատանքային, վարչական, հողային, գույքային, սահմանադրական, միջազգային և այլն: Սրանք այժմ հանդես են գալիս նաև «ինստիտուտ» վերտառությամբ. ինչպես՝ ***Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտ:***

Այս ամենն ուսումնասիրելը շատ երկար ժամանակ է պահանջել և դեռ պահանջում է (այդ տերմինների քանակը

հարյուր հազարների է հասնում), ուստի, խորհրդակցելով իրավաբան մասնագետների հետ, կազմեցինք իրավաբանական տերմինների, այսպես կոչված, **միջուկային** մի ցանկ, որը, նախ՝ ընդհանուր է վերը թվարկված բոլոր ճյուղերի ու միավորումների համար, ապա և ինչ-որ կերպ սահմանափակում և տեսանելի է դարձնում քննարկվող նյութը. սրանք ամենաառաջնական և կարևորության առումով անհրաժեշտ միավորներ են, որոնց ընտրությանը նպաստել է նաև դրանց հանրաճանաչությունը՝ **իրավաբան, դատարան, դատավոր, կատարածու, պաշտպան, մեղադրյալ, քննիչ, վերաքննիչ դատարան** և այլն:

Հիմնականում հենվել ենք Ա. Սարգսյանի և Ռ. Հակոբյանի «Իրավաբանական տերմինների և շրջասույթների ռուս-հայերեն բառարանի», մասնագիտական մի քանի այլ բառարանների վրա (ներառելով «Արդի հայերենի նորաբանությունների բառարանի», ինչպես նաև պարբերական մամուլից քաղված նյութերը) (տե՛ս գրականության ցանկը):

Ընտրված 3500 բառային միավորները նախ խմբավորել ենք ըստ՝ բուն իրավաբանական **դատական ատյան, հակընդդեմ հայց, ներում, համաներում, կալանք, բռնադատում** և այլն, որոնք գերակշռող մասն են կազմում, ապա և՛ **հարակից ու ոչ հարակից** գիտաճյուղերի միավորների բժշկագիտություն, տնտեսագիտություն, քաղաքականություն, ժուռնալիստիկա, դիվանագիտություն, լեզվաբանություն, եկեղեցական ու համագործածական և այլն՝ **հիվանդության թերթիկ, աճուրդ, ավանդ, սեփականատեր, հաշվեկշիռ, ձեռներեցություն, հարցազրույց, ճեպազրույց, հանրաքվե, ցույց, ընտրաթերթիկ, հավատարմագիր, պետական զինանշան, աստվածանարգություն, կրոնահանդուրժողականություն, ուխտադրժություն, հասարակաբանություն, ժարգոն, անգորություն, ժողով, թեթևամտություն, գրագողություն** և այլն:

Ուսումնասիրվող ցանկում առկա են, բնականաբար, մի քանի գիտաճյուղեր համատեղող տերմիններ՝ **անիշխանություն** - դատաիրավական, քաղաքական, վարչական, **դիվանագիտություն** - քաղաքական, դատաիրավական, **ապառակավորում** - տնտեսագիտական, իրավաբանական, քաղաքական, **օրեսդրություն**, **օրինագիծ** - իրավական, քաղաքական, վարչական և այլն, ինչպես նաև համընդհանուր, առօրյա գործածության բառեր՝ **աղմուկ, կռիվ, վեճ, խաղ, հաշիվ, ճառ, էլույթ, առիթ, վճարող, օգուտ, նպաստ** և այլն:

Անդրադառնանք քննարկվող բառերի կառուցվածքային հարցերին. նախ նշենք, որ մեր պետական իրավական համակարգը եռաստիճան դատական կառույց է՝

1. ընդհանուր ատյանի իրավասության դատարան,

2. վերաքննիչ դատարան,

3. վճռաբեկ դատարան՝ տերմինների ստորակարգային որոշակի հարաբերություններով՝ **դատախազ - գլխավոր դատախազ, ստորին ատյան - վերին ատյան, առաջին ատյանի դատարան - վերին ատյանի դատարան** և այլն, ինչը ստեղծում է կառուցվածքային բազմաբարդ կառույցներ:

Բառային բոլոր բաղադրությունները կազմված են հայերենի ածանցման ու բառաբարդման արգասավոր կաղապարներով, այլ հարց է, թե տերմինների այս համակարգում որ միջոցներն են ավելի հաճախական:

Պարզ (միաբառ) տերմիններ

Ի տարբերություն այլ համակարգերի՝ ուսումնասիրվող տերմինային այս խմբում մեծ թիվ են կազմում պարզ բառերը (152 միավոր), որոնցից սերվում են բազմաթիվ ինչպես ածանցավոր, այնպես էլ բարդ բառեր ու բառակապակցություններ՝ կազմելով բազմանդամ բառաբներ. օրինակ՝

գույք - գույքագրում, գույքագրություն, գույքացուցակ,

գույքահարկ,

գույքի (գույքային) վարձակալում,
գույքային ցուցակագրություն,
գույքային իրավունքներ,
գույքային հանցագործություններ.

ակտ - իրավաբանական ակտ,
օրենսդրական ակտ,

նորմատիվ ակտ - ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր,

քաղաքացիական կացության ակտեր,
պետական կառավարման մարմինների ակտեր,
պետական իշխանության մարմինների ակտեր և այլն:

Որոշ իրավաբանական տերմիններ **-ք** վերջնահնչյունն ունեն. այս ածանցը, ըստ Ս. Գալստյանի³¹ գործուն է **VR₁, NR₁, AR₁** կաղապարներում: Մեր նյութերում այդպիսիք են՝ **արգելք, անցք, արդյունք, արարք, դեպք, գույք, տուրք, գաղտնիք, կալանք, մեղք, մուտք, ընդերք, կարիք, օրենք, պարտք, զանցանք, վերք, հետք, զենք** միավորները, որոնք հետևյալն դասադասմանն ենք ենթարկել (հաշվի առնելով Ս. Ասատրյանի և Ս. Գալստյանի կարծիքները).

ա) մի մասում **-ք** -ն սուկ ձևական նշանակություն ունի՝ **մեղք, զենք, գույք, վերք, հետք, պարտք, օրենք, զանցանք,**

բ) երկրորդ մասում նույն **-ք** - ն ածականներից կազմել է գոյականներ՝ **գաղտնիք, հավաստիք, կեղծիք,**

գ) վերջին խմբում այն բայախիմքերից կազմում է գործողության անուններ, որոնք համատեղում են և՛ գործողության, և՛ առարկայական նշանակությունները՝ **արարք,**


³¹ Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 186-188 և Ս. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Ե., 2002, էջ 119:

արգելք, կալանք, մուտք, տուրք, հետք:

Ըստ ձևաբանական դասակարգման՝ պարզ բառերի խմբում կան ինչպես գոյականներ՝ **հայց, գործ, պահանջ, տվյալ, խուց, հողված, բողոք, պաշտպան, բացարկ** և այլն, այնպես էլ ածականներ ու մակբայներ՝ **բիրտ, բռի, վավեր, խարդախ, կեղծ, կույիտ** և այլն:

Մրանց մեջ նաև մշտական գործածություն ստացած փոխառություններն են՝ **ակցիա, աուդիտ, արխիվ, նոտար, կադաստր** (տեղեկացույց), **կոլեգիա, դոնոր, դոպե** (գործ):

Պարզ, միակազմ տերմիններն աչքի են ընկնում գործածության մեծ հաճախականությամբ, իմաստային ծանրաբեռնվածությամբ և տարատեսակ կիրառական ուղղվածությամբ. դրանք արգասավոր ձևով հանդես գալիս բառակազմական գործընթացներում՝ տերմինայնացման վստահելի հատկանիշով՝



Պարզ տերմինները, կազմելով հիմնականում գոյական գերադաս անդամով բառակապակցություններ, դրանցում գլխավորապես հանդես են գալիս հենց այդ գերադաս անդամի դերով՝

տույժ → վարչական տույժ
 կարգապահական տույժ
 գույքային տույժ
իրավունք → վարչական իրավունք,

քաղաքացիական իրավունք,
սահմանադրական իրավունք,
սովորության իրավունք և այլն:

Ածանցավոր տերմիններ

ա) նախածանցավորներ

Ուսումնասիրվող բառացանկի մեջ են բազմաթիվ ածանցավոր՝ *արդարացում, իրավարար, փաստարկ, խոսվություն, փաստարկում, հակընդդեմ*, համաձանցավոր՝ *անիշխանություն, համաներում, ներշնչում, ներխուժում, հակաճառում* և ուրիշ կազմություններ, որոնց կանդրադառնանք ստորև:

Մեծ է նախածանցավոր տերմինների թիվը. առկա են բոլոր նախածանցները՝ *ան* -ի գերակայությամբ՝ *անարժանահավատություն, անհավաստիություն, անմեղություն, անմեղսունակություն, անխուսափելիություն, անհամատեղելիություն, անվանառու, անհուսալիություն, անհերքելիություն, անհիմն, անպատժելիություն, անիշխանություն, անվասաբեր, անվստահելիություն, անպատվություն, անօտարելի* և այլն, որոնց մի մասը կիրառվում է կապակցված կազմություններում՝ գույքի *անհատույց* օգտագործում, գույքի *անհիմն* ձեռքբերում կամ խնայում, *անշարժ* գույք, հանցավոր *անգործություն, անպատասխանատու* արարք, պատժի *անխուսափելիության* սկզբունք, *անօտարելի* իրավունքներ, պատգամավորական / պատգամավորի, անձի, բնակարանի *անձեռնմխելիություն, անզիտակից* արարք, *անվստահության* քվե, *անժառանգ* գույք, աղադակող *անարդարություն, անսահման* իշխանություն և այլն:

Իրավաբանական տերմինահամակարգի ուսումնասիրվող խմբում զգալի են տերմինային հոմանշության դեպքերը՝

իրենց բազմապիսի դրսևորումներով՝ հիմնականում նախածանցավոր.

անբարեհուսություն=անվստահելիություն=անհուսալիություն,

աննախադեպ = անօրինակ = աննախընթաց,

անգթություն = անսրտություն,

անաշատություն=անկողմնապահություն=անկողմնակալություն,

անպատկառություն = անամոթություն,

անբաժանելիություն = անտրոհելիություն,

անտնտեսվարություն = անտնարարություն,

անզորություն = անկարություն,

նախաամուսնական = մինչամուսնական տարիք,

վերամիավորում = վերամիացում,

փոխներգործություն=փոխգործողություն=փոխազդեցություն=փոխհամագործակցություն և այլն:

Մի շարք տերմիններ, այդ թվում և ոչ նախածանցավոր, հանդես են գալիս միայն հոգնակիի ձևով՝ *անկարգություններ, նախադրյալներ, շահեր, տվյալներ, անվիճելի փաստեր, տեղեկություններ, վիճաբանություններ, վերընտրություններ, քննարկումներ, պահանջներ* և այլն:

Շատ են *հակա-* նախածանցով, այդ թվում՝ երկնախածանցավոր կազմությունները՝ *հակասառջարկ, հակապահանջ, հակափորձաքննություն, հականերկրում, հակընդդեմ պահանջ, հակընդդեմ հայց, հակընդդեմ պահանջների հաշվառում:*

Ապ(ա)- նախածանցով ունենք՝ *ապառազմականացում, ապագգայնացում, ապակուսակցականացում, ապատեղեկատվություն, ապաքաղաքականացում, համ(ա) - ով՝ համանմանություն, համաներում, համաժողով, համաժողովրդական* քվեարկություն,

չ- վերջածանցով՝ *չսպացուցվածություն, չհիմնավորվածություն, չիրազեկող, չհնազանդվել, չենթարկվել, չկիրառել*՝ ուժի չկիրառման սկզբունք, չճանաչել,

վեր(ա) - ուժ՝ *վերատեստավորում / վերաորակավորում, վերընտրություններ, վերանվանում / վերակոչում, վերազննություն, վերավարձակալություն, վերահաշվարկում, վերագրանցում, վերաբնակեցում, վերանայում* (դատավճռի վերանայում, դատական որոշումների վերանայում նոր ի հայտ եկած հանգամանքներով), *վերաքննություն* (դատական վերաքննություն), *վերահաշվառում*. գործուն են նաև մյուս բոլոր նախածանցները՝

արտ(ա) - արտահանում, *արտահաշվեկշռագիր, արտատնտեսական* հարկադրանք, *արտապայմանագրային* պատասխանատվություն,

ներ(ա) - *ներպետական* իրավական համակարգ, *ներպետական* երաշխիքներ, *ներդրումների* պահանջարկ

փոխ(ա) - *փոխկախվածություն, փոխհարաբերություն, փոխհատուցում,*

նախ(ա) - *նախահարձակում, նախահաշվարկ, նախահարկում* և այլն:

Նախածանցավոր այս կազմություններում գերակշռում են գոյականները. քիչ չեն ածականները՝ *անհիմն, անվնասաբեր, անհաշտ, անօտարելի, անզիտակից, անժառանգ, անզուսպ, անսահման* և այլն:

բ) վերջածանցավորներ

Վերջածանցավորների խմբում հատկապես արգասավոր են *-ում* և *-ություն* ածանցները. դրանցով կազմված տերմինները հաճախ նաև հոմանշություն են դրսևորում՝ *արդարացում, բողոքարկում, բռնազանձում, զղջում,*

իրավախախտում, ծանուցում, կալանավորում, կատարում, ներում, համաներում, հատուցում, փոխհատուցում, մեկուսացում, հարկադրում, բռնադատում, խափանում, խոշտանգում, վտարում, անմեղություն, անօրինակա- նություն, անձեռնմխելիություն, ապօրինություն, զրպարտու- թյուն, խուզարկություն և այլն. հումանշության օրինակներից են՝

*հարցաքննություն=հարցաքննում,
ձերբակալություն=ձերբակալում,
վերազննություն=վերազննում,
հափշտակություն=հափշտակում,
կարգադրություն=կարգադրում,
տնօրինություն = տնօրինում* և այլն:

Նշված, այլև ստորև բերվող ածանցավոր տերմինները ավելի ստույգ են արտահայտում ոչ միայն իրավաբանության, այլև դրա մասնավոր բնագավառի իմաստները:

Այսպես, - *արար*, - *ավոր*, - *ող*, - *(ա)գործ*, - *(ա)գետ*, - *(ա)բան*, *(ա)-կից*, -*որդ*, - *յալ*, - *իչ*, գործող անձ ցույց տվող ածանցներով, այլև - *արան*, - *անք*՝ տեղ ցույց տվող ածանց- ներով են ստեղծվում այն տերմինները, որոնք արտահայտում են բուն իրավաբանական, դրա հիմնական հասկա- ցությունները՝ *դատարան*, *մեկուսարան*, *հալածանք*, *կա- լանք*, *մեղադրանք*, *փրկանք*, *իրավարար*, *հաշտարար*, *կտա- կարար*, *կալանավոր* / *բանտարկյալ*, *դատավոր*, *հայցվոր*, *միջնորդ*, *դիտորդ*, *մեղադրող* (պետական մեղադրող), *հայցող*, *մեղադրյալ*, *պատասխանող*, *դիմող*, *քննիչ*, *հետաքննիչ*, *մատնիչ*, *ամբաստանիչ*, *ամբաստանյալ*, *զրպարտիչ*, *վերա- հսկիչ*, *կողոպտիչ*, *հանցագործ*, *ոճրագործ*, *իրավագետ*, *իրա- վաբան*, *գործակից*, *հանցակից*, *մեղսակից* և այլն:

-*Մոլ* ածանցակերպով են կազմված՝ *ազգայնամոլ*, *թմրամոլ*, *խաղամոլ*, *թունամոլ*, *ձևամոլ*, *գործամոլ*, *կնամոլ*

դատապարտելի տերմին - հասկացությունները:

Նախաձանցավերջաձանցավոր իրավաբանական տերմիններին անդրադարձանք նախաձանցավորների մասում. նկատելի էր, որ այս խմբում հաճախական էին

Ն (նախաձանց)+ հիմք + - ում, *վերալսում*,

Ն +Ն + հիմք + - ում` *փոխներգործում*,

Ն + հիմք + - ություն` *վերազննություն*,

Ն + հիմք + - իչ` *հետաքննիչ*,

Ն + հիմք + - ող` *վերահսկող*,

ինչպես նաև **Ն** + հիմք + - ական + - ություն` **անօրինականություն**,

Ն+հիմք+-ելի+-ություն` **անձեռնմխելիություն** բառակազմական կաղապարները:

Բարդ տերմինները հիմնականում հոդակապավոր կազմություններ են (գերազանցապես ա հոդակապով)` *ծանուցագիր, իրավագոր, երաշխագիր, հայտարարագիր, հայցատեր, հայցադիմում, հանցագործ, ոճրագործ, չարագործ* և այլն, թեև հանդիպում են նաև անհոդակապներ` *դոնրաց, դոնփակ*: Բաղադրիչները, ըստ խոսքիմասային պատկանելության, հետևյալ կաղապարներն են ներկայացնում.

Գ+Գ, Գ+Բ, Գ+Ա, Բ+Գ, Ա+Բ:

Բարդ տերմինների բաղադրիչները կարող են լինել ինչպես Տերմին – ոչ Տերմին (իրավագոր), այնպես էլ ոչ Տերմին – ոչ Տերմին (դրամաշնորհ):

Բարդաձանցավոր տերմիններ

Այս խմբում ևս գերազանցում են **-ում** և **-ություն**-ով կազմությունները` *բռնազանձում, իրավախախտում, բռնադատում, փոխհամագործակցություն, հակափորձաքննություն, արտապայմանագրային, հետաքննիչ* և այլն, ընդ որում,

գուգահեռ ձևերի առկայության դեպքում գերադասելի են –
ուրյուն - ով միավորները՝ **հարցաքննություն=հարցաքննում,**
ձերբակալություն=ձերբակալում:

Բարդաձանցավորների մեջ հանդիպում են ժխտական նախաձանցներով միավորներ՝ **անարժանահավատություն,** **ապատեղեկատվություն,** **անձեռնմխելիություն** և այլն:

Բաղադրյալ (բառակապակցական) կազմություններ

Իրավաբանական տերմինների՝ ուսումնասիրության ենթակա բառացանկի մեջ ամենամեծ ու բազմատեսակ խումբն են կազմում բաղադրյալ տերմինները: Սրանք, որ միջանկյալ դիրք են գրավում ազատ բառակապակցությունների ու դարձվածայինների միջև, հեշտությամբ են ենթարկվում կաղապարային կանոնարկման. ամեն անգամ նորից նոր չեն ստեղծվում, այլ որպես պատրաստի ձև՝ իրենց կայուն տեղն են զբաղեցնում գիտության տվյալ ոլորտի բառապաշարում: Դրանք հասկացական առումով մոտենում են միաբառ տերմիններին, բայց ամբողջովին չեն նույնանում դրանց հետ. ավելի հստակորեն են արտահայտում անհրաժեշտ իմաստը՝ մեկ անգամ ևս հաստատելով մեր այն տեսակետը, թե մայրենի լեզվում գերադասելի է ունենալ բազմանդամ կառույց՝ օտար մեկ բառի դիմաց, միայն թե կատարվի լիարժեք իմաստային փոխանցում:

Այս տերմինահամակարգում նույնպես ավելի հաճախական են երկանդամ, եռանդամ, ավելի քիչ՝ քառանդամ, հնգանդամ կառույցները:

Երկանդամներից են՝
անմեղության կանխավարկած,
աղաղակող անարդարություն,
գույքային տույժ,

*գրավոր վկայություն,
դատավճռի կայացում,
դատավարական երաշխիքներ,
դոնբաց դատավարություն,
վճռաբեկ բողոք,
քաղաքացիական իրավունք,
սահմանադրական իրավունք,
փաստաբանական ծառայություն,
վարչական պատասխանատվություն,
հակընդդեմ հայց,
պատժի փոխարինում,
իրավունքի չարաշահում,
հսկողական վարույթ* և այլն:

Այլ տերմինահամակարգերի պես (լեզվաբանական, տնտեսագիտական)՝ երկանդամ իրավաբանական տերմինների շուրջ 90% -ը **Ա+Գ** ձևաբանական կաղապարն ունի. այլ հարց է, թե ինչպիսի գոյականներ ու ածականներ են այստեղ հանդես գալիս: Բերված օրինակների մեծ մասում (մենք փորձել ենք այս կազմով ներկայանալի դարձնել ամբողջ եղածը) - **ական, - ավոր, -ային** ածանցներով կազմված ածականներ են. կան անաձանց (**դոնբաց, վճռաբեկ**), ինչպես նաև բայանուն ածականներ (**աղաղակող, հուշող - կողմնորոշող**): Իսկ գոյականների տեղում ունենք ինչպես պարզ՝ **հայց, բողոք, տույժ** և այլն, այնպես էլ աձանցավոր միավորներ: Առկա է **Գ սեռ. հ.+ Գ բայանուն** կաղապարը նույնպես **դատավճռի** կայացում, **պատժի փոխարինում, իրավունքի չարաշահում** և այլն:

Երկանդամ այս կառույցներում բոլոր ածականները հանդես են գալիս կոնկրետացնող, մասնավորող, տարբերակիչ դերով. սրանց մեջ հատկանշական են ավելի շատ Տերմին + Տերմին (**վճռաբեկ դատարան**), ապա և՛ ոչ Տերմին +

Տերմին (օդային իրավունք), Տերմին + ոչ Տերմին (փաստաբանական միություն) զույգերը:

Բազմաբաղադրիչ՝ եռանդամ, քառանդամ և ավելի մեծ կառույցների օրինակներն են՝

եռանդամ՝

աշխատանքային պայմանագրի դադարեցում,

դատական պաշտպանության իրավունք,

զինված հանցավոր խումբ,

դատական նիստի նախագահող,

նախկին վիճակի և իրավունքների վերականգնում,

քառանդամ՝

դատական ակտերի հարկադիր կատարող,

երդվյալ ատենակալների դատարանի վճիռ,

ապօրինի գրավված գույքի վերադարձում,

մեղադրական դատավճռի կատարման վաղեմություն,

անչափահասների ներգրավում հանցավոր գործունե-

ության մեջ,

քաղաքացիական գործով վարույթի կարճում.

հինգ և ավելի անդամներով կապակցություններից են՝

ընտրողների ցուցակներում անձշտությունների

վերաբերյալ բողոք,

ընտրական ցուցակներում առկա անձշտությունների

վերաբերյալ բողոք,

իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի

հաստատում,

իրենց ցանկալի արդյունքին հասնելու նպատակով պետական իշխանության մարմինների վրա իրավաբանական և ֆիզիկական անձանց ազդեցություն, անձի կյանքի, առողջության, ազատության և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ, ուղղիչ աշխատանքային

հիմնարկի աշխատանքը կազմալուծող գործողություններ, ապրուստավարձ վճարելուց կամ երեխաներին պահելուց չարամտորեն խուսափում:

Թվարկված, այլև մեր նյութերում եղած բոլոր բազմանդամ կառույցներում կանոնավորապես հանդես են գալիս գոյական գերադաս անդամով կաղապարները՝ Ա+Գ+Գ, Ա+Ա+Գ, Գ+Գ+Գ՝ Տերմինի և ոչ Տերմինի բոլոր զուգորդումներով:

Բաղադրյալ տերմիններում գլխավոր և երկրորդական բաղադրիչները գտնվում են լրացական տարբեր հարաբերություններում՝ որոշչային, հատկացուցչային և այլն: Եվ որքան մեծանում է միավորների քանակը, այնքան առաջնային է դառնում դրանց շարահյուսական և իմաստային վերլուծության անհրաժեշտությունը:

Այսպիսով, իրավաբանական բազմաբնույթ, հարատև աճող տերմինների ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ ժամանակակից հայերենում գործում է տերմինի միտքը ճշգրտորեն արտահայտելու միտումը՝ անկախ բառային միավորների քանակից (բառակազմությանը նվիրված գիտական բոլոր աշխատությունները՝ սկսած Մ. Աբեղյանից, փաստում են, որ այս բաղադրությունները ժամանակի ընթացքում հանգում են մեկ՝ բարդ բառի):

Այսպիսի ուսումնասիրությունը ոչ միայն կանխանշում է տերմինաբանության զարգացման միտումները՝ այդ ընթացքում բացահայտելով արգասավոր բառակազմական կաղապարները, այլև նպաստում է այդ համակարգի տերմինների ճշգրտմանը, միօրինակացմանը:

3. Համակարգչային տերմինաբանության ձևավորումը հայերենում (բառակազմական-իմաստաբանական վերլուծություն)

Համակարգչային բազմահազարանոց տերմինահամակարգը ձևավորվել է վերջին տասնամյակներում և համարվում է նորագույններից ու զարգացման արագությամբ նախադեպը չունեցող համակարգերից մեկը: Ներկայանում է որպես թարգմանություն՝ գերազանցապես անգլերենից և ֆրանսերենից՝ ուղղակի, ռուսերենից՝ միջնորդավորված: Այս տերմինահամակարգը սպասարկում է ոչ միայն համակարգչային ամենատարբեր ծրագրերին ու դրանց նկարագրմանը, օրինակ՝ Արևելահայերենի ազգային կորպուսին, թարգմանչական UNL համընդհանուր ցանցային լեզվին, ABBY համակարգին և այլն, այլև բուն համակարգչային տարրական ու բարձրագույն ուսուցման դասընթացներին, ուսումնական և գիտամեթոդական ձեռնարկներին. այն համարվում է համակարգչի հետ աշխատելու յուրատեսակ ենթալեզու կամ մետալեզու:

Մակայն մինչ այսօրվա՝ ներկա վիճակի ներկայացումը հարկ ենք համարում համառոտ անդրադառնալ այդ ոլորտի նախնական բառապաշարին՝ պատկերացում կազմելու, թե ինչ հսկայական աշխատանք է կատարվել համակարգչային տերմինաբանության ձևավորման ճանապարհին:

Համակարգչային տերմիններին մենք անդրադարձել ենք պարբերաբար՝ սկսած 2007 թվականից՝ ցանկություն ունենալով ուսումնասիրել, ի մասնավորի, *Ինտերֆեյսի* (միջերեսի) հայերեն տարբերակը և վերլուծել հրապարակի վրա եղածը (քանի որ տերմինների ողջ համակարգը դեռ թարգմա-

նության գործընթացում էր)³²:

Ինտերֆեյսը ԷՀՄ-ն ցուցասարքին միացնող հաղորդալարերի (նաև ցուցասարքերի) համակարգ է³³, որի լեզուն մեր հանրապետության պատկան մարմինները դարձրել էին հայերեն ու զցելով համացանց՝ հանձնել օգտվողների լայն շրջաններին: Ի՞նչ էր այն ներկայացնում:

Նշենք, որ ցանկացած մասնագիտական բնագավառ, որպես գոյության պարտադիր պայման, տերմինների մշակված, հղկված տերմինահամակարգով է ներկայանում. Վերջինս, ինչպես իմաստային, այնպես էլ կառուցվածքային տեսակետներից ունի իր առանձնահատուկ նկարագիրը: Մի դեպքում գերակայում կամ հաճախական են, ասենք, *-ում* ածանցով կազմված բայանունները, օրինակ՝ *բեկանում, արդարացում, վավերացում, ներում, համաներում* և այլն (ակնհայտ է, որ խոսքը իրավաբանական տերմինների մասին է), այլ դեպքում դարձյալ նույն բառակազմական մասնիկի առկայությամբ՝ *անզգայացում, բորբոքում, ցնցում, մերսում, ներարկում* և այլն (սրանք էլ բժշկական տերմիններ են), այլև *-ություն* ածանցով կազմված *շնչարգելություն, ամլություն, սակավարյունություն, անքնություն, ցրտահարություն*³⁴ և այլն (դարձյալ բժշկական տերմիններ). Այս շարքը կարելի է շարունակել՝ այն լրացնելով ինչպես մեր կողմից մանրամասն ուսումնասիրված կիրառական տնտեսագիտության, այնպես էլ մեր գործընկերների կողմից ուսումնասիրված լեզվաբանական, երաժշտական, շինարարական և այլ բնագավառների տերմիններով:

³² Այս մասին մանրամասն տե՛ս Ջահուկյանական ընթերցումներ-2007:

³³ Տե՛ս Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Ե., 1988, էջ 192:

³⁴ Օրինակները քաղել ենք Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի Ուղեցույցներից, Մարսել, 2002, էջ 35:

Դրանցից ամեն մեկը խիստ կարգավորված է թե՛ իմաստային, թե՛ կառուցվածքային տեսակետներից, և հետագա համալրումները կատարվում են լեզվական համապատասխան կադապարներով:

Այսինքն, ունենալով տերմինների ու տերմինահամակարգերի ուսումնասիրությանն ու նկարագրմանը նվիրված կայացած ավանդույթներ՝ այս նոր ոլորտի պարագայում ամեն ինչ սկսեցինք զրոյից, քանի որ հարցն այլ կերպ էր ներկայանում, օրինակ, *Ինտերֆեյսի* (միջերեսի) դեպքում, ուր ունեինք այսպիսի հայերեն.

1. Ծրագրի մատչումը և լռելյայնները. սրա գործառույթն է՝ «Ընտրում է որոշակի գործողությունների (օրինակ՝ Ոստայնի գննման կամ էմակների (հավանաբար՝ նամակների՝ Ս. Տ.) ուղարկման) համար **լռելյայն ծրագրեր**, որոնք մատչելի են Մեկնարկային ցանցից, սեղանից և այլ տեղադրություններից»:

2. Պիտույքներ

ա) բառատեսր, որը ստեղծում և խմբագրում է բարդ ձևաչափով գրվածքային փաստաթղթերը,

բ) համաժամել. սա արդիացնում է անգիծ խմբագրած նյութերի, օրինակ՝ փաստաթղթերի, օրացույցների, էլեկտրոնային ուղերձների ցանցային պատճենները,

գ) հետախույզ-ը ցուցադրում է համակարգչի նիշքերը և պանակները,

դ) հրամանի հուշակ-ը կատարում է գրվածքային (հրամանատողային) գործառույթներ:

3. Այս համակարգչում պահեստավորված նիշքեր:

4. Համօգտագործած փաստաթղթեր (պարունակում է համակարգչի օգտվողների միջև համօգտագործած նիշքերը և պանակներ):

5. Կոշտ սկավառակավարներ:

6. Սարքեր հեռացվելի պահեստով:

7. Մանրամասներ. այս հատվածը ցուցադրում է չափ, նիշքի տիպ և այլ տեղեկույթ՝ ընտրված միույթի մասին:

8. Տեղափոխում է ընտրված միույթները ձեր ընտրված տեղը: Ստորև ընդգծված «տերմինները», «տերմինային կապակցություններն» ու «նախադասությունները» հիմնականում հրահանգներ են. թվենք ոչ մեծ մի ընտրանի՝ ինտերֆեյսի լեզվի մասին պատկերացում կազմելու համար.

մեկնարկել	քաշել պանակը
միացքներ	ընտրված միույթ
արդիացնել	սկավառակի ապամասնատիչ
տեղեկույթ	ծրիչի և տեսախցիկի մոզ
մատչում	սարքերի պատկերակներ
լռելյայն	ուժգնության կառավար
գործունություն	հրամանի հուշակ
փչուկ	դեպքերի դիտակ
հետախույզ	բարդ ձևաչափով
ուղարկել	կոշտ սկավառակավար
տեղադրություններ	խմբագրած նյութեր
միույթ	համաժամել
նիշք	սարքեր հեռացվելի պահեստով
պանակ	գրվածքային փաստաթղթեր
ոստայն	դիտել համակարգչի տեղեկույթը
համոզուագործած նիշքեր և պանակներ	
գրվածքային (հրամանատողային) գործառույթներ	
ուղարկում և ստանում է էլ-փոստ և լուրախմբի ուղերձներ:	

Ակամայից հիշում ես Հովհաննես Թումանյանի՝ իր ժամանակին զայրությով գրած հետևյալ տողերը. «Շատ անգամ հայերեն գրածը, եթե ռուսերենից է թարգմանած, պիտի նորից ռուսերենի շուռ տաս, որ հասկանաս, թե ինչ է

ուզում ասել գրողը»³⁵:

Մեր պարագայում պիտի անգլերենի շուտ տալ, նախ՝ հասկանալու տերմինների իմաստը, դրանց գործառույթները և ապա քննելու վերջիններիս կառուցվածքը: Ինչևէ, այս՝ երեք տասնյակի հասնող տերմինները ըստ բառակազմական ուղղվածության այսպիսին են.

ա) անորոշ դերբայով արտահայտվածներ՝ *արդիացնել, մեկնարկել, ուղարկել, համաժամել, չեղարկել, դուրս գրվել, տեղակայել, նիքիել* (կան նաև՝ *որոնել, դիտել, հավելել, հեռացնել* և այլ կանոնավոր ու տեղին և ըստ նպատակի բառագործածություններ, որոնց թիվը փոքր է). սրանք՝ -ել-ով կազմությունները, օրինաչափ են ճշգրիտ գիտությունների համար (հիշենք մաթեմատիկական՝ *ապացուցել, արտածել, գումարել, սահմանել, վերածել, հանել* ու այլ տերմինները),

բ) - ում գոյականակերտ ածանցով կազմվածներ՝ *աջակցում, կապակցում, համօգտագործում, ընտելացում, մատչում,*

գ) -ույթ - ով կազմություններ՝ *տեղեկույթ, միույթ,*

դ) -ություն ածանցով՝ *գործունեություն, տեղադրություն,*

ե) -ք -ի օգնությամբ՝ *նիշք, միացք, տեսք* և այլն, ինչպես նաև այսպիսի կազմություններ՝ *կարճատ, պանակ, հուշակ, ռստայն, հետախույզ, ընտրյալներ:*

զ) -ավար - ածանցով կազմված միակ *սկավառակավար* տերմինը, որն այստեղ հանդես է գալիս «գործիքի» իմաստով, չկա Էդ. Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»:

Ինչ եզրակացության կարելի էր հանգել այդպիսի կազմությունների ուսումնասիրությունից.

Հայերեն չէին ոչ միայն տերմինները, այլև նախադասու-

³⁵ Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Ե., 2006, էջ 15:

թյունները ինչպես կառուցվածքի ու շարադասության, այնպես էլ իմաստային տեսակետներից. Ահա այդպիսի մի քանի օրինակ.

Ընտրեք այս տուփը, որպեսզի միայն դուք մատչույթ ունենաք,

Տեղափոխում է ընտրված միությունները ձեր ընտրված տեղը,

Առկա միացքների ցուցակը դիտելու համար կտտացրեք այստեղ,

Ուղարկում և ստանում է էլ-փոստ և լուրախամբի ուղերձներ,

Այս խնդիրները գործադրվում են ընտրված նիշերին ու պանակներին,

Ցուցադրում է նիշեր, պանակներ, ծրագրի կարճատևներ և միություններ սեղանի վրա և այլն:

Առկա էին սխալ բառագործածություններ, օրինակ, *արդիացնել*-ը էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ներկայացված է տե ս *արդիականացնել* հանձնարարականով, *մատչում*-ը, որ *մատչելի*, *հասանելի դարձնելն* է այս պարագայում և առհասարակ, կարելի էր ավելի խելամիտ բառային միավորով ներկայացնել, *լուրախամբ* - ը, որն ըստ երևույթին լուրերի խումբն է, նույնպես բառակազմական ճիշտ կաղապարով պիտի կառուցվեր և այլն:

Ածանցավոր ոչ ճիշտ կազմությունների օրինակներ.

Սկզբնականվար -ը -ավար ածանցով կազմված միակ ոչ անձ ցույց տվող տերմինն է ըստ «Հայոց լեզվի հանգաբառարանի» տվյալների³⁶. բոլոր առկա կազմությունները՝ *ապարատավար*, *մեքենավար*, *վագոնավար*, *կռունկավար*, *հաղորդավար*, *էքսկուրսավար* և այլն, գործող անձեր են:

³⁶ Հայոց լեզվի հանգաբառարան, Ե., 1976, էջ 537-538:

Եվ վերջինը, բայց ոչ երկրորդականը, մտահոգությունն էր, թե որքան անտարբեր պետք էր լինել մայրենի լեզվի, անպատասխանատու նրանում ներդրվող նոր տերմինահամակարգի նկատմամբ, որ առանց որևէ իրավասու կազմակերպության կամ մասնագետի հետ խորհրդակցելու համացանց ներմուծել այսպիսի, մեղմ ասած, անհեթեթությունը:

Սակայն Microsoft ընկերությունն ու նրա հայկական գրասենյակի ղեկավար Գրիգոր Բարսեղյանը համապատասխան պայմանավորվածությամբ համաձայնության էին եկել Հայաստանում իրականացնել Windows-ի հայկական տարբերակը, որը հայկական շուկայում պիտի հայտնվեր դեռևս 2007թ. ամռանը, իսկ Microsoft Office 2007-ը՝ մինչև նույն թվականի վերջը, մինչդեռ հարցը ձգձգվեց մինչև 2010-ի թողարկումը, երբ Microsoft Office 2010-ը կարծես թե հասանելի է դառնում հայերեն, բայց ինչ իմաստով. անվճար ներբեռնելով Microsoft-ի պաշտոնական կայքում տեղադրված հայերեն միջերեսի (interface) փաթեթը օգտատերերը ստանում են նաև սրբագրիչ: Այսինքն, ուղղագրական սխալով կամ գոյություն չունեցող հայերեն բառ գրելիս դուք կտեսնեք կարմիր ընդգծում, իսկ աջ-քլիքի դեպքում՝ ճիշտ տարբերակների առաջարկներ.³⁷

Այսօր, արդեն 2016 թ., վերը հիշատակված գրասենյակը մեծ արագությամբ է ծավալում իր գործունեությունը՝ հաշվի չառնելով մեզանում առկա համակարգչային տերմինաբանությունն արտացոլող մի շարք բացատրական, թարգմանական բառարաններ, համակարգչային դասընթացներ, առանձին ցանկեր, աշխատություններ:

2004թ. լույս է տեսել Խաչիկ Գրիգորյանի «Անգլերեն –

³⁷ www.lezu.am:

հայերեն համակարգչային եզրերի բառարանը», որը պարունակում է համակարգչին և համացանցին վերաբերող շուրջ 10000 եզր: Այս բառարանը արժեքավոր է նախ նրանով, որ տրվում է անգլերեն տերմինի ձևաբանական բնութագիրը, որ հատկապես կարևոր է անգլերենի դեպքում, ապա և նրանով, որ թարգմանությունից հետո հիմնավոր բացատրություն է տրվում, ու բերվում են այդ բառով կազմված կապակցությունները. օրինակ՝

«**alert** *n* **զգուշացում** զգուշացման ազդանշան, որն ուղարկվում է ծրագրակազմի կողմից՝ զգուշացնելու անձին կամ աշխատածրագրին, որ տեղի է ունեցել սխալ կամ առկա է խնդիր,

alert box զգուշացման պատուհան,

alert condition զգուշացման վիճակ,

network alert ցանցային զգուշացում»³⁸ և այլն:

2000 թվականից գործածության մեջ է էդուարդ Ղազարյանի և Արթուր Ստեփանյանի «Ինֆորմատիկա. ինտերնետ (անգլերեն – ռուսերեն – հայերեն) բացատրական բառարանը» շուրջ 4000 նորագույն տերմիններով՝ ինֆորմատիկայի, հաշվողական տեխնիկայի, համակարգչային ցանցերի և համացանցի բնագավառներից:

Այս եռալեզու բացատրական բառարանը տերմինը հասկանալու, ըմբռնելու յուրովի միջոց ունի՝ միջանկյալ ռուսերենը. տպավորություն է ստեղծվում (զոնե մեզանում), թե տերմինները հիմնականում ռուսերենից են թարգմանված. այսպես՝

«**modifier** - 1. модификатор, индексный регистр, константа переадресации **վերափոխիչ, ինդեքսային ռեգիստր,**

³⁸ Գրիգորյան Խ., Անգլերեն-Հայերեն համակարգչային եզրերի բառարան, 2-րդ հրատ, Ե., 2004, էջ 2:

վերահասցեավորման հաստատուն: управляющий параметр - կառավարող պարամետր, կամ **Modifier key** - клавиша - модификатор - ստեղն - վերափոխիչ³⁹:

Եթե առաջին դեպքում հեղինակի նպատակն է եղել այս կարևոր ոլորտի համար հնարավորինս հայերեն ու միասնական եզրաբանություն ստեղծել և դրանց ճշգրիտ բացատրությամբ օգնել համապատասխան հասկացությունները հնարավորինս հեշտ ընկալել, ապա երկրորդ դեպքում բառարանի հեղինակները ձգտել են նաև առավել դժվար թարգմանվող տերմինները բացատրել: Թե որքանով է նրանց այդ հաջողվել, կարելի է դատել արդյունքներից:

Ուսումնասիրության համար ընդգրկել ենք նաև Ռ. Թարումյանի «Զրույցներ համակարգչի մասին, Պատմություն, Նկարագրություն, Տեղեկատուներ» աշխատանքը, որը ուշագրավ է ոչ միայն ասելիքով, այլև համակարգչային տերմինների բառարանով. վերջինս կազմվել է արդեն եղած նյութի հաշվառմամբ, հեղինակի անհատական մոտեցմամբ ու մտածողությամբ:

Մեր ուսումնասիրության մեջ, ըստ էության, հիմք ենք ընդունել այս ցանկը մյուսների զուգադրմամբ՝ որոշակիության հասնելու համար: Միայն մեկ օրինակ բերենք՝ ցույց տալու համար այս հեղինակի մտածողության ու մոտեցման ընթացքը.

<i>«access</i>	Access բառը հաճախ
1. մատչում, մուտք	թարգմանվում է «մուտք»: Մակայն
2. մատույց,	շատ դեպքերում դա անհնար է:
<i>access point</i> մատչման	Օրինակ՝ <i>access point</i> -ի դեպքում
կետ	«մուտքի կետ» անհարմար է

³⁹ Տե՛ս Ղազարյան Է., Ստեփանյան Ա., Ինֆորմատիկա: Ինտերնետ: Անգլերեն-Ռուսերեն-Հայերեն բացատրական բառարան, Ե., 2000, էջ 131:

accessibility
մատչելիություն,
հանրամատչելիություն
accessible մատչելի,
հանրամատչելի
accessing մատչում
accession մատչում,
մուտք
accessor մատչիչ
accessway մատչում,
մատույց»⁴⁰

թարգմանել: Մյուս կողմից, ունենք
accessibility բառը, որը
միարժեքորեն թարգմանվում է
«մատչելիություն»: Սրանից
հետևում է, որ *access* բայը կարող է
թարգմանվել «մատչել», իսկ
նույնանուն գոյականը՝ «մատչում»,
որոնք ծագում են «մատ»
«մոտենալ» արմատից, որը երբեմն
կցում են նույն «մուտ» արմատին:
Այնուամենայնիվ սովորական
«մուտք» տարբերակը նույնպես
կարող է համապատասխան
դեպքերում գործածվել: Օրինակ՝
accession գոյականի դեպքում:

Աշխատանքի լիակատարության նպատակով ջանացել ենք ընդգրկել Հայաստանում և նրա սահմաններից դուրս հրատարակված նյութերը ևս. Արևմտահայ աշխարհաբարի՝ եզրաբանական խորհրդի կազմած «Ուղեցույց, Ա - ից և Բ - ից» անգլերեն - արևմտահայերեն և ֆրանսերեն - արևմտահայերեն համակարգչային եզրեր, ինչպես նաև «Լեզվաշխարհ» պարբերականի անդրանիկ համարում մեկ էջով ներկայացված համակարգչային տերմիններից (տե՛ս գրականության ցանկը): «Ուղեցույցի» դեպքում, բնականաբար, հարկ է լինում ընտրողաբար քաղել նյութը, քանի որ մեր հասկացական դաշտերի մեջ առկա է որոշակի տարբերություն. բերենք մի քանի օրինակ՝

«**analog** - **հանգոյն, հանգունական** (արևելահայերենում

⁴⁰ Տե՛ս Ռ. Թառումյանի կայքէջում տեղադրված Ջրույցներ համակարգչի մասին գրքի բառարանը:

ունենք՝ նմանակ)

cursor - նշիչ

databank - տեղեկադարան

disk operating system (D.O.S.) սկավառակի վարիչ

(արևելահայերենում ասում ենք **սկավառակավար**)

fax - հեռապատճեն

file - տոմսածրար»⁴¹ և այլն:

«**control** - կառավար, հսկիչ, հսկում (ո՞րն է

նախընտրելի)

provider - տրամադրող, մատուցող (ո՞րն ընտրել և ո՞ր դեպքում)

user name - մուտքանուն, օգտվողի անուն»⁴² (առաջինը անհաջող է) և այլն:

Մենք կարևորում ենք նաև իր տեսակի մեջ առաջինը՝ Բ. Ջանփոլադյանի «Քոմփյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքներ» բուհական դասընթացը, ինչպես շարադրանքի լեզվի, այնպես էլ գրքում զետեղված բացատրական և ենթատեքստային բառարանների առումներով: Գիրքն ինքնին արժեքավոր լինելով՝ շատ է տուժում շարադրանքի լեզվի առումով, որը կրում է ռուսերենի լեզվամտածողության դրոշմը. ահա մի մեջբերում. «1995 թվականին թողարկվել է Windows 95 նոր օպերացիոն համակարգը, որտեղ կատարելագործված են նախորդ համակարգի՝ Windows 3.1-ի, կազմակերպական հիմնադրույթները և տրամաբանական սկզբունքները: Windows 95-ի ինտերֆեյսը և գործիքամիջոցները դարձել են փաստացի ստանդարտ և, հաշվի առնելով համակարգի ներքին հնարավորությունները,

⁴¹ Տե՛ս Ուղեցոյց Ա, Էջ 60 :

⁴² «Լեզվաշխարհ», ժողովածու, պրակ 1, հունվար-փետրվար, Ե., 2011, էջ 44 - 45:

տարածվածությունը, ինչպես նաև սպառողական շուկայի ինտեգրիան և նոր հիմնադրույթների ներմուծման բարդությունները, այդ միջավայրը երկար տարիների ընթացքում գերծ է մնալու կտրուկ վերափոխումներից»⁴³:

Այս և նման շատ հատվածներ, այլև ողջ շարադրանքը գոնե խմբագրման կարիք ունի, իսկ այդ դասընթացի բառարաններում (որոնք նույնպես նույն խնդիրն ունեն) մեծ թիվ են կազմում տերմինային գուգաձևությունները. օրինակ՝

abandon - 1. չեղյալ հայտարարել, 2. ոչնչացում, հեռացում

above - 1. վերևում, 2. վերև, 3. ավել, ավելի քան

after - 1. հետո, 2. հետևում, 3. ավելի ուշ, 4. այնուհետև և այլն⁴⁴:

Ներկայացնելով համակարգչային տերմիններին ուղղակի կամ կողմնակիորեն առնչվող վեցից ավելի գրքերից ու բառարաններից քաղված նյութի ուսումնասիրությունը՝ այժմ փորձենք ի մի բերել ունեցածը. ուսումնասիրության համար կուտակել ենք մեծ քանակությամբ նյութ՝ համակարգչային տերմինների բառարաններից, համակարգչային դասընթացներում իբրև հավելվածներ տրվող բառացանկերից, նույն դասընթացների շարադրանքում առկա համապատասխան բառային միավորներից, Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի «Ուղեցոյց Ա»-ից, ինչպես նաև «Լեզվաշխարհ» պարբերականի անդրանիկ համարում մեկ էջով տրված Համակարգչային տերմիններից (տե՛ս գրականության ցանկը): Նշված նյութերի շարքում կան հաջողվածներ և ոչ այնքան նպատակահարմարներ, որոնք,

⁴³ Ջանփոլադյան Բ., Քոմփյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքներ, Ե., 2001, էջ 300:

⁴⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 349:

մասնավորապես, հետևանք են ռուսական մտածողության և ռուսերենի շարադասության. բերենք ևս երկու օրինակ Բ. Ջանփոլադյանի գրքից (մեկ մեջբերում կատարել ենք էջ 83-ում). «Ձեռնարկը տալիս է ժամանակակից *գործարար* փաստաթղթերի պատրաստման կարողություններ»⁴⁵, «Windows 98-ի օբյեկտների *հիերարխիական* համակարգը»⁴⁶, «Գրքի կառուցվածքը տալիս է ինքնուրույն ուսուցման հնարավորություն: Այն ընդգրկում է բազմաթիվ նկարներ, առաջադրանքներ, *վարժեցողական* փաստաթղթեր, որոնք նպաստում են *գործնական կարողությունների ձեռքբերմանը*»⁴⁷ և այլն:

Ուսումնասիրվող տերմինների քննությունը դժվարանում է նրանով, որ դրանք մեկտեղված չեն ո՛չ նույն հեղինակի, ո՛չ էլ հեղինակային խմբերի մեկ կամ մի քանի աշխատություններում. գրքերի հեղինակները տարբեր ոլորտներում բարձրակարգ մասնագետներ ու իրենց գործի նվիրյալներ լինելով՝ լեզվաբաններ չեն (բացառությամբ «Ուղեցոյցից»), իսկ նրանցից ոմանք էլ, թող ներողամիտ լինեն, լեզվագագողությունից զուրկ են: Հեղինակներից յուրաքանչյուրն իր առջև ուրույն նպատակ է դրել: Ռ. Թարույանի «Բառարանի կազմման նպատակը համակարգչային եզրերի *հայերեն* համարժեքների առաջադրումն է: Շեշտում ենք *հայերեն*, քանի որ հաճախ նման բառարանների հեղինակները պարզապես օտար բառի դիմաց դնում են դրա տառադարձումը (երբեմն նման «թարգմանությունները» կազմում են բառարանների ծավալի շուրջ 40 տոկոսը): Բայց սա առնվազն ծիծաղելի է ու

⁴⁵ Ջանփոլադյան Բ., Քոմփյութերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքներ, էջ 3:

⁴⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 4:

⁴⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 5:

նան շոայլություն. ավելի լավ է մեկ-երկու էջի ծավալով շարադրել տառադարձության սկզբունքները, քան ծախսել տարիներ՝ լրացնելու համար նման բառացանկերը, և հետո թղթի տոննաներ՝ դրանք տպագրելու համար, և վերջում առաջարկել գնորդին գիրք, որի մեծ մասը իրեն նախօրոք հայտնի է»⁴⁸: Այս հեղինակը շահեկանորեն առանձնանում է մյուսներից. նա ավելի խորաթափանցորեն է մոտեցել գործին, ձգտել է նորարարության. ըստ էության նրա գրքի հավելված բառարանը թե՛ թարգմանական է, թե՛ բառակազմական և թե՛ բացատրական, օրինակ՝

active 1. **գործուն** (գործելու ունակություն, եռանդ ունեցող),

2. **գործող, ընթացիկ** (տվյալ պահին գործունեության ընթացքում գտնվող)

activate գործունացնել

activation գործունացում⁴⁹

Մյուս գրքի՝ Անգլերեն - Ռուսերեն - Հայերեն բացատրական բառարանի հեղինակների խնդիրը «... առավել հաճախ կիրառվող, ինչպես նաև առավել դժվար թարգմանվող տերմինների ընտրությունն ու դրանց համապատասխան տերմինաբանական բացատրությունների ստեղծումն է»⁵⁰: Այստեղ գերիշխում են տառադարձումները, օրինակ՝

Active hub - **ակտիվ խտարար** + Ուժեղացուցիչ սարք, որն օգտագործվում է կաբելային ցանցում:

adapter - **ադապտեր** + Սարք, որն ապահովում է

⁴⁸ Թարումյան Ռ., Ջրույցներ համակարգչի մասին, Պատմություն, Նկարագրություն, Տեղեկանուներ, էջ 167:

⁴⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 171:

⁵⁰ Ղազարյան Է., Ստեփանյան Ա., Ինֆորմատիկա: Ինտերնետ: Անգլերեն-Ռուսերեն-Հայերեն բացատրական բառարան, էջ 7:

փոխգործողությունը (ինտերֆեյսը) կոմպյուտերի ընդհանուր կապուղու և այլ սարքերի միջև և այլն⁵¹:

Իսկ համակարգչային եզրերի (տերմինների) հայերեն մշակման ու բացատրական տեքստի հայացման հեղինակ Խաչիկ Գրիգորյանը, «ընտրելով անգլերեն լեզվով գոյություն ունեցող լավագույն բառարաններից մեկը, որը մատչելի է ընթերցողների լայն շրջանակի համար և ընդգրկում է բավական թվով եզրեր, անգլերեն նշված բառարանը թարգմանելիս հետապնդել է երկու նպատակ.

ա) ստեղծել այս կարևոր ասպարեզի հնարավորինս հայեցի և միասնական եզրաբանություն,

բ) եզրերի բացատրությամբ օգնել դրանցով արտահայտվող հասկացությունների հնարավորինս ճշգրիտ ընկալմանը»⁵²:

Գովելի է, որ այս հեղինակը չի ձգտել մաքրամոլության ու բացարձակապես բոլոր տերմինների համար ստեղծել հայերեն արմատներով համարժեքներ. նրա բառարանում հայերեն տերմինին հետևում են բացատրությունը, այդ տերմինի խոսքիմասային պատկանելությունը, դրանով կազմված բառակապակցությունները, ինչը ավելի ընկալելի է դարձնում նոր տերմինը. օրինակ՝

adapter or adaptor *n* **հարմարիչ** սարք, որը թույլ է տալիս միացնել երկու կամ ավելի անհամատեղելի սարքեր. **adapter card** **հարմարիչ հարթակ** լրացուցիչ փոխանցիչ հարթակ, որն անհամատեղելի սարքերին թույլ է տալիս հաղորդակցվել. **adapter plug** **հարմարիչ խրոցակ** խրոցակ, որը թույլ է տալիս տարբեր տեսակի խրոցակներ ունեցող սարքերին միանալու

⁵¹ Գրիգորյան Խ., Անգլերեն-Հայերեն համակարգչային եզրերի բառարան, Ե., 2004, էջ 10:

⁵² Տե՛ս նույն տեղը, էջ 5:

միննույն վարդակին. **data adapter unit տվյալների հարմարեցման հանգույց** սարք, որը ԿՄՀ - ն փոխմիացնում է մեկ կամ մի քանի հաղորդակցման անցուղիների և այլն⁵³:

Մեր այս փոքրիկ մեջբերումներից էլ պարզ է դառնում գրքերի հեղինակների՝ հայերենին տիրապետելու աստիճանը, որը, սակայն, մեր ուսումնասիրության գլխավոր խնդիրը չէ: Մեր նպատակն է եղած տերմինների զուգադրումը, սրանցից գերադասելիի առաջարկումը: Այսպես, ստորև կտրվեն մոտ մեկ տասնյակ համակարգչային տերմիններ՝ հետևյալ պայմանական նշանակումներով.

1. abort - • ընդհատում (Ռ.Թ.)

•**ավարտել, ընդհատել** (Ղ.-Ս.) թարգմանված են ռուսերենի *завешить прервать* բառերից

•**1.v ընդհատել, 2. n ընդհատում** (Խ.Գ.)

2. access - • մատչում, մուտք (Ռ.Թ.)

•**մուտքի իրավունք** (օգտվելու հնարավորություն) + Կոմպյուտերային ցանցի ռեսուրսից օգտվելու հնարավորություն (Ղ.- Ս.)

•**1. n մատչում** (to have access to something – **մատչում** ունենալ որևէ բան ստանալու կամ զննելու կամ որևէ բանի հասնելու **իրավունք**), **2. v մատչել** – ստանալ տվյալներ հիշողության սարքից (Խ.Գ.)

• **1. դիմելու հնարավորություն, 2. դիմել** (Բ.Ջ.)

3. active - •1. գոծուն, 2. գործող (տվյալ պահին գործունեության ընթացքում գտնվող) (Ռ.Թ.)

•**ակտիվ** (Ղ.-Ս.), որից սերվում են՝ **ակտիվ փաստաթուղթ, ակտիվ պլատֆորմ, ակտիվ կլիենտ, ակտիվ սերվեր** և այլ կապակցություններ

⁵³ Տե՛ս նույն տեղը, էջ 16:

●a **ակտիվ, գործուն** (Խ.Գ.), իսկ բառակապակցություններում աշխատում է միայն **ակտիվը**՝ **ակտիվ բջիջ, ակտիվ ուղեմուտ, ակտիվ նշոց, ակտիվ հյուսակ, ակտիվ կետացանցով ցուցասարք, ակտիվ պահոց** և այլն

- **ակտիվ** (Բ.Ջ.)
- **գործուն** (Ուղ.)
- **գործուն** (լեզվ.)

4. **server** ● **սպասարկու** (Ռ.Թ)

● 1. **սերվեր** (սպասարկումն իրականացնող) + կոմպյուտեր (կամ ծրագիր), որը կատարում է առանձին կայանների աշխատանքի համաձայնեցման և կոմպյուտերային ցանցերում տվյալների հաղորդման վերահսկման ֆունկցիաները,

2. **սերվեր, հատուկ պրոցեսոր** (Ղ.-Ս.)

●n **սպասարկիչ** (Խ.Գ.) բառակապակցություններ՝ **նշոցային սպասարկիչ, տպման սպասարկիչ, տեղական ցանցի սպասարկիչ** և այլն

- **սերվեր** (Բ.Ջ.)
- **սպասարկիչ** (Ուղ.)
- **սպասարկիչ** (լեզվ.)

5. **interface** ● **միջերես** (Ռ.Թ)

- **ինտերֆեյս** (Ղ.-Ս.)
- **փոխկապակցիչ** (Խ.Գ.)
- **միջերեսակ** (Ուղ.)

6. **archive** ● **պահոց** (Ռ.Թ)

- **արխիվ** (Ղ.-Ս.)
- 1. **արխիվ, 2. արխիվացնել** (Բ.Ջ.)
- **պահոց** (լեզվ.)

7. **application** ● **կիրառական (ծրագիր)** (Ռ.Թ)

- **կիրառում** (Ղ.-Ս.)
- 1. **n դիմում, 2. աշխատածրագիր** (Խ.Գ.) (բոլոր

կապակցությունները **աշխատածրագիր** միավորով են՝ աշխատածրագրի ծնիչ, աշխատածրագրի պատկերակ, աշխատածրագրի վերջնասարք և այլն)

• 1. կիրառում, օգտագործում, 2. հավելված, 3. կիրառական ծրագիր (Բ.Ջ.)

8. folder • (թղթա)պանակ (Ռ.Թ)

• թղթապանակ (Ղ.-Ս.)

• ծրար (Խ.Գ.)

• թղթապանակ (Բ.Ջ.) այս և մյուս թղթապանակները ռուսերենի **папка** բառից են թարգմանված

• պանակ (լեզվ.)

9. insert • ներդնել, մտցնել, ներդրվածք (Ռ.Թ)

• ներդնել (Ղ.-Ս.)

• v մտցնել (Խ.Գ.)

• 1. ընդմիջարկել, 2. ներմուծել (Բ.Ջ.)

• զետեղել (լեզվ.)

10. laptop • ծալովի համակարգիչ (Ռ.Թ)

• լապթոփ (Ղ.-Ս.)

• ծնկադիր համակարգիչ (Խ.Գ.)

11. desktop • սեղան, սեղանի (Ռ.Թ)

• աշխատանքային սեղան, սեղանի (Ղ.-Ս.)

• 1. a սեղանադիր, սեղանային, 2. n սեղան (Խ.Գ.)

• աշխատանքային սեղան (Բ.Ջ.)

• սեղան (լեզվ.)

12. on - line • առ - գիծ (Ռ.Թ)

• ակտիվ, ակտիվ վիճակ (Ղ.-Ս.)

• a, adv ցանցային, առ ցանց (Խ.Գ.)

• 1. երկխոսական, 2. օպերատիվ (ինֆորմացիայի համար), 3. միացված (արտաքին սարքի մասին), 4. ոչ ինքնավար բացել (Բ.Ջ.)

• կցուած (Ուղ.)

• **առցանց** (լեզվ.)

Ինչպես տեսնում ենք, վեց և ավելի աղբյուրներից քաղված նյութը համակարգչային տերմինների լեզվաբանական ուսումնասիրության համար լայն դուռ է բացում: Այս պարագայում խնդիրը հանգում է ոչ միայն մեկ տերմինի դեմ բերված առնվազն հինգի կամ վեցի մեջ ընտրություն կատարելուն (նյութերի հեղինակները մեզ այդ հնարավորությունն ընձեռել են՝ իրենց պրպտուն աշխատանքով առաջարկելով տարբերակներ), այլև տերմինի կառուցվածքային վերլուծության կատարելուն: Եվ եթե որոշ դեպքերում առաջին խնդիրը կարելի է հաջողված համարել, ապա շատ դեպքերում ընտրությունը դժվարությունների է հանգեցնում: Օրինակ, եթե **archive** տերմինի համար **պահոցը** կարելի է ընդունել՝ գոյականի գործառույթով, նույն բառի բայական կիրառման դեպքում, մեր կարծիքով, ճիշտ կլինի **արխիվացնելը** ընդունել, **active** - ի համար ճիշտ են **գործուն**, **գործողը** և սրանց ածանցյալները, իսկ **access** - ի դեպքում դեռ պետք է վարժվել **մատչել**, **մատչում** տերմիններին, իսկ դրանց ածանցյալները լիարժեքորեն ընդունելի են՝ **մատչելի**, **մատչելիություն** և այլն: **Interface** տերմինն ունի չորս համարժեք **միջերես**, **ցուցանակ**, **ինտերֆեյս**, **փոխկապակցիչ**. այստեղ ընտրության հարց է ծագում: Մեր կարծիքով ընդունելի է **փոխկապակցիչը**, դատելով դրա կատարած գործառույթից, այլև բառարանում տրված հիմնավոր բացատրությունից, իսկ խնայողության սկզբունքի կիրառման դեպքում գերադասելի է **միջերեսը**:

Երկրորդի՝ կառուցվածքային վերլուծության համար անհրաժեշտ է կատարել ամբողջ տերմինահամակարգի մանրամասն ուսումնասիրություն՝ միօրինակացման նպատակով, որը երկար տարիների գործ է: Կա, օրինակ, այսպիսի եզրահանգում «... բարեբախտաբար հայերենում կան գործող

սարքի և մարդու անվանման առանձին ածանցներ. - իչ՝ առավելապես՝ սարքերի համար, և - ող՝ համապատասխան մասնագետի համար (խոսքը գրիչ - գրող գույզի մասին է)»⁵⁴, որը ընդհանուր առմամբ ճիշտ է, բայց յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարիք է լինում ընտրություն կատարել: Նախ՝ հայերենում շատ են -իչ - ով գործող անձերը՝ *արարիչ, առարիչ, քարոզիչ, երգիչ, թարգմանիչ, նկարիչ, վարիչ, ոսկերիչ, ուսուցիչ, քննիչ, ցրիչ, սրբագրիչ* և այլն, որոնց մեծ մասը տերմիններ են, ապա առակա են *հսկիչ*՝ անձ և սարք տիպի գույզերը և վերջապես հարց է մնում՝ ինչու՞ *երգիչ*, բայց *նվագակցող* և այլն⁵⁵:

Այսինքն՝ որոշակի հետևությունների կարելի է հանգել միայն ու միայն ամբողջ համակարգը վերլուծելուց հետո:

Այսպիսով, ընդհանուր առմամբ ներկայացնելով համակարգչային տերմինները, այդ համակարգում կատարված աշխատանքներն ու վերջիններիս արդյունքները, մեր նպատակն էր վեր հանել այդ տերմինահամակարգում առկա խնդիրները. դրանք թե՛ իմաստային – ընտրողական են և թե՛ կառուցվածքային - վերլուծական. սրանք են մեր ուսումնասիրության նախնական արդյունքները:

⁵⁴ Ռ. Թարումյան, Զրույցներ համակարգչի մասին, Պատմություն, Նկարագրություն, Տեղեկանուներ 1, էջ 168-169:

⁵⁵ Մենք երկար տարիներ մանրամասնորեն ուսումնասիրել ենք գործող անձ – գործիք կամ՝ գործիք – գործիչ իմաստներն արտահայտող բառակազմական միջոցները, այդ աշխատանքն ավանդադրմամբ լույս է տեսել 2005 թվականին հետևյալ վերնագրով՝ Բառակազմական պատճառաբանվածությունը արդի հայերենում (գործող անձի բառազիտական ուսումնասիրություն):

Համակարգչային տերմինաբանության գուգաձևությունները և դրանց վերացման հիմնադրույթները

Ուսումնասիրելով մի քանի տերմինահամակարգեր (կիրառական տնտեսագիտության, իրավաբանության և համակարգչային) և ի հայտ բերելով դրանց զարգացման հիմնական օրինաչափություններն ու լուծում պահանջող լեզվաբանական խնդիրները՝ որոշեցինք այս մասում անդրադառնալ մեր օրերում ամենաարագ զարգացող տերմինահամակարգերից համակարգչային տերմինների գուգաձևությունների հարցին: Արդեն հանդես ենք եկել մի քանի հոդվածներով ու ներկայացրել ձևավորման գործընթացում գտնվող նշված համակարգը և նշել դրա հետ կապված լեզվաբանական խնդիրները, որոնցից առաջինն ու կարևորագույնը տերմինային գուգաձևությունների առկայությունն է նշված ոլորտում (տե՛ս գրակ. ցանկ, 43, 44, 45):

Անհերքելի է, որ այդ ոլորտին առնչվող տարբեր մասնագետների կողմից հսկայական աշխատանք է կատարվել. ստեղծվել են երկլեզվյան, բազմալեզվյան, բացատրական բառարաններ, դասագրքեր՝ բառացանկերով, ուղեցույցներ, այլ բնույթի ձեռնարկներ, սակայն խնդիրը մնում է չլուծված. բոլոր հեղինակները օտար տերմինների դիմաց երկու և ավելի հայերեն ու հայատառ համարժեքներ են դնում՝ ընտրությունը թողնելով օգտագործողներին: Մինչդեռ այստեղ նախ լեզվաբանական լուրջ և հետևողական ուսումնասիրության անհրաժեշտություն կա, որից հետո իրենց ծանրակշիռ խոսքն ունեն ասելու պատկան մարմինները՝ Լեզվի պետական տեսչությունը, որը չի ստանձնում այդ գործը, իսկ մյուսը՝ Տերմինաբանության բարձրագույն խորհուրդը, այժմ չի

գործում:

Մենք փորձելու ենք ուսումնասիրել այս համակարգում առկա զուգաձևությունների բնույթն ու տեսակները (հենվելով նախորդ համակարգերի ուսումնասիրության արդյունքում արված հետևությունների ու փորձի վրա), եղածներից առանձնացնել մեր տեսակետից նախընտրելին կամ առաջարկել մեր տարբերակը:

Ուսումնասիրության համար հիմք է ծառայել Ռ. Թարումյանի «Զրույցներ համակարգչի մասին» գրքի Հավելվածների մեջ բերված բառարանը, որը կազմվել է շուրջ 14 աղբյուրների հաշվառմամբ⁵⁶: Այստեղ տրվում են անգլերեն տերմինը, դրա ռուսերեն համարժեքը կամ համարժեքները, ապա՝ հայերենը: Հայերենի մասում մի քանի տարբերակների առկայության դեպքում Ռ. Թարումյանն **ընտրում է** դրանցից այն միակը, որը «կաշխատի» բառաբնում. օրինակ՝

control

1. управление, регулирование

2. контроль, 1. կառավարում, կարգավորում 2. **հսկում**
control

управлять, регулировать 2. контролировать

1. կառավարել, կարգավորել 2. **Հսկել**
control

контрольный

հսկիչ

control code

контрольный код

ս. **հսկիչ** կոդ

⁵⁶ Տե՛ս Ռ. Թարումյան, Զրույցներ համակարգչի մասին, Պատմություն, Նկարագրություն, Տեղեկանուներ:

control panel
панель управления
բ. *հսկիչ* վահան
controller
контролер
գ. *հսկիչ*⁵⁷

index

индекс

1. *ցուցիչ*, 2. *ցուցակ*

index

индекс

индексный

ցուցչային

index

индексировать

ցուցչավորել

indexed

индексированный

ցուցչավորված⁵⁸

load

загрузка

բեռ, բեռնվածք

load

загружать

բեռնել

loading

загрузка

⁵⁷ Տե՛ս Ռ. Թարումյան, Զրույցներ համակարգչի մասին, Պատմություն, Նկարագրություն, Տեղեկանուներ, էջ 179:

⁵⁸ Տե՛ս նշվ. աշխ., էջ 190:

բեռնում

loadable

загружаемый

բեռնելի

loader

загрузчик

բեռնիչ⁵⁹

Առաջին օրինակում **կառավարում** - կարգավորում - **հսկում** եռյակից նախընտրելի է **հսկումը**, երկրորդում՝ **ցուցիչ** - **ցուցակ** գույզից՝ **ցուցիչը**, իսկ **բեռ** - **բեռնվածքից**՝ **բեռը** (բեռնել→բեռ):

Այս սկզբունքը բառարանում հետևողականորեն պահպանվում է՝ շատ դեպքերում լուծելով գուգաձևության հարցը, սակայն նկատել ենք մեկ-երկու բացառություններ, որոնք չեն խախտում ընդհանուր օրինաչափությունը. օրինակ՝ **direct**

1. направлять, 2. управлять

1. ուղղ(որդ)ել, 2. կառավարել, տնօրինել
direct

прямой, непосредственный

ուղիղ, ուղղակի, անմիջական

direction

1. направление, 2. управление

1. ուղղություն, ուղղ(որդ)ում , 2. կառավարում, տնօրինում
directly

1. прямо, 2. непосредственно

1. ուղիղ, 2. անմիջականորեն
directory

⁵⁹ Տե՛ս նշվ., աշխ., էջ 190:

каталог, директория

ցուցակ

Ինչպէս տեսնում ենք, բառարնում անգլերեն մէկ տերմինին բազմաթիվ և տարանջատված իմաստներով հայերեն բառեր են համապատասխանում: Նման դեպքերում ընտրությունը հատուկ մոտեցում է պահանջում:

Քննության ենթակա բառարանը (առանց բառարների) 479 տերմին է ներկայացնում, իսկ բառարներով գրեթէ հնգապատկվում է:

Տերմինային զուգաձևություն կամ բազմազանության մյուս աղբյուրը հիմք լեզվի (այս դեպքում հազվադեպ անգլերենի, իսկ հիմնականում միջնորդ լեզվի՝ ռուսերենի) տարբերակայնությունն է: Սակայն մինչ դրա տեսակներին անցնելը նշենք, որ բառարանում ոչ միայն բառային միավորներ են, այլև բառակապակցություններ և բառակազմական ձևույթներ. օրինակ՝

Central processing unit , CPU

Центральное процессорное устройство

կենտրոնական մշակող սարք⁶⁰

read only memory

постоянное запоминающее устройство

միայն կարդալու հիշողություն⁶¹ և ձևույթներ՝

meta-	multi-	re-	sub-	over-	super-
մետա-	мульти-	пере-	под-	пере-	супер-
փոխ(ա)-	բազմ(ա)-	վերա-	ենթա-	գեր(ա) -,	վերնա-
				վր(ա)-	և այլն:

⁶⁰ Տե՛ս նշվ. աշխ., էջ 177:

⁶¹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 197:

Ռ. Թարումյանի կազմած բառարանը եռալեզվյան է, և նրանում քիչ չեն դեպքերը, երբ երեք լեզուներում ունենք լիարժեք համապատասխանություն, այսինքն՝ մեկական տերմիններ յուրաքանչյուր լեզվում. օրինակ՝

blank	browse	buffer	cancel	drag
пробел	просматривать	буфер	отмена	тащить
բացատ	դիտանցել	թափարգել	չեղյալ	քաշել,

սակայն հիմնականում, գերակշռող դեպքերում զուգաձևություններ են: Վերջիններից ամենապարզն այն է, երբ ունենք.

1) անգլերեն տերմինի դիմաց ռուսերենի երկու, բայց հայերենում մեկ տերմին. օրինակ՝

configuration

**1. конфигурация, форма 2. конфигурация, состав
ձևակազմ,**

ինչը բառարանի հեղինակը հիմնավորում է հետևյալ կերպ. «Այս բառը լատինական ծագում ունի և սկզբնապես թարգմանվել է «համաձևություն», «նմանաձևություն»: Մակայն, իմաստի փոփոխման արդյունքում նախաձանցի հաղորդած «մոտիկ» «նույն» երանգը զիջել է «միասնական», «ամբողջական» երանգին, և այժմ բառն ունի «ձևն իր ամբողջության մեջ» իմաստը: Այստեղից էլ շեշտելով առանձին մասերի ներդրումը ընդհանուր ձևի գոյացման մեջ՝ ստանում ենք համակարգչային ասպարեզում ըմբռնվող իմաստը՝ «համակարգի կազմը»: Այսօր «համաձևություն» բառը ընկալվում է միայն որպես «նմանաձևություն»: Ուստի նոր իմաստի համար անհրաժեշտ է նոր համարժեք, որը սակայն, ցանկալի է, որ պարունակեր կապը «ձև»-ի հետ: Կարելի է ըստ կիրառության բաժանել այն առանձին «ձև» և «կազմ» տարբերակների: Մակայն թվում է, որ «ձևակազմ» բառը,

ստեղծված «ձևաչափ»՝ format բառի բանաձևով, արտահայտում է configuration բառի ներկայիս բոլոր նրբերանգները» (18, էջ 179): Այլ օրինակներից են՝

ikon	identity	ignore
иконка	идентичность,	игнорировать,
пиктограмма	тождество	пропускать
պատկերակ	նույնություն	անտեսել

2) Այս դեպքում անգլերենի և ռուսերենի մեկական տերմինների դիմաց հայերենն ունի երկուսը. օրինակ՝

carriage	decimal	filter	fit
каре́та	десятичный	фильтр	прилаживать
կառք(ուկ), սայլակ	1.տասական 2.տասնորդական	մաղ, գտիչ	հարմարեցնել, տեղը դնել:

Նման պարագայում ամեն մի դեպք առանձնահատուկ մոտեցում է պահանջում. առաջին օրինակում նախընտրելի է *կառքը*, երկրորդում պետք է թողնել միայն *տասականը* (երկուական, տասնվեցական հաշվման համակարգերի համաբանությամբ, առավել ևս, որ բառարանում հանդիպող այլ կազմություններում հենց դա է գործածվում՝ **binary code** - երկուական կոդ, **binary file** - երկուական գործ, **binary system** - երկուական համակարգ և այլն⁶²), երրորդում՝ *գտիչը*, իսկ չորրորդում՝ *հարմարեցնելը*:

3) Շատ են նաև այն օրինակները, երբ անգլերենի մեկ տերմինին ռուսերենում և հայերենում երկու և ավելի **համարժեքներ** են համապատասխանում. այստեղ զանազանել ենք երկու ենթախմբեր.

ա) երբ հայերեն համարժեքները իմաստով մոտ կամ հոմանիշ

⁶² Տե՛ս Ռ. Թարումյան, Զրույցներ համակարգչի մասին, Պատմություն, Նկարագրություն, Տեղեկանուներ, էջ 175:

են, և ընտրությունը համեմատաբար դյուրին է, ինչպես՝

1. layout

размещение, расположение

տեղադրություն , դասավորություն (18, էջ190)

2. main

главный, базовый

գլխավոր, հիմնական, մեծ⁶³

3. communication

1. сообщение, 2. общение, 3. средство связи

1. հաղորդակցություն, 2. շփում, 3. կապի միջոց⁶⁴

4. cluster

1. кластер, 2. группа, пакет, пачка, блок

1. փունջ, 2. խումբ, փաթեթ, կապոց, կապան⁶⁵

Այս ենթախմբի օրինակները շատ են, և դրանցում հայերեն տարբերակի ընտրությունն էլ, ինչպես նշեցինք, մեծ դժվարություն չի ներկայացնում. առաջին օրինակում մենք գերադասելի ենք համարել **տեղադրությունը**, երկրորդում՝ **հիմնականը**, երրորդում՝ **կապի միջոցը**, իսկ չորրորդում՝ **կապանը**: Այսպիսի անձնական մոտեցմամբ (անշուշտ հիմնավորված) ընտրություն ենք կատարել մյուս բառերում:

բ) Երբ հայերեն համարժեքները միանգամայն տարբեր իմաստներ են արտահայտում, ինչպես՝

pad

1. клавиатура,

2. подставка

1. ստեղնաշար,

setup

1. установка,

2. настройка

1. (տեղա)կայում,

select

1. выбирать,

2. выделять

1. ընտրել

⁶³ Տե՛ս նշվ. աշխ, էջ 191:

⁶⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 178:

⁶⁵ Տե՛ս նշվ. աշխ., էջ 178:

Նման օրինակները նույնպես մեծ թիվ են կազմում և ընտրություն կատարելիս այստեղ կարևորվում է անգլերեն տերմինի իմաստի ստույգ փոխադրումը (ինչպես նաև մյուս բոլոր դեպքերում):

Առանձնացրել ենք դեպքեր էլ, երբ գուգաձևության աղբյուրը անգլերեն տերմինն է, ավելի ստույգ՝ դրա խոսքիմասային պատկանելությունը. միննույն բառը նույն ձևով անգլերենում կարող է հանդես գալ մի քանի ձևաբանական կարգերով (գոյական, բայ, ածական), ուստի կրկնվել մի քանի անգամ՝ թարգմանվող լեզուներում ունենալով համապատասխան թարգմանություններ, որտեղ էլ դրսևորում են գուգաձևություններ. օրինակ՝

block	dial	direct	index
блок, узел	номера на биратель	1.направлять	индекс
կապան, հանգույց	համարահավաքիչ	2.управлять 1.ուղղորդել, 2.կառավարել, սնօրինել	ցուցիչ, ցուցակ

block	dial	direct	index
1.блокировать, 2. разбивать на блоки	набирать հավաքել	прямой, непосредственный	индексный ցուցչային
1. կապանել, 2. տրոհել կապանների		ուղիղ, ուղղակի, անմիջական	

block	index
блочный	индексировать,
կապանային	ցուցավորել

Մրանցից յուրաքանչյուրը կընդգրկվի վերը զանազան-ված խմբերի մեջ ու կստանա լուծում, իսկ խոսքաշարում (կամ գրավոր տեքստում) դրանց ձևաբանական կարգերը հստակորեն զանազանվում են:

Այսպիսով, ուսումնասիրվող տերմինահամակարգում առկա գուգաձևությունները արդյունք են.

ա) մասամբ անգլերեն տերմինի,

բ) գերակշռող դեպքերում՝ միջնորդ լեզվի՝ ռուսերենի տարբերակայնության, որից բխում է հայերեն տերմինների բազմազանությունը, ինչը կարելի է և պետք է լուծել հետևողական աշխատանքով՝ ամեն անգամ հաստատման առաջարկելով տերմինների մեկ-երկու խումբ:

Մենք վերջին տարիներին զբաղվել ենք համակարգչային տերմինների մանրամասն ուսումնասիրությամբ ու շարունակելու ենք դրանց կառուցվածքային, իմաստաբանական քննությունը՝ մինչև նշված տերմինների ամբողջական, վերջնական, **հաստատված** ցանկն ունենալը:

5. Արդի հայերենի տերմինաբանության զարգացման միտումները

Վերը ներկայացված տերմինահամակարգերի՝ կիրառական տնտեսագիտություն, իրավաբանություն, համակարգչային, ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հայերենը, ունենալով բառակազմական կադապարների ճկուն համակարգ և տերմինաշինության լայն հնարավորություններ, հավատարիմ է դարեր առաջ որդեգրած իր ազգային սկզբունքին. այն է՝ պատճենել, փոխառել օտար տերմինները՝ այդպիսով շարունակաբար հարստացնելով սեփական բառապաշարը. այսօր գրական հայերենն ապահովում է գիտական, տեխնիկական, մշակութային ամենատարբեր ոլորտների զարգացումը:

Հատկապես վերջին երկու-երեք տասնամյակներում, երբ տեղի է ունենում ինֆորմացիոն - տեխնոլոգիական համակարգերի աննախադեպ առաջընթաց, նորաստեղծ ու նորիմաստ հարյուր հազարավոր բառեր են ներթափանցում գրական հայերեն (թե՛ արևմտահայերեն և թե՛ արևելահայերեն): Այդ նորակազմությունների հարցում արևելահայերենը համեմատաբար ազատ է, իսկ արևմտահայերենն անհամեմատ բծախնդիր, ինչն ունի իր հիմնավոր պատճառները. վերջինս առ այսօր իր մտավորականության, գրական մշակների, մամուլի և ուսումնական հաստատություններում գործող անխոնջ անհատների ջանքերի շնորհիվ է կարողանում պահպանել իր ինքնատիպությունը և զերծ մնալ օտարամուտ ազդեցություններից: Ուստի ցանկացած փոխառության դիմաց դնում է բնիկ հայկական համարժեքը: ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտի Արևմտահայերենի բաժնի արտասահմանյան մասնաճյուղի անդամ Նշան

Որբերյանն այս առիթով ունի այն տեսակետը, թե որքան անընդունելի է ծայրահեղ մաքրամոլությունը, նույնքան դատապարտելի է լեզվական անհիմն օտարամոլությունը և միջազգային տարածում ունեցող օտար բառերի հայերեն համաժեքները պետք է միասնական լինեն և՛ արևելահայի, և՛ արևմտահայի համար, սակայն առ այսօր կան օտար բառերի՝ արևելահայերենում դեռ չվավերացված համարժեքներ (*կայորիա* - ջերմուժ, *վիտամին* - կենսասնյութ, *ռեկորդ* - մրցանիշ, *ֆեյսբուք* - դիմատետր, *մեսիջ* - ուղերձ կամ պատգամ, *ռոտացիա* - հերթագայում, *պարադոքս* - հարակարծություն նաև հարըմբոնում և այլն), որոնք միայն և առավելապես սփյուռքում են գործածվում: Այսինքն, արևմտահայերենում օտար տերմիններ սկզբունքորեն չեն օգտագործվում:

Նա ևս կարևորում է, ըստ հնարավորին, տերմինը մեկ բառեզրով արտահայտելը և արդեն վավերացված թարգմանությունների մեջ փոփոխություններ է առաջարկում (շեղագիր թավատառը իրենն է՝ Ս. Տ.):

Գլաուկոմա - ներերակային ճնշում = *ակնաճնշում*,

Տրախոմա - կոպի հատիկաբորբ = *կոպաբորբ*,

Լեյկոմիա - եղջերունու սպիաբիծ = *եղջերաբիծ*:

«Մինչդեռ լեզուն,- գրում է Ռոբեր Տեր Մեգերյանը,- չի կարող խուսափել օտար ազդեցություններից կամ փոխառություններից, այն չի կարող մեկուսանալ, կղզիանալ. ի վերջո, անխառն լեզու գոյություն չունի»⁶⁶:

Ինչպես վկայեց վերջերս (2014 թվականի ապրիլին) Վենետիկից Երևան ժամանած հայտնի հայագետ Լևոն Զեքյանը (ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի Արևմտահայերենի բաժնի աշխատակիցների և ԳԱԱ նախագահության ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ), իտալերենի

⁶⁶ Ռոբեր Տեր Մեգերյան, Ուղեցույց Ա, էջ 4:

նման հզոր լեզուն անգամ ներկայումս իր լեզվակիրների խոսքում ներկայանում է տասից հինգը օտար բառերով (նույնը՝ ֆրանսերենի դեպքում):

Խոսքն այստեղ ծայրահեղությունների մեջ չընկնելն է: Հայտնի է, որ հասկացություն - տերմին հարացույցի հենց առաջին դիտարկման ժամանակ հիմք է ընդունվում մեկ գիտական հասկացությանը մեկ բառ (բառակազմություն) սկզբունքը: Իրականում, ինչպես վերը նշեցինք, գրեթե անհնար է գտնել որևէ տերմինահամակարգ, որ հասած լինի այդ սկզբունքի հարյուր տոկոսանոց արդյունավետ գործադրմանը:

Փոխառությունների և պատճենման միջոցով հասկացությունները մայրենի լեզվում ներկայացնելու եղանակին անդրադառնալիս և, մանավանդ, ծայրահեղությունների մեջ ընկնելու վտանգից խուսափելու նպատակով պետք է նշենք, որ անհրաժեշտ է տարբերել **բուն տերմինային** միավորները (զուտ տերմինները), որոնք որոշակի հասկացությունների լեզվական միավորներ են (*հայց, հակընդդեմ հայց, ներում, համաներում, բռնում, ներբռնում, գերբռնում, շահառու* և այլն) **անվանակարգային** (նումենկլատուրային) բառերից (որևէ տերմինային համակարգում մանր մասերի անվանումները՝ *ֆայլ, կող, չիփ, բիթ* և այլն): Նման տարբերակման դեպքում ավելի կհեշտանա հայերենում լեզվի ներքին միջոցներով, լեզվի նախորդ փուլերից վերցրած բառերի վերաիմաստավորմամբ տերմինային համակարգ ստեղծելը:

Երկրորդ խնդիրը՝ միտումները հստակեցնելու ճանապարհին տերմինային գուգաձևություններից ձերբազատվելու հարցն է: Երբ տերմինները թարգմանաբար են անցնում հայերենին (արևելահայերենի դեպքում՝ անգլերենից ռուսերեն, ռուսերենից հայերեն՝ միջնորդաբար, իսկ արևմտահայերենի դեպքում՝ այսօր արդեն անգլերենից, ֆրանսերենից

ու գերմաներենից հայերեն՝ փոխառության անմիջական ճանապարհով), զուգաձևության աղբյուրը հիմնականում փոխառու լեզուներն են. օրինակ՝

control բառը ռուսերենում ունի հետևյալ երեք համարժեքները՝

1. управление, 2. регулирование

3. контроль, ռուսի և հայերենն էլ մեկ բառի դիմաց երեքն է կառուցում՝

1. կառավարում, 2. կարգավորում, 3. հսկում
control

1. управлять, регулировать 2. контролировать

1. կառավարել, կարգավորել 2. հսկել:

Արևմտահայերենը նման դեպքերում անառարկելորեն բնիկ բառ է ընտրում՝ և այս դեպքում հարցն այն է, թե արդյո՞ք հայերեն հոմանիշը ծածկում է տվյալ տերմինի իմաստային ողջ դաշտը (**Ֆիզիոլոգիա** տերմինը թարգմանելիս արևելահայերենում գերապատվությունը տրվել է «**Ֆիզիոլոգիային**», իսկ արևմտահայերենում՝ «**բնախոսությանը**», որից էլ մենք երբեմն օգտվում ենք, մինչդեռ, մեր կարծիքով, ոչ բոլոր դեպքերում է այն համարժեքորեն փոխարինում (ֆիզիոլոգիային): Նույն շարքում է հանրահայտ «**համակարգիչը**», որը, իր ժամանակին մերժված լինելով անգամ Տերմինաբանական կոմիտեի կողմից և «չծածկելով» կոմպյուտերի հասկացական դաշտը, լայնորեն կիրառվում է երկու գրականներում էլ. ընդ որում, մեզանում լայնորեն գործածվող թարգմանական բառարաններից մեկում⁶⁷ այդ բառի բառակազմական բնում բոլոր կազմությունները **համակարգչով են՝ թվային համակարգիչ, խոշոր համակարգիչ, անհատական համակարգիչ,**

⁶⁷ Գրիգորյան Խ., Անգլերեն – հայերեն համակարգչային եզրերի բառարան, էջ 73 – 75:

միահարթակ համակարգիչ, միաշիփ համակարգիչ և այլն՝ ընդամենը 60 բառային միավորներ, իսկ մյուս բառարանում⁶⁸ միայն կոմպյուտերով՝ *կոմպյուտերային հանցագործություն, կոմպյուտերային գիտություններ* և այլն:

Ներկայում միտում է նկատվում փոխառության՝ արևմտահայերենից արևելահայերեն, ըստ որում՝ մանրամասնորեն ճշգրտված և ոլորտայնացված տարբերակներով. օրինակ, Ն. Որբերյանը **ռեզլամենտ - աշխատակարգ** եզրի համար առաջարկում է՝

1. **վարույթակարգ** (ժողովի),

2. **վարվելակարգ** (դիվանագիտական պահանջվող կարգ) տարբերակումը, որը մեր կարծիքով, խիստ անհրաժեշտ է:

Համենայն դեպս մեր ուսումնասիրած տերմինահամակարգերում այդ միտումը պարզորեն գծագրվում է, և դա սկսում է փոխադարձվել, այսինքն՝ փոխներթափանցվել:

Այդ գործընթացին մեծապես նպաստեցին Արևմտահայ աշխարհաբարի լեզվաբանական խորհրդի կողմից հրատարակված չորս «Ուղեցույցները»⁶⁹, որոնք օրենքի ուժ չունենալով և ոչ էլ պարտադրելու հավակնություններ ունենալով, ընդգրկում են՝

ա) լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող և երկու գրականներում էլ շրջանառության մեջ գտնվող տերմիններ՝ *արտոնել, գերտերություն, գաղտնագերծել, ծածկաբառ, հրամանաշար, ստեղնաշար, սակարկել, սեղմագիր, իրազեկիչ, նպաստառու, վիճահարույց, չարաշահում* և այլն,

բ) նորագույն տերմիններ, կազմված և առաջարկված նշված կոմիտեի կողմից, որոնք արտահայտում են նորահայտ

⁶⁸ Ղազարյան Է. Ա., Ստեփանյան Ա. Ա., Ինֆորմատիկա, Ինտերնետ, Անգլերեն – ռուսերեն – հայերեն բացատրական բառարան, Եր., 2000, էջ 34:

⁶⁹ Ուղեցույց Ա, Բ, Գ, Դ:

անհրաժեշտ գաղափարներ, և որոնք կարող են ընդունվել կամ մերժվել լեզուն կիրառողների կողմից՝ *նմանակ* (analog), *ասեղնատպիչ, հեռապատճեն, միջերեսակ* (interface), *ցուցան, թվանշագրիչ* (scanner), *ընտրանք* և այլն:

Արևմտահայերենով կազմված այս ցանկերը արևելահայերենի բառապաշարի հարստացման առաջին և հիմնական աղբյուրն են, քանի որ՝

ա) նույն լեզվանյութից են կերտված,

բ) լեզվամտածողական միևնույն սկզբունքներով են աշխատում,

գ) բառակազմության «խնայողական» միևնույն հայեցակետերին են հարազատ մնում:

Երբ որևէ նոր հասկացություն արտահայտելու համար արևելահայերեն բառ է անհրաժեշտ լինում, և դա արդեն կա արևմտահայերենում, այլևս չենք դիմում նորակազմություններին, այլ գործածում ենք արևմտահայերեն բառը⁷⁰: Ասվածը հաստատում են *խոսնակ, կարգախոս, սղաճ, ահաբեկիչ, փաթեթ (օրինագծի փաթեթ), ավազանի, համայնք, հանրահավաք, մարդասիրական միջանցք, ազատ ձեռներեց, առանձնագրույց, բացախոս, բռնարարք* և այլն, և այլն՝ հազարավոր բառեր:

Արևմտահայերենը նույնպես սկսել է անհրաժեշտ եզրերը վերցնել արևելահայերենից: Այս միտքը հաստատում է նաև Անդրանիկ վրդ. Կռանեանը. «Մեր (արևմտահայերենի բառարան՝ Մ.Տ.) «Բառգիրքին» մաս կը կազմեն նաև Հայաստանեն ծնունդ առած կարգ մը դիպուկ բառեր, ինչպես՝ *բեռնաթափել, արտահերթ (նիստ), հավատարմատար, փոխշահավետ, մրցունակ, տարադրամ* եւն »⁷¹:

⁷⁰ Ուղեցույց Գ, էջ 64:

⁷¹ Անդրանիկ վրդ. Կռանեան, Բառգիրք հայերեն լեզուի, Պեյրուֆ, 1998, էջ 8:

Լեզվական այսպիսի փոխներթափանցումները դիտվում են որպես լեզվական փոխհարստացում, փոխհամալրում և լեզվակիրների փոխըմբռնում, ուստի և տերմինաբանության զարգացման յուրահատուկ միտում:

Բացի այդ, արևմտահայերենի զարգացման և կանոնարկման գործընթացը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է, որ գործի Արևմտահայերենի եզրաբանական խորհուրդը՝ Հայերենի բարձրագույն խորհրդի կազմում: Այդպիսով կապահովվի մեր երկու գրական լեզուների մերձեցումը բառապաշարի ոլորտում, ինչն իր հերթին տերմինաբանության զարգացման ուղենիշ կդառնա:

6. Արևելահայերենի և արևմտահայերենի տերմինային համակարգերի զուգադիր քննություն

Պատմական զարգացման ընթացքում լեզուն իր բառապաշարը հարստացնում, ամբարում է գիտական, տեխնիկական, մշակութային ամենատարբեր ոլորտների զարգացումն արտացոլող բառերով: Հայերենը, որպես կենդանի լեզու, բացառություն չէ:

Լեզուն իր բառապաշարը համայրում է նաև փոխառություններով. իհարկե, թե՛ փոխառություններ կատարելիս և թե՛ այդպիսիք մերժելիս անհրաժեշտ է խուսափել ծայրահեղություններից: Արևմտահայերենն, օրինակ, ջանում է օտար տերմինները խմբավորել, դասդասել ըստ ոլորտների և լեզվի ներքին միջոցներով, հայերենի բառարմատներով ու ածանցներով արտահայտել փոխառյալ նոր հասկացությունները, փոխարինել դրանցով օտարամուտ բառաշերտը:

Այս ուղղությամբ Մփյուռքում գնահատելի աշխատանք է կատարել Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդը, որը կազմավորման առաջին իսկ օրից իր ամենահիմնական ու բուն նպատակն է համարել միասնականացնել, համակարգել տերմինային համակարգը, ինչպես նաև կերտել ու առաջարկել նոր եզրեր՝ անհրաժեշտ նոր գաղափարներ արտահայտելու համար:⁷²

Խորհուրդն իր հրատարակած չորս «Ուղեցույց»-ների մեջ առաջարկում է բառային ցանկեր՝ հիմնականում տերմիններ, որոնք, հեղինակների հավաստմամբ, ո՛չ օրենքի ուժ ունեն, ո՛չ էլ պարտադիր գործածվելու հավակնություններ: Անգլերենից, ֆրանսերենից և գերմաներենից պատճենված այդ

⁷² Ռոպեր Տեր Մերկերեան, Ուղեցույց Ա, էջ 5:

բառերը իրենցից ներկայացնում են.

ա) լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող և շրջանառող տերմիններ,

բ) դեռևս անկայուն և չկանոնարկված տերմիններ,

գ) նորագույն տերմիններ՝ կազմված և առաջարկված Խորհրդի կողմից, որոնք արտահայտում են նորահայտ գաղափարներ, և որոնք կարող են ընդունվել կամ մերժվել լեզուն կիրառողների կողմից:

Նորաբանությունների հանդեպ ծայրահեղ հոգատարություն, բայց և արտակարգ բծախնդրություն է անհրաժեշտ. հաղորդակցվողների լեզվամտածողության մեջ ամրապնդվելու համար ժամանակ է պահանջվում: Ինչպես նշեցինք, «Ուղեցույց»-ներում բերված շատ բառեր երկու գրականներում էլ գործածական են, ինչպես՝ *արտոնել, նպաստառու, հարահոս, վիճահարույց, չարաշահում, կրիչ, ծածկաբառ, ստեղնաշար, հրամանաշար*⁷³ և այլն, իսկ տերմինների մի մեծ խումբ, որ Էդ. Աղայանի բառարանում վկայված չէ (*նմանակ*) այս բառը արձանագրված է, բայց ոչ որպես տերմին/, *աստեղնատպիչ, հեռապատճեն, թվանշագրիչ, ընտրանք, դյուրաթեք սկավառակ* և այլն), սպասում է կիրառության իր իրավունքին:

Արևմտահայերեն տերմինները, չենք զլանում կրկնել, արևելահայերենի բառապաշարի հարստացման աղբյուրներ են, քանի որ կերտվում են.

ա) նույն լեզվանյութից,

բ) լեզվամտածողության նույն սկզբունքներով,

⁷³ Արևելահայերենում նշված բառերը վկայված են Էդ. Աղայանի Արդի հայերենի բացատրական բառարանում, սակայն դրանիցից երկուսը՝ *կրիչ, ծածկաբառ*, վկայված են ոչ որպես տերմին, իսկ *հրամանաշար*-ը բացակայում է նշված բառարանում:

զ) բառակազմության «խնայողական», միևնույն սկզբունքներով⁷⁴:

Այնպես որ, որևէ նոր հասկացություն արտահայտելու համար արևելահայերենում առկա բացը հաճախ լրացվում է արևմտահայերենի օգնությամբ, եթե այնտեղ արդեն կան անհրաժեշտ միավորները⁷⁵: Ի դեպ, այդպիսիք ԱՆԲԲ -ում կամ վկայված չեն (օրինակ՝ *առանձնագրույց, ազատ ձեռներեց, բոնարարք, հանրահավաք, արտագնա (նստաշրջան), փաթեթ (օրինագծի փաթեթ), սղաճ, մարդասիրական միջանցք, գտաքաշ*), կամ բերվում են արևմտ. նշումով (օրինակ՝ *խոսնակ* (ԱՆԲԲ, էջ 594), *կարգախոս* (ԱՆԲԲ, էջ 703), կամ էլ վկայված են, բայց այլ՝ հնցծ. կամ պատմ. նշումներով և իմաստներով, օրինակ՝ *համայնք* բառի (ԱՆԲԲ, էջ 803) առաջին իմաստն է՝ նախնադարյան կոմունիստական տնտեսակարգին հատուկ՝ մարդկանց հասարակական միավորման ձև, երկրորդ իմաստը (պատմ. նշումով)՝ մեկ քաղաքի կամ գյուղի բնակչությունը՝ որպես հասարակության ինքնավար կազմակերպություն, իսկ երրորդ իմաստը (արևմտ. նշումով)՝ կոմունա: Ակնհայտ է, որ այժմ կիրառական է սույն բառի երկրորդ՝ պատմ. նշումով իմաստը: Կան բառեր էլ՝ *ահաբեկիչ, հարահոս, հարցապնդում, հարցախույզ, բացախոս* և այլն, որոնք, թեև վկայված են վերը նշված բառարանում, սակայն այժմ նոր տերմինային գործառույթով ու իմաստներով են հանդես գալիս:

Այսպիսով, տեղի է ունենում գրական հայերենի երկու դրսևորումների՝ մեկը մյուսով հարստանալու շարունակական գործընթաց: Այս մասին նշում է նաև Անդրանիկ վրդ. Կռանեանը. «մեր (արևմտահայերենի բառարան՝ Ս.Տ.)

⁷⁴ Տե՛ս Ուղեցույց Գ, էջ 63-64:

⁷⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 11:

Բառգիրքին մաս կը կազմեն նաև Հայաստանեն ծնունդ առած կարգ մը դիպուկ բառեր, ինչպէս՝ *բեննաթափել, արտահերթ (նիստ), հավատարմատար, բոնաշորթում, փոխշահավետ, մրցունակ, տարադրամ* են»⁷⁶: Լեզվական այսպիսի փոխներթափանցումները ներկայացնում են լեզվական փոխհարստացման, փոխհամալրման և լեզվակիրների փոխըմբռնման, ուստի և տերմինաբանության զարգացման յուրահատուկ միտում:

Համակարգչային, կիրառական տնտեսագիտության և իրավաբանության տերմինաբանության քննությանը նվիրված այս հատվածում մենք դիտարկել ենք նաև նշված «Ուղեցույց»-ների ընձեռած նյութը:

Քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների հայրենիքը համարվում է Ամերիկայի Միացյալ Նահանգները, ուստի այդ ոլորտին վերաբերող գրեթե բոլոր հասկացություններն արտահայտող տերմինները ստեղծվում են անգլերենով ու «շրջում» աշխարհով մեկ: «Գերմանիայի ու Ռուսաստանի մտավորականները, առանց արժանապատվության, ու որևէ փոփոխության նույն ձևով այդ տերմինները գործածում են իրենց լեզուներում: Իսկ Ֆրանսիան արժանի ջանք է թափում իր մայրենին անաղարտ պահելու և օտար բառերի դեմ նորերը ստեղծելու՝ չձերբազատվելով սակայն լատինական և հունական արմատներից: Մինչդեռ հայերենն այս առումով անզուգական է. ոչ մի օտար լեզվի չի դիմում նոր տերմիններ կերտելու համար»⁷⁷: Այս գիտակցմամբ էլ «Ուղեցույց»-ներում անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն համարժեքների դիմաց, ըստ հարմարության, գուտ հայկական արմատներ են գործածվում, որպեսզի օտար տերմինները դյուրըմբռնելի

⁷⁶ Տե՛ս Անդրանիկ վրդ. Կռանեան, Բառգիրք հայերէն լեզուի, էջ 8:

⁷⁷ Տե՛ս Ուղեցույց, Ա, էջ 29:

դառնան: Ընդ որում, այդ համարժեքները բավականաչափ ճշգրտորեն են արտահայտում օտար տերմինների իմաստները (սա հեղինակների՝ օտար լեզուները գերազանց տիրապետելու, այդ լեզուները մայրենիի չափ զգալու, ընկալելու արդյունք է): Երբեմն օտար տերմինների պատճենումը կատարվում է մի քանի տարբերակներով՝ իմաստային զուգահեռներով՝ հնարավորություն տալով ընտրություն կատարելու (օրինակ՝ անալոգաթվանշանային կերպափոխիչ, համօրինակ (արևել.) - **հանգույն, հանգունական, նմանակ** (արևմտ.)), իսկ երբեմն էլ պատճենումը կատարվում է բառակապակցությամբ (ինչպես՝ բուֆեր, մեկուսաշրջույթ (արևել.) - **միջանկյալ հիշողություն** (արևմտ.)), որը դարձյալ իմաստի լիարժեք արտահայտման ձգտումով է պայմանավորված:

Հեղինակները ցանկալի են համարում, որ հայաստանաբնակ ժողովուրդը առաջարկվող հայերեն տերմինները որդեգրի իր ամենօրյա արտահայտությունների մեջ, և մեր արևելահայերենը նույնպես ճոխանա և առանց աղավաղվելու փոխանցվի հաջորդ սերունդներին⁷⁸:

Անդրանիկ վրդ. Կռանյանն իր բառարանում մի բաժին՝ «Հայկական սեղանին օտար բառեր»⁷⁹ խորագրով, հատկացրել է օտար տերմինների՝ արևմտահայերենում հանձնարարվող համարժեքներին, որոնց մեծ մասը կիրառվում է արևելահայերենում: Այդ օտար բառերը արևմտահայերենին անցել են գերազանցապես թուրքերենից, իսկ արևելահայերենին՝ նաև ռուսերենից, սակայն առաջարկվողները փաստորեն գործածական են երկու գրական լեզուներում, ավելին՝ դրանք վկայված են ԱՀԲԲ - ում. օրինակ՝ անանաս - ի դիմաց հանձ-

⁷⁸ Անդրանիկ վրդ. Կռանյան, էջ 30:

⁷⁹ Տե՛ս նշվ. աշխ., էջ 505:

նանարվող **արքայախնձոր** - ը (ԱՀԲԲ, էջ 148), թեպսի -ի դիմաց **մատուցարան, սկուտեղ** (ԱՀԲԲ, էջ 976), խավիար - ի դիմաց **ձկնկիթ** (ԱՀԲԲ, էջ 569, ընդ որում՝ որպես՝ **նույնն է**), չերեզ - ի դիմաց **աղանդեր** (ԱՀԲԲ, էջ 21), պուլդուր - ի դիմաց **ձավար** (ԱՀԲԲ, էջ 917), սալաթա - ի դիմաց **աղցան** (ԱՀԲԲ, էջ 28) և այլն, իսկ մի մեծ մասն էլ, ըստ Անդրանիկ վրդ. Կռանյանի, հարկ է հանձնարարել օգտագործելու նաև արևելահայերենում:

Բացի այդ, նույն տեղում նա գրում է, որ բառերու ճոխացումէն եւ արդիականացումէն զատ, բազմաթիւ բացատրութիւններ կը վերատեսուին, հոմանիշներ եւ իմաստի նոր առումներ կը աւելցուին բառարանէն ներս, ինչպէս թեզ - **դրոյթ**, թելէքս - **հեռատիպ**, թէքնոլոժի - **գիտարուեստ**, թրանզիթ - **տարանցում**, անցուղի, ինթեռնէթ - **համացանց**, ֆաքս - **հեռապատճէն**, ի-մէյլ - **էլ-մակ**, լոպպի - **ճնշախումբ**, սատարորդ, մանդալ - **կրակարան**, մարքա - **ցուցունիշ**, մոզա-յիք - **խճանկար**, ռեժիմ - **սննդակարգ**, տէֆիսիթ - **պակասուրդ**, տուշ - **ջրցան**, փլաթին - **լուսնուկի**, քոմփլէքս - **1. բարդույթ, 2. համալիր** և այլ բազմաթիվ բառեր, որոնց մի մասը թեև արձանագրված է ԱՀԲԲ - ում, սակայն՝ այլ իմաստ-ներով (օրինակ՝ **կրակարան** բառը «մանդալ» իմաստով չի բերվում. ԱՀԲԲ, էջ 772):

Այս ուսումնասիրության շրջանակներում, քննության առնելով արևմտահայերենի մի շարք (ինչպես երկու գրական լեզուների զուգադրական, այնպես էլ արևմտահայերենի բացատրական) բառարաններ, այդ հարցերն արծարծող գիտական աշխատություններ ու հոդվածներ, եկանք այն եզրակացության, որ երկու գրականների բառապաշարների ընդհանրությունները գնալով աճում են. այդ է վկայում նաև 1938 թվականին լույս տեսած՝ Հ. Գայաեանի (Մխիթար Պոնտացի) «Բառարան - Գանձարան հայերեն լեզուի» բառարանի

և արդեն մեր օրերում լույս տեսած՝ Անդրանիկ վրդ. Կռանեանի «Բառգիրք հայերէն լեզուի» բառարանի, նաև ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի և դրան կից ձևավորված արտասահմանյան խմբի ուժերով ստեղծվող բառարանի տվյալների գուգադրումը:

Դիտարկումները ցույց են տալիս, որ թե՛ Կռանյանի բառարանում, թե՛ «Ուղեցույց»-ներում ընդգրկված են բազմաթիվ միավորներ (ինչպես տերմիններ, այնպես էլ համագործածական բառեր), որոնք առկա են ԱՀԲԲ-ում, սակայն տարբեր են դրանց կիրառությունների հաճախականությունը, իմաստային հետագա զարգացումները: Օրինակ, արևելահայերենում ոչ համագործածական **ազգրնտիր, ակնածել, բանիմաց, ընդերք, ընդվզում, ժուժկալ, ինքնաբավ** և բազմաթիվ այլ բառեր (նաև խիստ գրական ոճական ծանրաբեռնվածությամբ՝ **աղարտել, անեղծ, անքնին, բարեբախտ, դժնդակ, գանցառություն** և այլն) արևմտահայերենի համար սովորական են:

Նման միտում հաճախ նկատվում է նաև տերմինների կիրարկության առումով:

Մտորև բերում ենք արևելահայերենում առկա համակարգչային բառապաշարի այն մասը, որը արևմտահայերենում ունի գուգահեռներ. մեր խնդիրն է պարզել, թե այդ գուգադրության արդյունքում տերմիններից որո՞նք կարելի է հանձնարարելի համարել երկու գրականների համար: Նկատենք, որ այս տերմինահամակարգը նորագույններից է, դեռ չի արմատավորվել մեր իրականության մեջ, թեև օտար տերմինների հայերեն համարժեքները ինֆորմատիկայի դասագրքերում գործածական են ու կիրառելի: Եվ քանի որ համակարգչային տերմինների ծագման՝ փոխառության աղբյուրը անգլերենն է, ուստի «ելման» կետ ենք ընդունել այդ լեզուն, որպեսզի պարզ լինի երկու՝ արևելահայերեն ու արևմտա-

հայերեն պատճենումների ճշգրտությունը: Նկատի ենք ունեցել նաև այն հանգամանքը, որ հաճախ այդ տերմինները ներկայացնող արևելահայերենյան բառարաններում այս կամ այն հասկացության թարգմանությունը բացակայում է, մինչդեռ արևմտահայերենը պարտադրորեն ստեղծել է հայերեն տարբերակը՝ հավատարիմ մնալով որդեգրած իր սկզբունքին (ինչպես կտեսնենք ստորև, հաճախ հայերեն այդ ձևերը գործածական են դառնում նաև արևելահայերենում): Առանձին դեպքերում կմատնանշենք նախընտրելի տարբերակը՝ կիրառվողի-ն զուգընթաց:

Այսպիսով, արևելահայերեն - արևմտահայերեն համակարգչային տերմինահամակարգերի զուգահեռ դիտարկումը կներառի.

ա) օտար տերմինների դիմաց երկու գրականներում առկա հայերեն համարժեքների ներկայացում,

բ) միևնույն հասկացության համար ն՛ արևելահայերենում, ն՛ արևմտահայերենում առկա մեկից ավելի բառերից առավել հաջողված ձևերի ընտրություն,

գ) արևմտահայերեն կամ արևելահայերեն տարբերակներից նախընտրելի ձևերի հանձնարարում:

7. Անգլերեն - արևելահայերեն - արևմտահայերեն տերմինային ցանկեր⁸⁰

1. algorithm - արևելահայերենում ստեղծվել են **ալգորիթմ, մեթոդ, կանոն** համարժեքները, իսկ արևմտահայերենում՝ **հրամանաշար**-ը. կիրառելի են **ալգորիթմ**-ն ու **հրամանաշար**-ը:
2. alphanumeric - արևելահայերենն ունի **այբբենաթվանշանային պայմանանշաններ** բառակապակցությունը, իսկ արևմտահայերենը՝ տառաթվային. հանձնարարելի է արևմտահայերենի ձևը, որն ավելի պարզ է ու հարմար:
3. analog - **անալոգաթվանշանային կերպափոխիչ, համօրինակ** տերմինների դիմաց արևմտահայերենը ստեղծել է **հանգույն, հանգունական, նմանակ** բառերը. արևելահայերենում դեռ կիրառական են **անալոգ**-ն ու **համօրինակ**-ը:
4. automation - **ավտոմատացում** - ինքնագործում. Այս պարագայում դեռ գործածելի է արևելահայերենի **ավտոմատացում** -ը:
5. backslash - **պայմանանշան, հակաթեք գիծ** - **հակաշեղազիծ**⁸¹. անշուշտ, ճիշտ կլինեք ընդունել արևմտահայերեն տարբերակը. այն և՛ անգլերենի ստույգ իմաստն է արտացոլում, և՛ հարմար է կիրառության համար:

⁸⁰ Ցանկի արևելահայերենի մասում բերվում են արևելահայերենում այդ տերմիններն արտացոլող բառարանների տվյալները (տե՛ս գրակ ցանկ, 1, 8-9, 11-12). եթե այդ ձախ մասում միայն մեկ տերմին է բերված, ուրեմն տերմինը միայն մեկ բառարանում է առկա. օրինակ՝ **երկխոսային վահան - զրուցատուփ, ֆաքս - հեռապատճեն**:

⁸¹ Շեղագիր տառերով նշում ենք արևմտահայերեն տարբերակը:

6. backup - **պահուստավորում, պատճենների պահպանում** - *պահեստապատճեն*. թվում է՝ արևմտահայերեն ձևը ավելի իմաստալից է:

7. binary - **երկուական** - *երկեսկ*. մեզանում ընդունված և կիրառելի է երկուականը, քանի որ այդ բառը մաթեմատիկայում վաղուց ընդունված, հաստատված ու տարածում գտած տերմին է:

8. bit (Binary digit) - **բիթ** - *երկնիշ*. գերադասելի է արևմտահայերեն տարբերակը, թեև համընդհանուր տարածում է գտել **բիթը**, նաև **երկուականը**, որպես նաև հաշվման միավոր:

9. bomb - **ռումբ** - *խանգահարում*. տարածված են թե՛ **բումբը**, թե՛ **ռումբ** - **ը**, իսկ արևմտահայերեն տարբերակը՝ *խանգահարում*, դեռ «հասանելի» չէ:

10. buffer (memory) - **բուֆեր, մեկուսաշրջույթ** - *միջանկյալ հիշողություն*. գերադասելի և իմաստի ճիշտ արտացոլումն է արևմտահայերենի թարգմանությունը՝ *միջանկյալ հիշողություն*, ինչն էլ մենք հանձնարարում ենք:

11. bute - **բայթ** - *ությակ*. սա էլ, երկնիշի և երկուականի՝ մաթեմատիկական հաշվման համակարգում ունի՝ **բայթ** և **ութական**՝ հաշվման միավորի կիրառությունը:

12. active - **ակտիվ, գործուն** - գործուն
actives Fenster - **ակտիվ պատուհան** - գործուն պատուհան

activate - **ակտիվացնել** - *գործունել*. վաղուց ի վեր **ակտիվի** փոխարեն գործածական է **գործունը**, բայց այս դեպքում, երբ բառը պիտի «աշխատի» նաև բառաբնում, դեռ կիրառվում է **ակտիվը**. արևմտահայերեն *գործունը* չի կարողանում հաստատվել:

13. ascending - **աճել, աճող** - *բարձրացող*. հնարավոր այս տարբերակներից նախընտրելի է **աճող** - **ը** (թեև *բարձրանալ* արևմտահայերենն ունի նաև աճելու իմաստ. ԱՀԲԲ, էջ 179):

14. background printing - **միջակա տպում (տպում համակարգչից)** - *հետնաշխատ տպագրություն*. ընդունելի է արևելահայերեն **միջակա տպում** թարգմանությունը:
15. bar - **շերտ, կոդ** - *երիզ*. **կոդ**-ը շփոթ կարող է առաջացնել այս դեպքում. իսկ ընդունելի կարող են լինել թե՛ **շերտը**, թե՛ **երիզը** (տե՛ս ստորև՝ **code** անգլերեն տերմինի թարգմանությունը):
16. batch - **խմբաքանակ, փաթեթ** - *մասնորդ*. ավելի հաջող է արևելահայերեն *փաթեթը*:
17. booting - **գործարկել, բեռնում** - *մեկնարկել*. արևմտահայերեն տերմինը՝ *մեկնարկել*, ճշգրիտ է արտացոլում անհրաժեշտ իմաստը:
18. browse (to) - **գննարկել, դիտել, թերթել** - *այքե անցնել*. արևմտահայերենի **այքե անցնել**-ը մեզանում **այքով անցկացնել** տարբերակով է գործածվում, որը հաջողվածն է բերված երեքից (ի դեպ ԱՀԲԲ - ում **այքով անցկացնել**-ը չկա):
19. button bar - **կոճակ, սևեռակ** - *մանրանիշ*. գերադասելի է արևմտահայերենը՝ *մանրանիշ*:
20. cache memory - **հիշապահեստ, հիշողություն** - *նախահիշողություն*. այս երեքից ավելի հաջողված է արևմտահայերենը՝ *նախահիշողություն*:
21. cascade - **կասկադային, բազմաքայլ, բազմամակարդակ** - *խրարհաջորդող*. ընդունված է *կասկադայինը*, իսկ ճիշտ արևմտահայերենը՝ *խրարհաջորդող*, չի գործածվում:
22. chip - **չիփ, մանրասխեմա, միկրոսխեմա** - *մանրածիր*. վերջինս **չիփ**-ի հարմար տարբերակն է:
23. click - **կտտոց, մատնագարկ** - *չխկոց, չխկել*. նշված տերմիններից և ոչ մեկը գործածության համար պիտանի չէ, թեև արևմտահայերեն ձևերը՝ *չխկոց, չխկել*, սփյուռքում անկաշկանդ կիրառվում են:
24. code - **կոդ** - *նշան, կրճատագիր*

կողերի թիվ - *նշանաթիվ*. թեն արևելահայերենում **կողի** ճիշտ թարգմանությունը՝ «պայմանական հապավումների բանալի, պայմանական նշանների համակարգ» (ԱՀԲԲ, էջ 745), համապատասխանում է արևմտահայերեն *նշան, կրճատագիր* տերմիններին, հատկապես *կրճատագրին*, սակայն վերջիններս ամբողջությամբ չեն արտացոլում անգլերեն տերմինի իմաստը, ուստի համընդհանուր գործածության մեջ են **կող-ը** և դրանով կազմված կապակցությունները:

25. command, statement - **հրաման** - *հրահանգ*. երկուսն էլ՝ արևելահայերենն ու արևմտահայերենը, հավասարապես ընդունելի են. այստեղ իր խոսքը կասի ժամանակը:

26. compatible - **համատեղելի** - *ագուցելի*. վերջինս, արևմտահայերենը, արտացոլում է անգլերեն տերմինի իմաստը, ուստի ընդունելի է այն:

27. compilation - **կազմարկում** - *համամեկնություն*.

կազմարկիչ, յուրացուցիչ - *համամեկնիչ*. **համա-** նախածանցն արևմտահայերեն համարժեքի մեջ լիովին արտացոլում է նախատիպ տերմինի իմաստը, նամանավանդ որ հաջողությամբ «աշխատում է» նաև բառակազմական բնում՝ *համամեկնություն, համամեկնիչ*:

28. computer - **համակարգիչ, կոմպյուտեր** - *համակարգիչ*. այս տերմինի և դրա իր գործառույթին անհամապատասխանության մասին շատ է խոսվել, սակայն, ստեղծվելով արևմտահայերենում, այն հաջողությամբ տարածվեց նաև արևելահայերենում (ԱՀԲԲ -ում այն վկայված չէ):

29. computer science - **գիտություն համակարգիչների մասին, կոմպյուտերային գիտություններ, ինֆորմատիկա** - *տեղեկագիտություն, տեղեկաբանություն*. արևմտահայերեն տարբերակներից ամենաճիշտն ու արդիականը *տեղեկագիտությունն* է, սակայն մեզանում հավասարապես կիրառելի է նաև *ինֆորմատիկան*:

30. configuration - **կազմաձև, փոխդասավորություն** - *կազմույթ*. վերջինս՝ արևմտահայերենն, ամենադիպուկն է:
31. conversion - **փոխարկում, սվյալների ձևափոխում ներկայացման մի ձևից մյուսին** - *վերածում*. զուգահեռ արևելահայերեն փոխարկում և արևմտահայերեն *վերածում* տերմիններից այժմ կիրառելի է առաջինը, թեև երկրորդն էլ շատ հաջող տարբերակ է:
32. cursor - **կուրսոր, շարժագիծ** - *նշիչ*. ինչպես փորձն է ցույց տալիս, մենք դեռ հակված ենք պատճենումներին, ուստի **կուրսոր** էլ գործածում ենք, սակայն *նշիչ-ը* ի վերջո դրան կփոխարինի:
33. data - **սվյալներ, սվյալներ** - *տուել*. այստեղ կիրառվում է միայն արևելահայերեն տերմինը՝ **սվյալներ**:
34. database - **տեղեկատուն, տեղեկացանկ** - *տեղեկահիմ(ք)*. արևմտահայերենը անգլերեն տերմինի ճիշտ համարժեքն է, ամբողջովին արտացոլում է այդ տերմինի իմաստը, ուստի պետք է ընդունվի *տեղեկահիմ(ք)* - ը:
35. debug - **կարգաբերում, սխալների ուղղում, վրիպագերծում** - *վրիպակազերծում*. հարմար է արևմտահայերեն *վրիպակազերծում*-ը:
36. default - **լռությամբ ընդունվող, ենթադրյալ, չընտրովի, սեփական, ներքին** - *զանցառում, չգոյություն*. տերմինային այս զուգահեռ ձևերից և ոչ մեկը չի գործածվում, որովհետև հաջող չեն. թերևս արևմտահայերեն *զանցառում* - ը դիտարկվի համեմատաբար ընդունելի ձև:
37. delete key - **հեղացնել, վերացնել** - *ջնջաստեղ*. կան օրինակներ, երբ ընդունելի է միայն արևմտահայերենը. սա այդ դեպքերից է *ջնջաստեղ*:
38. digital command - **թվանշային, թվային** - *թուավարում*. նույնը այս զուգահեռներում է՝ ընդունելի է *թվավարումը*:

39. digitize - **թվանշայնացնել, թվայնացնել** - *թուանշագրել*. այստեղ **թվայնացնել** արևելահայերեն տարբերակն է միակ գործածականը:

40. directory - **գրացուցակ (կատալոգ, դիրեկտորիա), գրացուցակ** - *տոմսացուցակ*. արևմտահայերենի՝ **տոմսա**-ով կազմված տերմինները, թեև բառաբներում հաջող տերմիններ են կերտում, սակայն մեր մտածողությանը խորթ են, չեն ընկալվում. կիրառելի են **դիրեկտորիա** և **գրացուցակ** տերմինները:

41. disk - **սկավառակ, պնակ** - *սկաւառակ*. **սկավառակը** արևելահայ իրականության մեջ այն բազմիմաստ բառերից է (ԱՀԲԲ, էջ 1309), որը սակայն չունի տեխնիկական այս սարքի իմաստը: Արևմտահայերենը անկախաբար ստեղծել է նույն բառը՝ այդպիսով մեկ ընդհանուր տերմինի հանգեցնելով:

42. disk operating system (D. O. S.) - **սկավառակային օպերացիոն համակարգ, պնակային համակարգ** - *սկաւառակի վարիչ*. տերմինային այս համակարգում կան բազմանդամ այսպիսի կազմություններ, որոնք ճիշտ փոխանցումն են անցվերեն համարժեքի. ընդունվում և գործածական է **սկավառակային օպերացիոն համակարգ** արևելահայերեն տարբերակը:

43. desktop publishing (DTP) - **սեղանի հրատարակչական համակարգ, սեղանադիր հրատարակչություն** - *համակարգչային հրատարակչություն*. այս օրինակում ընդունելի համարժեք է արևմտահայերեն տերմինը՝ **համակարգչային հրատարակչություն** :

44. dialog box - **երկխոսային վահան** - *գրուցատուփ*. նախորդ դեպքի նման արևմտահայերեն տերմինը՝ **գրուցատուփ**, լավագույնս արտացոլում է անգլերեն տերմինի իմաստը:

45. display (to) - **դիսփլեյ, ցուցասարք** – *ցուցադրել*. Նախապատվությունը այս օրինակում տրվում է արևելահայերեն տերմինին՝ **ցուցասարք**, թեև այժմ այդ ոլորտում լայնորեն կիրառելի է **դիսփլեյ-ը**:

46. download - **ցանցում հեռավոր կոմպյուտերից տվյալների (ֆայլերի) ընթերցման գործընթաց, ներլցնել** – *հարանցել*. կան այսօրինակ դեպքեր էլ, երբ ոչ արևեահայերեն, ոչ էլ արևմտահայերեն տերմինները հաջող չեն. կամ վեցանդամ բաղադրություններ են, կամ էլ ոչ հարմար թարգմանություններ: Թերևս առաջարկելի է **ներլցնել** արևելահայերեն տարբերակը:

47. dot - matrix printer - **մատրիցային պրինտեր, կետացանցային տպիչ** - *ասեղնատպիչ*. ընդունելի է կարճ՝ արևմտահայերենը՝ **ասեղնատպիչ**:

48. driver (printer) - **կառավարման սխեմա (պրինտերի դրայվեր), տպիչի սարքավարիչ** - *սկաւառակամդակ*. արևմտահայերեն տերմինը ամենահարմարն է **սկավառակամդակ**:

49. edit (to) - **խմբագրել** - *բարեգրել*. արևելահայերեն **խմբագրել** տերմինը հանրության կողմից ընդունված և այս տերմինահամակարգում նորովի ընկալում ստացած (երբ էՀՄ-ի կողմից թարգմանվող տեքստը ենթարկվում է **նախա-** և **հետ-** խմբագրման՝ համարեցման, ճշտման) ու միակ կիրառելին է:

50. e - mail - **էլեկտրոնային փոստ** - *էլեկտրոնային թղթատար(ութիւն)*. գործածական է **էլեկտրոնային փոստ** - ը:

51. escape - **էլք, փրկում, զերծում** *լքում. էլք* - այս շարքում միակ «էլքն» է:

52. errore message - **հաղորդակցություն սխալի մասին վրիպագր**. շատ տեղին ու իմաստի ճիշտ արտացոլումն է արևմտահայերեն **վրիպագր** - ը: Պետք է դրան վարժվել,

ինչպես մեր հանրությունը վարժվեց ազդ - ին (հայտարարության փո-խարեն):

53. fax - **ֆաքս** - *հեռապատճեն*. երկուսն էլ հավասարապես գործածական են, սակայն ի վերջո կհաղթի արևմտահայերենը՝ *հեռապատճեն*:

54. field - **դաշտ** - *դաշտ*. կա երկու գրականների համընկնում:

55. file - **ֆայլ**, **նշոց** - *տոմսածրար*. **ֆայլ** - ը բազմիմաստ է, *տոմսածրարը* անհասկանալի, իսկ **նշոցը**՝ անընդունելի: Կիրառության մեջ է **ֆայլը**՝ իր՝ տարբեր դեպքերում տարբեր իմաստներով:

56. footer - **էջատակ** - *էջատակ*. երկու գրականների լիարժեք համընկնում:

57. floppy disk - **դիսկետ** (**ճկուն սկավառակ**) - *դիրայթեք սկալառակ*. արևմտահայերեն տերմինը ամենահաջողն է՝ *դյուրաթեք սկավառակ*:

58. format - **ձևաչափ** - *մասնաբաժին*. ընդունված է արևելահայերեն **ձևաչափ** տերմինը:

59. hard copy - **թղթային պատճեն** - *թղթօրինակ*. իսկ այս գույգում գերադասելի է *թղթօրինակ* արևմտահայերենը:

60. hard disk - **կոշտ սկավառակ**, **սկավառակասարք**, **վինչեստեր**, **կարծրապնակ** - *կարծր սկալառակ*. վերջինս՝ արևմտահայերենը, ամենարնդունելի տերմինն է, թեև տարածված է **վինչեստեր** ձևը:

61. hard return - **նոր տող**⁸²

⁸² Կան դեպքեր, երբ օտար տերմինի դիմաց համարժեք ունի միայն արևմտահայերենը. օրինակ՝ hard return – **նոր տող**, information processing – *տեղեկավարում*, Protter - **զծիչ**, soft return – **ինքնագործ տողափոխում** և այլն:

62. hard ware - **համակարգչի ապարատային միջոցներ** - *սարքակազմ*. վերջինս՝ արևմտահայերենը, հարմար է գործածության համար:
63. home - **ստեղն, տուն** - *գրուածի գլուխ*. այստեղ ևս արևմտահայերեն տերմինն է հաջողվածը՝ **գրվածի գլուխ**, այսինքն՝ վերադարձ սկզբին:
64. hypertext - **գերտեքստ** - *գերբնագիր*. ընդունելի է հայերեն ճիշտ թարգմանված **գերբնագիր** - ը:
65. header - **վերնագիր, նախափաթեթ** - *էջագլուխ*. ճիշտ են երկուսն էլ՝ և՛ **վերնագիր** - ը և՛ **էջագլուխ**-ը, սակայն **վերնագիր** - ն է գործածվում:
66. icon - **նիշ (պայմանական նշան)** - *պատկերակ*. արևմտահայերենը անգլերենի ճիշտ համարժեքն է, սակայն ինչպես և մի շարք այլ դեպքերում, այստեղ ևս կիրառական է դարձել արևելահայերենը՝ **նիշ**:
67. indent - **տողագլուխ** - *ներքնալուսանք թողուլ*. ցործածական է արևերահայերեն **տողագլուխ** - ը:
68. insert mode - **ներդրման ռեժիմ, մտցնելու աշխատակերպ** - *ներմուծման եղանակ*. գերադասելի է արևմտահայերեն **ներմուծման եղանակ** տերմինը:
69. interactive - **ինտերակտիվ, փոխգործոն** - *միջգործոն*. երկու՝ **ինտերակտիվ** և **միջգործոն** տերմիններից մեզանում տարածված է առաջինը (թեև օտար տերմինի ճիշտ համարժեքը երկրորդն է արևմտահայերենը):
70. information processing - **տեղեկավարում**. երբ օտար տերմինն ունի միայն արևմտահայերեն համարժեք, ընդունելի և հանձնարարելի է հենց այդ:
71. install - **ինստալյացիա, սահմանում (հաստատում, տեղակայում)** - *տեղադրել*. արևելահայերենում և արևմտահայերենում գոյություն ունեցող շուրջ հինգ համարժեքներ ունենալով՝ գործածական է պատճենվածը՝ **ինստալյացիա**.

մենք առաջարկում ենք **տեղակայում-**ը (արևելահ.) կամ **տեղադրել** -ը (արևմտահ.):

72. ինտերֆեյս - **ինտերֆեյս** - *միջերեսակ*. ըստ սովորության՝ դեռ գործածական է օտար տերմինը՝ ունենալով հանդերձ **միջերեսակ** արևմտահայերենը:

73. interpreter - **մեկնաբանիչ** - *մեկնիչ*. հանձնարարելի է **մեկնիչ**-ը:

74. key - **բանալի**, *ստեղն* - *ստեղ*. երեք տարբեր բառարաններում ունենալով նույն՝ **ստեղն** համարժեքը՝ կիրառական է **բանալին**:

75. keyboard - **ստեղնաշար** - *ստեղնաշար*. երկու գրականներում ընդունված միակ տերմինը՝ **ստեղնաշար**:

76. laser printer - **լազերային պրինտեր**, **լազերային տպիչ** - *լազերատպիչ*. վերջինս նաև բառակազմական ճիշտ համարժեքն է:

77. load - **տվյալների բեռնում**, *բեռնվածություն* - *հարանցում*. այստեղ ընդունելի է **տվյալների բեռնում** տերմինը, թեև բառակապակցություն է, բայց իմաստը լիարժեք է փոխանցում:

78. mainframe - **մեծ էՀՄ**, **խոշոր համակարգիչ** - *գլխավոր համակարգիչ*. այս պարագայում խոսքը **գլխավոր**, կամ **մայր**՝ հիմնական համակարգչի մասին է, ուստի պետք է գործածության մեջ մտցնել **գլխավոր համակարգիչ** արևմտահայերեն տերմինը:

79. memory - **հիշողություն**, **հիշող սարք**, **հիշողություն** - *հիշողություն*. բոլոր տարբերակներից նախընտրելի է **հիշողություն** -ը:

80. macro (command) - **մակրոհրաման**, *մակրոկոդ* - *համահրահանգ*. **մակրո-**, **միկրո-**, **մինի-** կազմիչներով բաղադրյալ տերմիններում (ինչպես այս, այնպես էլ մյուս տերմինահամակարգերում) մենք բախվում են անմիօրինակության հետ. մի դեպքում ճիշտ է տերմինը կազմել կիսա-

պատճենմամբ՝ մակրոհրաման, միկրոհամակարգիչ, մինիհամակարգիչ և այլն, մյուս դեպքում, ինչպես արևմտահայերենն է անում, ամբողջական թարգմանությամբ՝ *համահրահանգ, մանրակարգիչ, փոքրակարգիչ*: Իհարկե, մեր իրականության մեջ ընդունելի են առաջին՝ կիսապատճենումներով տերմինները:

81. maximize - **փոված, ընդարձակել, բացել** - *մեծցրնել*. ճիշտ է **ընդարձակել** - ը:

82. menu (bar) - **մենյու, ընտրացանկ** - *ընտրացանկ*. Այստեղ կա երկուսի համար համար ընդհանուր՝ **ընտրացանկ**-ը:

83. minimize - **սեղմված, նվազագույնի հասցնել** - *փոքրացնել*. հանձնարարելին արևմտահայերենն է՝ *փոքրացնել*:

84. microcomputer - **միկրոկոմպյուտեր, մանրահամակարգիչ** - *մանրակարգիչ*. այս և հաջորդ երկու դեպքերում տարածված են կիսապատճենումները, սակայն մենք հակված ենք արևմտահայերեն տարբերակներին:

85. microprocessor - **միկրոպրոցեսոր, մանրամշակիչ** - *մանրավարիչ* (այս և հաջորդ օրինակների մասին խոսվել է տե՛ս 80 - րդ օրինակի մեկնաբանությունը):

86. minicomputer - **մինիկոմպյուտեր, մինիհամակարգիչ** - *փոքրակարգիչ*

87. modem - **մոդեմ** - *եղանակիչ*. վերջին՝ արևմտահայերեն համարժեքը, դեռ գործածության մեջ չի մտել:

88. module - **մոդուլ, հանգույց** - *միաւոր*. որևէ մեկը հաջող չէ, ուստի կիրառվում է օտար **մոդուլ** տերմինը:

89. mother board - **մայրական քարտ, հիմնահարթակ** - *մայր քարտ*. միակ ընդունելին արևմտահայերենի **մայր քարտ** տերմինն է:

90. mouse - **մկնիկ** - *մկնիկ*. այս տերմինն աստիճանաբար դառնում է ժամանակավրեպ:

91. mouse pad - մկնիկի գորգիկ - *մկնակալ*. վերն ասվածը վերաբերում է *մկնակալ* - ին:
92. monitor - մոնիտոր, ցուցասարք – *ցուցանակ, ցուցան*. կիրառելի է *մոնիտորը*, թեև շատ հաջող է դարձյալ արևելահայերեն՝ *ցուցասարք* - ը:
93. network - կոմպյուտերային ցանց – *հաղորդացանց*. շատ ընդունելի և հաջողված է արևմտահայերեն տերմինը՝ *հաղորդացանց*:
94. off - line - ավտոնոմ, ցանցից դուրս, արտացանցային – *անջատված*. արևմտահայերենը ստեղծել է պարզ՝ *անջատված*, նաև հաջորդ օրինակում՝ *կցված* համարժեքները:
95. on – line - ակտիվ վիճակ - *կցուած*
96. overwrite - վերագրանցել, վերագրանցել – *կրկնագրել*. վերա- նախածանցի հետ միշտ խնդիրներ են ստեղծվում՝ *վերա*՝ նորից, թե՛ կրկին. այս պարագայում արևմտահայերենը նման խնդիր չունի՝ մի անգամ ևս՝ *կրկին* ենք գրանցում՝ *կրկնագրել*:
97. option - օպցիա, ընտրանք - *ընտրանք*. պետք է ընդունվի ընդհանուրը՝ *ընտրանք*:
98. password - նշանաբառ, գաղտնաբառ - *ծածկաբառ*. Արդեն կիրառության մեջ է *ծածկաբառ* - ը:
99. path - մուտքի իրավունքի ուղի, ուղի - *ուղի*. պարզ և հարմար՝ *ուղի*:
100. page break - էջի վերջը, էջատման կետ - *էջամոյժ*. նախընտրելի է արևելահայերեն էջի վերջ - ը ձևը:
101. page down - ստեղն PC ստեղնաշարի վրա, էջով դեպի ներքև ստեղն - *յաջորդ էջ*. հանձնարարելի է *հաջորդ էջ* - ը:
102. page setup - էջի պարամետրեր, էջակալում - *էջադրում*. ընդունված է՝ *էջադրում* - ը:

103. page up - ստեղն PC - ի ստեղնաշարի վրա - նախորդ էջ.
 101-րդ օրինակի համաբանությամբ՝ ընդունելի է արևմտահայերեն *նախորդ էջ* - ք:
104. personal computer - անձնական օգտագործման կոմպյուտեր, անհատական համակարգիչ - մանրակարգիչ.
 վերջինս չի գործածվում. կիրառվում են արևելահայերեն բառակապակցությունները:
105. Protter - գծիչ. այստեղ էլ չունենք արևմտահայերեն համարժեք, ուստի գործածվում է եղած միակը:
106. Printer - պրինտեր, տպագրող սարք, տպիչ - տպիչ.
 կիրառական է ընդհանուր *տպիչ* - ք:
107. printout - տպված էջ - տպօրինակ, տպօն. տպված էջ - ք
 օտար տերմինի ճիշտ արտացոլումն է:
108. processor - պրոցեսոր, մշակիչ - համավարիչ. գործածականը *պրոցեսոր* տերմինն է:
109. program(me) - ծրագիր - յայտագիր, ծրագիր. ընդունված տարբերակն է՝ արևելահայերեն *ծրագիր* - ք:
110. programming - ծրագրավորում - յայտագրում, ծրագրում.
 ծրագրում և ծրագրավորում գույզը տարբեր իմաստների կրողներ են, որոնցից «ԷՀՄ համար ծրագրավորել» իմաստը ԱՀԲԲ -ում չկա (տե՛ս էջ 662): Մեզանում գործածական է ճիշտը՝ *ծրագրավորում* - ք:
111. pixel - փիքսել, պատկերման տարր, կետիկ *նկարատարր*.
 շատ հաճող է արևմտահայերենի *նկարատարր* տերմինը, որը սակայն չի գործածվում:
112. preferences - նախապատվություններ - նախընտրանք. սա ևս նախընտրելի է:
113. promt - հրավեր, հուշվածք - հարցաշար. նույնը այս դեպքում՝ արևմտահայերեն տերմինը ճիշտն է:
114. random access memory - հիշողության սարքին դիմելու հնարավորություն, դիպվածային մատչում հիշողության

տեղամասերին - *հարամատոյց յիշողութիւն*. **հիշողության սարքին դիմելու հնարավորություն** բառակապակցությունը ստույգ արտահայտիչն է օտար տերմինի:

115. reboot - **վերաբեռնում, վերագործարկում** - *վերամեկնարկել*. ընդունելի է վերջինս՝ արևմտահայերենը:

116. record - **գրանցում, գրառում** - *տեղեկատու*. **տուս** բաղադրիչով այս արևմտահայերեն տերմինը ևս չի ընկալվում, ուստի գործածական է **գրառում** - ը:

117. retrieve - **որոնում, փնտրում, գտնել, առբերել** - (*վեր*)*ստանալ*. **որոնում**- ն է ընդունելի և հանձնարարելի:

118. right justified - **տողաշտկել աջ** - *աջէն շտկուած*. ճիշտ է *աջէն շտկուած* - ի արևելահայերեն տարբերակը՝ *աջից շտկված*:

119. routine - **ծրագիր, հրամանաշար** - *սովորական ծրագիր*. վերջինս՝ արևմտահայերենը, պետք է գործառության մեջ դնել:

120. run (program) - **միապատիկ անցում** - *բանեցնել*. ոչ մեկը հաջող չէ. արևմտահայերենը չի «աշխատում», չի կիրառվում նաև օտար տերմինը:

121. save (to) - **պահպանել** - *յիշագրել*. նախընտրելի է *հիշագրել* - ը:

122. scanner - **տեսածրիչ, ծրիչ** - *թվանշագրիչ*. բերվածներից ընդունելի է *թվանշագրիչ* - ը, որին պետք է ընտելանալ. իսկ առայժմ գործածում ենք անգլերենը:

123. screen - **էկրան** - *պաստառիկ*. արևելահայերենում դեռ գործածական է էկրան - ը:

124. scroll - **անցավազք, ոլորել** - *սահեցնել*. վերջինս կարելի է հանձնարարել:

125. segment - **մաս** - *հատուած*. այս և նախորդ երկու օրինակներում ընդունելին արևմտահայերենն է:

126. select - **ընտրել** - *լուսաշեշտել*. **ընտրել**- ը այս դեպքում հասկանալի և ընդունելի է:

127. server - սերվեր (սպասարկումն իրականացնող), սպասարկիչ - սպասարկիչ. անշուշտ սերվերը *սպասարկիչն* է, սակայն առայժմ գործածում ենք **սերվերը**:
128. session - սեսնս, աշխատաշրջան - *նիստ*. որևէ մեկն էլ ընդունելի չէ. կիրառում են **աշխատաշրջան** - ը:
129. sign - նշան - *տառանիշ*. ճիշտ է վերջինը՝ արևմտահայերենը:
130. slash - պայմանանշան, գծիկ, նշան - *շեղագիծ*. վերջինս միակ ճիշտ թարգմանությունն է:
131. shareware - պայմանական ձրի (կիսաձրի) ծրագիր - *բաժնեկցուող յայտագրաշար / ծրագրաշար*. ո՛չ արևելահայերենը, ո՛չ էլ արևմտահայերենը հաջողված տերմիններ չեն. ուղղակի օտար բառի գործառույթի թարգմանությունն են:
132. soft return - *ինքնագործ տողափոխում*. ունենք միակ համրժեքը՝ արևմտահայերենը:
133. spread sheet - էլեկտրոնային աղյուսակ, հաշվաթերթ - *ցուցակարգիչ*. որևէ մեկը չի ընդունվում.
134. status bar - վիճակի տող, աշխատավիճակի շերտ - *կացութեան երիզ*. նախորդ օրինակի նման, այս դեպքում էլ որևէ մեկը չի ընդունվում.
135. soft ware - ծրագրային ապահովում, ծրագրակազմ - *յայտագրաշար, ծրագրաշար*. ընդունված է **ծրագրային ապահովում** արևելահայերեն տերմինը:
136. sorting - տեսակավորում, տեսակավորել - *դասաւորում*. արևելահայերեն **տեսակավորում** - ն է կիրառելի:
137. space - տարածություն, բացատ - *միջոց*. բացատ - ը նախընտրելի է:
138. standard - ստանդարտ, չափօրինակ - *հիմնօրինակ*. **հիմնօրինակ** արևմտահայերեն տարբերակն ամենանախընտրելին է:

139. statement - **դրույթ** - *հրահանգ*. հրահանգը, որպես հրամանի հոմանիշ, արդեն մեկ այլ դեպքի համար գործածվել է, ուստի այստեղ պիտի **դրույթ** - ն ընդունվի:
140. subdirectoty - **ենթազրացուցակ** - *ենթատոմսացուցակ*. ընդունելին **ենթազրացուցակ** - ն է:
141. subfile - **ենթանշոց** - *ենթատոմսածրար*. **ենթանշոց** - ը նախընտրելի է:
142. symbol - **պայմանանշան, նշան** - *խորհրդանիշ*. այս դեպքում բոլոր տարբերակներից ամենաճիշտը արևմտահայերենում նշված *խորհրդանիշն* է, որը ԱՀԲԲ -ում նույն իմաստով արձանագրված է (տե ս էջ 605):
143. system - **համակարգ(ային)** - *դրություն, համակարգ*. *համակարգ*-ը ընհանուր է երկու գրականների համար:
144. terminal - **տերմինալ, ներմուծման / արտածման հեռավոր սարք, վերջնասարք** - *ծայրակայան*. վերջինը նախընտրելի է:
145. tab - **աղյուսակավորման ստեղն, սյունատել** - *ցուցակաստեղն*. վերջինը նախընտրելի է:
146. template - **ձևանմուշ, տրաֆարետ** - *կաղապար*. վերջինը՝ արևմտահայերենը, արտացոլում է արևելահայերեն երկու տերմինների իմաստը:
147. tile - **խճանկարային պատկերման տարր, կցաշարել** - *հարակից ցուցադրում*. վերջինը ընդունելի է: :
148. time sharing - **ժամանակի բաժանում, ժամանակային համօգտագործում** - *ժամանակի բաժնեկցում*. արևմտահայերենը՝ *ժամանակի բաժնեկցում*, շատ հաջող տարբերակ է:
149. totally justified - **ամբողջովին շտկուած**. այս դեպքում ևս ունենք արևմտահայերենի միակ ու հաջողված թարգմանություն:
150. undelete - **ետարկել ջնջումը, ետջնջել** - *վերահաստատել*. վերջինն է միակ ճիշտ տարբերակը:

151. undo - գործողության վերացում, արգելում, ետարկել - վերականգնել. այս և հաջորդ չորս դեպքերում հանձնարարելի է արևմտահայերեն տերմինը (քերվում են շեղագրերով):

152. virus - կոմպյուտերային վիրուս - մանրէ:

153. wild card - դերանշան - անորոշ տառանիշ:

154. wordwrap - տեքստի բառերի տեղավորում - տողափոխում:

155. workstation - աշխատանքային կայան, աշխատակայան - աշխատակայան:

Այսպիսով, այս տերմինահամակարգի զուգադիր քննությունից կարելի է եզրակացնել, որ՝

1. տարբեր բառարաններից քաղված՝ արևելահայերեն - արևմտահայերեն զուգահեռ օրինակներում շատ դեպքերում արևմտահայերեն տերմիններն ավելի հաջողված են.

2. մի շարք դեպքերում օտար տերմինի դիմաց միայն արևմտահայերենն ուներ համարժեք.

3. արևելահայերենի ընդունված մի շարք տերմինների դիմաց, մեր խորին համոզմամբ, ապագայում կարելի է գործածել արևմտահայերենի ձևերը:

Հարկ ենք համարում դիտարկել նաև ոչ նորագույն մեկ տերմինային համակարգ՝ իրավաբանականը, և այս պարագայում փոքր - ինչ այլ բնույթ է կրում հետազոտությունը: «Հայաստանի Հանրապետության անկախությունն է ի վերկարդում ենք Ուղեցույց Դ-ի առաջաբանում,- պետականության կայացման գործընթացին բիւր խնդիրներուն կողքին, իրաւական, օրէնսդրական, արդարադատութեան մարզին առնչուող լիակատար բառապաշար ունենալը այսօր դարձած է անհրաժեշտութիւն»⁸³:

⁸³ Տե՛ս Ուղեցույց Դ, էջ 7 – 9:

Իրավաբանական տերմինները արևմտահայերենում հիմնականում ֆրանսիական, նաև անգլիական իրավական համակարգերից են քաղված, ուստի իրավական դաշտին պատկանող ամենաէական ու կարևոր տերմինների մեծ մասը արդեն գոյություն ունի ու գործածական է հայերենում. ֆրանսերեն - հայերեն իրավաբանական բառացանկը բաղկացած է 711 տերմիններից, իսկ անգլերեն - հայերենը՝ 614-ից: Քանակական այս տարբերությունը ֆրանսիական և ամերիկյան - անգլիական իրավական օրենսդրությունների տարբերություններով է բացատրվում:

Արևմտահայ իրականության մեջ գոյություն չունեցող նոր գաղափարները արտահայտված են հիմնականում պատճենման ճանապարհով ձևավորված տերմիններով. օրինակ՝ **carte de séjour** - բնակելու արտոնագիր, **contre accusation** - հակամբաստանութիւն, **guasi - delit** - ակամայ իրաւախախտում, նաև բառակապակցություններով, ինչպես՝ **blanchiment** - հարկախոյս դրամներու յուրացում, **usufruitier** - այլապատկան կալուածէ եկամուտ ունեցող, **avenant** - վճռի յաւելուած և այլն:

Դիտարկելով Ուղեցույցներից քաղված ընդամենը երկու տասնյակ տերմիններ (որոնցից շատերն ունեն հոմանիշներ և այդ գույգերից լավագույնի ընտրության հնարավորություն է ընձեռնվում)՝ գալիս ենք այն եզրահանգման, որ դրանց մեծ մասն ընդգրկված է ԱՀԲԲ - ում՝ մանրամասն բացատրություններով, հաճախ նաև առանց **իրավ.** նշումի. օրինակ, **ջնջում = վերացում, մեղսակից = գործակից, սննդային թոշակ = ալիմենտ** և մյուս գույգերի դեպքում. ստորև բերում ենք իրավաբանական վերը նշված տերմինները՝ ավելի հիմնավոր դարձնելու մեր դիտարկումը.

1. abjuration - **երդմնազանցութիւն**, առանց **իրավ.** նշումի (ԱՀԲԲ, էջ 339)

2. abolition - ջնջում, վերացում
3. accomplice - մեղսակից, գործակից
4. accuse (to) - ամբաստանել, մեղադրել. արևելահայերենում երկուսն էլ կիրառվում են իրավ. նշումով (ԱՀԲԲ, էջ 30)
5. adjudication - վճիռ, որոշում, իրավ. նշումով (ԱՀԲԲ, էջ 1150)
6. advocate - դատապաշտպան, իրավ. նշումով (ԱՀԲԲ, էջ 280)
7. alimony - սննդային թոշակ, ալիմենտ, առանց իրավ. նշումի (ԱՀԲԲ, էջ 10)
8. amnesty - ներում, համաներում, իրավ. նշումով (ԱՀԲԲ, էջ 1069)
9. appeal - վճռաբեկ գանգատ, բողոքարկում, առանց իրավ. նշումի (ԱՀԲԲ, էջ 200)
10. appellant - բողոքարկու, իրավ. նշումով (ԱՀԲԲ, էջ - 200)
11. arrest - ձերբակալութիւն, կալանք, առանց իրավ. նշումի (ԱՀԲԲ, էջ 922)
12. assign - օրինական ժառանգորդ, առանց իրավ. նշումի (ԱՀԲԲ, էջ 477)
13. attorney - փաստաբան, իրաւաբան, առանց իրավ. նշումի (ԱՀԲԲ, էջ 507)
14. bail - երաշխավճար, ԱՀԲԲ-ում չկա
15. bail out (to) - երաշխավճարով ազատել, ԱՀԲԲ-ում չկա
16. bankruptcy - սնանկություն, առանց իրավ. նշումի (ԱՀԲԲ, էջ 1314)
17. beneficiaey - նպաստառու, առանց իրավ. նշումի (ԱՀԲԲ, էջ 1083)
18. brach - բեկում, խափանում, ԱՀԲԲ-ում չկա

19. bring action against (to) - **դատ քանալ, հայց ներկայացնել**

20. cap - **փաստաբանի անեզր գլխարկ, ԱՀԲԲ-ում չկա**

21. case - **հայց, դատ, գործ, իրավ. նշումով (ԱՀԲԲ, էջ 815)**

22. case on appeal - **վճռաբեկ դատ, վճռաբեկման ներկայացրած գործ, առանց իրավ. նշումի (ԱՀԲԲ, էջ 200)**

Բերված բոլոր տերմինները արևմտահայերենում ընդգրկված են իրավաբանական եզրերի ցանկում. դրանք, ի տարբերություն նախորդ տերմինահամակարգի, վկայված են նաև արևելահայերենի իրավաբանական մասնագիտական բառարաններում, քանի որ նորագույններից չեն և անխտիր գոյություն ունեն արևելահայերենում (շատերը նաև ԱՀԲԲ-ում, երբեմն առանց **իրավ. նշումի**, քանի որ այդ բառերի մեծ մասը նաև ընդհանուր գործածական են), իսկ նորամուտ հասկացությունները հաջողությամբ թարգմանվում են:

Անշուշտ, արևմտահայերեն տերմինները, այլև ողջ բառապաշարը, արևելահայերենի շտեմարանն ու գանձն են, որոնց նաև դիմում ենք նոր տերմինների համարժեքներ ստեղծելիս:

Մասնագիտական տերմիններ օգտագործելը պիտի սատարի արևմտահայ և արևելահայ տարբերակների լեզվական փոխազդեցության կարևոր գործընթացին, ինչպես նաև երկու ճյուղերով հաղորդակցվողների փոխհասկացողությանը (հատկապես մասնագիտական ոլորտներում):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1984:
2. Աղայան Էդ., Լեզվաբանության հիմունքներ, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1987:
3. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976:
4. Աղայան Է., Ա., Տերմինագիտություն, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1978:
5. Ասատրյան Մ.Ե., Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Եր.համ.հրատ., Ե., 2002:
6. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Շարխաթունյան Հ., Տեղեկատվական- հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում, Աստղիկ, Ե., 2004:
7. Ավետիսյան Յու., Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական հնչյունաբանություն, Զանգակ - 97, Ե., 2011:
8. Անգլերեն-հայերեն-անգլերեն իրավաբանական տերմինների բացատրական բառարան, “Նորք” ՏՎԿ ՓԲԸ, Ե., 2008:
9. Անդրանիկ վրդ. Կռանեան, Բառգիրք հայերեն լեզուի, Շիրակ հրատարակչատուն, Պեյրուք, 1998:
10. Գալստյան Մ. Ա., Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր.համ.հրատ., Ե., 1978:
11. Գայանեան Հ. (Մխիթար Պոնտացի), Բառարան – Գանձարան հայերեն լեզուի, Գահիրե, Տպագրություն Գալֆա, 1938:
12. Գրիգորյան Խ., Անգլերեն-Հայերեն համակարգչային եզրերի բառարան, երկրորդ հրատարակություն, Անկյունաքար, Ե., 2004:
13. Բայադյան Ա., Հ., Տնտեսագիտական բառարան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., Ե., 2014:
14. Բեդիրյան Պ. Ս., Հայ լեզուն և մեր խոսքը, Սեզամ, Ե., 1999:

15. Ջաքարյան Հ. Լ., Հայերենի հասարակական տարբերակումը Երևանում // Ժամանակակից հայերենի խոսակցական լեզուն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1981:
16. Զեկուցումների ժողովածու, Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողով, 7-9 հոկտեմբերի, 2015թ., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., Ե., 2015:
17. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, «Նաիրի», Ե., 2002:
18. Թարումյան Ռ., Զրույցներ համակարգչի մասին, Պատմություն, Նկարագրություն, Տեղեկատուներ, Զանգակ – 97, Ե., 2003:
19. Իշխանյան Ռ.Ա., Ակնարկ հայերենի տերմինաշինության, Լույս, Ե., 1981:
20. «Լեզվաշխարհ», ժողովածու, պրակ 1, հունվար – փետրվար, ՀՀ ԿԳՆ ԼՀՏ, Ե., 2011:
21. Կատվայան Վ., Աբրահամյան Ա., Բառնասյան Ջ., Խաչատրյան Հ., Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների առնչությունները, «Ասողիկ», Ե., 2016:
22. Հացագործյան Ջ. Ս., Ասլանյան Ս. Ա., Միջազգային տերմինային տարրերի ռուս-հայերեն բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1989:
23. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Ե., 1995:
24. Հայոց լեզվի բարբառային բառարան, հատոր Ա, ՀՀ ԳԱԱ «Գիտություն », Ե., 2001:
25. Հայոց լեզվի հանգաբառարան, ՀՍՍՀ ԳԱ, Ե., 1976:
26. Հիրոշի Ուչիդա, Մեյինգ Ջու, Տարացիսիո Դելլա Սենտա, Համընդհանուր ցանցային լեզու - UNL, ՀՀ ԳԱԱ Գիտություն, Ե., 2007:

27. Ղազարյան Է., Ստեփանյան Ա., Ինֆորմատիկա: Ինտերնետ: Անգլերեն-Ռուսերեն-Հայերեն բացատրական բառարան, Մակմիլան-Արմենիա ՓԲԸ, Ե., 2000:
28. Ղարազոյւյան Թ. Ա., Ակնարկներ ժամանակակից հայերեն խոսակցական լեզվի // ժամանակակից հայերենի խոսակցական լեզուն, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Ե., 1981:
29. Ղամոյան Լ., Մարգարյան Մ., Քարտաշյան Ա., Երևանի խոսակցական լեզուն, Ե., 2014:
30. Մանուկյան Ա., Մարգարյան Ա., Ուռուտյան Ռ., Ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը լեզվաբանության մեջ, «Գ.Ա.Մ.» Գունավոր տպագրատուն ՍՊԸ, Ե., 2004:
31. Միքայելյան Կ. Ռ., Օտարազգի բառերի գործածությունը հայերեն պաշտոնական լեզվում, Թեկնածուական դիսերտացիա, Ե., 2002:
32. Նոր բառեր, Ա պրակ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Ե., 2015:
33. Պետրոսյան Լ. Ա., Արդի ռուս - հայերեն իրավաբանական բառարան, Ե., 1998:
34. Ջահուկյանական ընթերցումներ - 2007, Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ, Ե., «Վան Արյան», 2007:
35. Ջանփոլադյան Բ., Քոմփյուտերային կիրառական տեխնոլոգիաների հիմունքներ, ՎՄՎ-Պրինտ, Ե., 2001:
36. Ռուս – հայերեն իրավաբանական բառարան, կազմող՝ Վ. Ա. Փոթեյան, Ե., «Հայաստան», 1972:
37. Մարգարյան Ա. Ե., Մեր լեզվի բարձրագույն աստյանը, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1987:
38. «Հայություն» հանդես, մարտ թիվ 3, Ե., 1997:
39. Մարգարյան Ա. և Հակոբյան Ռ., Իրավաբանական տերմինների և շրջասույթների ռուս-հայերեն բառարան, ՌՀՀ հրատ., Ե., 2005:

40. Սարգսյան Ա., Արևմտահայերենի բառարան, Եր., Արևիկ, 1991, 319 էջ:
41. Սաքապետոյան Ռ., Արևմտահայերենի դասագիրք, Եր. պետ. համ. հրատ., Ե., 2006:
42. Սաքապետոյան Ռ.Կ., Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Եր. պետ. համ. հրատ., Ե., 2004:
43. Տիոյան Ս., Ինտերֆեյսի հայերեն տարբերակի մասին, «Ջահուկյանական ընթերցումներ - 2007», «Վան Արյան», Ե., 2007, էջ 175:
44. Տիոյան Ս., Համակարգչային առկա բառապաշարը, «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., ԷՊ, 2011, էջ 296:
45. Տիոյան Ս., Համակարգչային տերմինաբանության ձևավորումը հայերենում, Բանբեր, Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, 2(23), «Լինգվա», Ե., 2012, էջ 43-48:
46. Ուղեցույց Ա, Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Մարսել, 1993, 106 էջ :
47. Ուղեցույց Ա, Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Magreille, Aix- en -Provence, 1993:
48. Ուղեցույց Բ, Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Մարսել, 1995, 106 էջ :
49. Ուղեցույց Գ, Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Մարսել, 1998, 87 էջ:
50. Ուղեցույց Դ, Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Մարսել, 2002, 123 էջ:
51. Аврорин В. А., Проблемы изучения функциональной стороны языка // К вопросу о проблеме социолингвистики, Наука, Л., 1975.
52. Бондолетов, В.Д., Социальная лингвистика, Просвещение, М., 1987.
53. Виноградов В.В., Литературный язык // Виноградов В., В.,

Избранные труды / История русского литературного языка, Наука, М., 1978.

54. Городское просторечие / Проблемы изучения, Наука, М., 1984.

55. Жирмунский В. М., Марксизм и социальная лингвистика // Вопросы социальной лингвистики, Наука, Л., 1969.

56. Лернер К. Б., Социальная природа языка и процесс языкового взаимодействия, Тбилиси, Мецниереба, 1989.

57. Мечковская Н. Б., Общее языкознание, Структурная и социальная типология языков, Учебное пособие, М., 2001.

58. Дешериев Ю. Д., Социальная лингвистика, К основам общей теории, Наука, М., 1977.

59. Новое в зарубежной лингвистике, вып. 6, 1972.

60. Общее языкознание // Формы существования, Функции, история языка, Наука, М., 1970.

61. Степанов Ю. С., Основы общего языкознания, 2-ое изд., Просвещение, М., 1975.

62. Филин Ф. П., Истоки и судьбы русского литературного языка, Наука, М., 1981.



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ info@asoghik.am

